

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2(38)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2022

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի

Журнал "Вестник Ереванского университета. Филология" выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"

Three issues of "Journal of Yerevan University. Philology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ **Ավետիսյան Առն** (բ.գ.թ., դոց.),

Ավետիսյան Յուրի (բ.գ.դ., պրոֆ.), **Պասպարյան Սեդա** (բ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ), **Վևորգյան Տատյանա** (բ.գ.դ., Մոսկվա), **Դիլբարյան Նարինե** (բ.գ.թ., դոց.), **Հովակիմյան Արմեն** (պատիվ. խմբագրի տեղակալ, բ.գ.թ.), **Սուրադյան Գայանե** (բ.գ.դ., պրոֆ.), **Ոսկանյան Վարդան** (բ.գ.թ., դոց.), **Պետրոսյան Դավիթ** (բ.գ.դ., պրոֆ.), **Միսյան Տիգրան** (բ.գ.դ., պրոֆ.), **Քալանթարյան Ժենյա** (բ.գ.դ., պրոֆ.)

Редакционная коллегия:

Главный редактор: **Аветисян Левон** (к.фил.н., доц.),

Аветисян Юрий (д.фил.н., проф.), **Восканян Вардан** (к.фил.н., доц.), **Гаспарян Седա** (д. фил.н., проф., член.кор. НАН РА), **Геворкян Татьяна** (д.фил.н., Москва), **Дилбарян Нарине** (к.фил.н., доц.), **Калантарян Женя** (д.фил.н., проф.), **Мурадян Гаяне** (д.фил.н., проф.), **Овакимян Армен** (зам. ответ. редактора, к.фил.н.), **Петросян Давид** (д.фил.н., проф.), **Симян Тигран** (д.фил.н., проф.)

Editorial Board:

Editor-in-chief: **Avetisyan Levon** (PhD in Philology, Associate Professor),

Avetisyan Yuri (Sc. D. in Philology, Professor), **Dilbaryan Narine** (PhD in Philology, Associate Professor), **Gasparyan Seda** (Sc. D. in Philology, Professor, NAS RA Corresponding Member), **Gevorgyan Tatyana** (Sc. D. in Philology, Moscow), **Hovakimyan Armen** (Deputy Managing Editor, PhD in Philology), **Kalantaryan Zhenia** (Sc. D. in Filology, Professor), **Muradyan Gayane** (Sc. D. in Philology, Professor), **Petrosyan David** (Sc. D. in Philology, Professor), **Simyan Tigran** (Sc. D. in Filology, Professor), **Voskanyan Vardan** (PhD in Philology, Associate Professor)

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐԸ ՀԱԿՈՒ ՄՆՁՈՒՐՈՒ
ԵՐԿՈՒ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՑԱՆ

Հոդվածում առաջին անգամ անդրադարձ է կատարվում Հակոբ Մնձուրու երկու պատմվածքներին, որոնք մեր գրականագիտության կողմից երբևէ չեն ներկայացվել ընթերցողներին:

Մնձուրին միշտ կրկնել է, որ իր կենսագրությունը իր գործերն են: Եվ իրոք, նրա բոլոր պատմվածքներում ներկա, մասնակից կամ գործող անձ է ինքը՝ Մնձուրին: Այդ իրողությունը հատկապես տեսանելի է քննարկվող երկու գործերում, որոնցից մեկը վերնագրված է «Բանաստեղծը», իսկ մյուսը՝ «Բանաստեղծը և դրամը»: Առաջինում գրողը ներկայացնում է «դարեր առաջ ապրած» բանաստեղծին, որն իրականում հենց ինքն է, և որի վկայությունն են այն բոլոր վերագրումներն ու պատկերները, որ նա ուղղում է առ այդ «բանաստեղծը», բայց որոնք քաղված են հենց Մնձուրու պատմվածքներից: Երկրորդ պատմվածքում գրողը ներկայացնում է մի «դեպք»՝ բանաստեղծ-մարդու փողոցում հինգ ոսկինոց թղթադրամը գտնելը, որը նա այդպես էլ չի կարողանում ծախսել, քանի որ հոգսերն ու կարիքներն անբավ են, և այդ դրամով ոչ մի խնդիր չէր լուծվելու:

Մնձուրին երկու պատմվածքներում էլ բարձրացնում է մարդկային ազնվության և գեղեցիկի գաղափարներ՝ դրանցով ցույց տալով արվեստագետ և բարոյապես բարձր մարդու իսկական էությունը:

Բանալի բառեր – *Մնձուրի, բանաստեղծ, ինքնակենսագրական, գյուղ, արվեստաբան, հուշ, կենդանագրել, պատմվածք, գուլպա, փողկապ, փուռ, գրել, ժողովուրդ, գաղափար*

Հակոբ Մնձուրու ամենագրավիչ և խոհերի մոդո գործերից մեկը «Բանաստեղծը» պատմվածքն է: Այդ **բանաստեղծը** հենց ինքը՝ Մնձուրին է: Պատմվածքը շարադրված է երրորդ դեմքով, բայց իրականում այն թեմատիկ և գեղագիտական հեղինակային ինքնաբնութագիր-ինքնակենսագրություն է, թեև Մնձուրին գրում է, որ խոսքը «դարեր առաջ» ապրած «բանաստեղծի մը» մասին է: Նույն նախադասության մեջ Մնձուրին նշում է, որ «Արեւելքի մէկ երկրին մէջ» էր ապրում այդ բանաստեղծը՝ ընթերցողին կողմնակիորեն հուշելով հենց իր ապրած աշխարհատեղանքը, որին հաջորդում են շատ ստույգ «տեղեկություններ» և հավաստի փաստեր՝ կապված իր անձի և գրականության հետ՝ բանաստեղծի գործերի «հազուադիւս օրինակներին մէջ ամփոփած ըլլալուն»,

այդ քերթվածները «շատ քիչերին» հայտնի լինելուն և այլն, բայց ահա՝ «չկար մեկը, որ կարդացած չըլլար» նրա արձակը, որոնցով և «կը կախարդէր իր ընթերցողները»: Հանրահայտ է, որ Մնձուրու գրեթէ բոլոր գործերն իր անձնական կյանքի, տեսածի ու ապրածի, իր բառերով ասած՝ «անհամար այլազան» պատմություններն են: Հայտնի է նաև, որ Մնձուրու պատմվածքներում սփռված են գրողի կենսագրական բազում վկայություններ, և հենց սա նկատի ունեւր գրողը, երբ գրում էր. «Իմ կենսագրութիւնս՝ իմ գործերս են»: Մնձուրին վերոնշյալ իր այս գործով տալիս է ևս մեկ կենսագրական փաստ, այն է՝ արձակ գործերից գատ ինքը գրել է նաև բանաստեղծություններ (որոնց մի մասի «փշրանքներին» կարելի է հանդիպել նրա տարբեր պատմվածքներում): Եվ ուրեմն ստացվում է, որ չի բացառվում Մնձուրին սկզբում բանաստեղծություններ է գրել, որոնք մեզ չեն հասել, քանի որ հայտնի է՝ նրա շատ գրություններ այրվել կամ կորել են Սկյուտարի երկու հրդեհների ժամանակ, մյուս կողմից այնպիսի զեղումնային ու քնարական խառնվածք ունեցող մեկը, ինչպիսին Մնձուրին էր, ինչպէ՛ս կարող է բանաստեղծություններ գրած չլինել գոնէ իր համար՝ անընդհատ կուտակվող հույզերից ու մտքերից, իր բառով ասած՝ «պարպուելու» համար:

Դառնանք այն թեմաներին ու պատկերներին, որոնց մասին գրել է պատմվածքի «հերոս» **բանաստեղծն** իր «պատմութիւններում»: Այդ գրությունները, ինչպես գրում է Մնձուրին, վերաբերում էին վաչկատուն ցեղերին, որոնց մեջ ապրել էր ինքը և ճանաչել նրանց «աւագակութիւնները», պատմում էին նրանց զարհուրելի ու դարանակալ «յարձակումներու» մասին (հիշենք այդ թեմայով գրված Մնձուրու «Հուղկահարը» պատմվածքը), ներկայացնում մարդկանց շաբաթներ տևող ճամփորդությունները (հիշենք Մնձուրու «Ըստանպուրը»): Բանաստեղծը «ամենասիրուն բաներ կ'ըսէր բնութեան վրայ, կենդանիներուն վրայ», գրում էր բզեզի մասին, որ «վհատիլ չի գիտեր», մի այլ անգամ պատմում, թէ ինչպես (հիշենք Մնձուրու «Մուտք» գործը) «... օր մը հորթ մը... գիւղին նեղ փողոցէ մը դուրս կուգայ, մանր-մանր կ'առաջանայ, կ'անցնի ցորենի արտէ մը, երկրորդ մը կը մտնէ, անոր մէջէն ալ կ'անցնի, երրորդի մը թումբը կանգ կ'առնէ, ու որպէս թէ մտուրին առջեւը ըլլայ, կը սկսի ուտել կանաչ հասկերը որ կը թաղեն արդէն իր հասակը»: «Հէ յ...» կը պոռայ իր բոլոր ձայնովը անդապահը... «հէ յ... հորթը արտը կ'ուտէ, չէ ք տեսներ»¹: Այստեղ կիսատ թողնելով բանաստեղծի գրածից կատարված մեջբերումը՝ շարունակության համար դիմենք Մնձուրու «Մուտք» գործին, որը ճիշտ և ճիշտ համընկնում է **բանաստեղծի** գրածի հետ. «Հէ յ... կը պոռայ նորէն անդապահը գիւղին տուններուն ուղղութեանը... որո՛ւն է հորթը որ թող տուեր են, հորթը արտը կ'ուտէ» (էջ 23):

¹ **Հ. Մնձուրի**, Մենք, Անթիլիաս, 2018, էջ 268 (այսուհետ այս գրքից մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում):

Նույնը չէ՞, ինքը՝ Մնձուրին չէ՞, մի քանի բառերի տարբերությամբ նույն Բանաստեղծ – Մնձուրին, որ երկու գործում էլ, մեկ որպես թե բանաստեղծը, մեկ էլ որպես ինքը շարունակում է նույն պատկերը կերտել և գրել. «Հորթը որ շատ լաւ կը լսէ, չլսել կը կեղծէ ու կը շարունակէ ուտել: ... հորթը գիտնալով հանդերձ, որ իրեն համար է, մանր-մանր կ'առաջանայ ցորենի հասկերուն մէջէն, ու կը շարունակէ իր ուտելը, հոգը անգամ չընելով, խորհելով որ ինչքան ուտէ՝ շահ է իրեն համար» (էջ 268):

Բանաստեղծը, ուրեմն՝ Մնձուրին, «օր մը կկուռի մը մասին կը խօսէ», «օր մը» «կպատկերէ» «...երկու կիները, դէմի բարակ ճամբէն գուլպայ հիւսելով ու շաղակրատելով այգիները աշխատելու իջնող հարսերին», նապաստակին, որ «երաժիշտ չէ կկուռի պէս», և կարող է «պռռալ». «Ալ հերիք է, իլացանք ամենքս ալ՝ Ի՞նչ կը հասկանաս այդ երգէդ, իմաստ մը ունի՞, դուն կը հանիս, մենք ալ կը հիանա՞նք, կը հանինք, քու կանչածիդ... այո՞» (էջ 268), աղվեսին, «որ նույնպէս արուեստագէտ չէ», կարող է խորհել աշխարհի բաներուն ունայնութեանը, աշխարհի կարգերուն վրայ, ու մտքով կ'որոնէ աւելի արդար, արժանավայել կարգ ու սարք մը գտնելու» (էջ 268): Բանաստեղծն իր ստեղծած «կենդաններնով» արտահայտում ու պատկերում է մտածումներ, զգացումներ, որոնք թէև մարդկային են, բայց վերագրվում են ոչ ասուններին: Այսպէս շարունակ, այսպէս բանաստեղծորեն, որոնց շատ ավելի ծավալուն պատկերումներին մենք հանդիպում ենք Մնձուրու տասնյակ այլ գործերում: Եվ ուշագրավը, որ ինքնաբնութագրական արժեք ունի, ցանկալի ամեն մի իսկական արվեստաբանի ու գրողի համար: Բանաստեղծը «կը խօսէր» «...այնպիսի եղանակով մը որ **ընթերցողները իրենք զիրենք այդ այգիներուն, ձորերուն, լեռներուն մէջ կը կարծէին, գիտէին թէ հիմա ձեռքով պիտի բռնէին, շօշափէին պատմածները**» (էջ 268) (հոդվածում բոլոր ընդգծումները մերն են Ա. Ա.): Այս ամենով հանդերձ՝ «ժողովուրդը որ կը կարդար այս ամենքը, չէր ճանչնար թե ո՞վ էր այդ բանաստեղծը...»: Ու ամենակարևորը, այս անգամ Մնձուրի-մարդուն վերաբերող, որը ինչ-որ չափով լրացնում է նրա դիմանկարի այն բացը, որ մենք ունենք Մնձուրու կենսագրականի առումով. «Ու ոչ ոք գիտեր թէ արեւին մէջ այրած, սեւացած դէմքով, նիհար, կարճահասակ մարդ մըն էր ան, հին, մաշուած զգեստով, որ զաւակներ ուներ, օրավարձով կ'աշխատէր, ու կը բնակէր տնակի մը մէջ, եւ թէ կը գրէր այս բոլորը մատներով որ կարծրացած էին բանուորի աշխատանքէն» (էջ 269):

Մնձուրին բազում գործերում գրում է իր գործունեության, այս կամ այն դեպքին իր ներկայության կամ մասնակցության մասին, բայց ոչ մի տեղ չի նկարագրում իր արտաքինը: Այս իմաստով «Բանաստեղծը» պատմվածքը բացառություն է: Եվ մենք այստեղ է, որ նորից ճանաչում ու մեջբերում ենք «Արեւելքի մէկ երկրին մէջ» ապրող փռապան ու հացավաճառ (ուն 1914-ին թուրքերը հացագործ-զինվոր դարձրին), հարդ, զարի, փռոտ ածուխ ծախող, «դազգյահտար», իսկ կյանքի վերջին

տասնամյակում Ստամբուլի Մր. Հարություն եկեղեցու մոմավաճառ Հակոբ Մնձուրուն՝ ճակատագրից զարկված բանաստեղծ ու արձակագիր հայ մարդուն, որի չորս զավակները՝ Նուրհանը, Մարանիկը, Անահիտը, իննամյա Խաչուն, կինը՝ Ողիտան, իր Նանիկ մայրը, զառամյալ Մելքոն պապը և ոչ միայն նրանք, այլև նրա ամբողջ գյուղի ու գավառի հայ բնակիչները զոհ էին դարձել 1915-ին: Ո՞ւր էին տարել նրանց և ո՞ւր կարող էին տանել Մնձուրու՝ հազիվհազ քայլող 88-ամյա պապին, որ «... մինչև Զուազեղ աղբիւրը չէր կրնար երթալ», գյուղի մյուս ծերերին, երեխաներին, ծոցվոր կանանց: Գյուղից ոչ հեռու հոսող Եփրատի վտակ Ղորուչայ գետի ջրերում նրանց խեղդեցին, թե՞ Մնձուրու պատմվածքներում այնքան հիշատակվող Մեծ քարից կամ Իննսունիննի քարածայռից ցած նետեցին, իսկ գուցե Գողուն ձորի, Քարին ծակի ձորի մի անկյունում կենդանի-կենդանի թաղեցին: Եվ հիմա, ամբողջ մի կյանք հեռացած լինելով նրանցից՝ սկսած 1914-ից մինչև 1978-ը (ծնվել էր 1886-ին), նա՝ փոքրամարմին այդ մարդը, ապրում էր իր կորցրածների մեծ ցավով, նրանց հուշերով ու իր անունից և իր կերտած գրական կերպարի՝ «բանաստեղծի» անունից կենդանագրում նրանց պանթեոնը, որ մի Մինասենց Գրիգոր էր, մի Նուռ մամ, մի տեր Պողոս ու մի Շիրին, մի Նարո ու մի Նշան... նաև մի «խորհող» հորթ, չվհասվող բզեզ, «իր հոգին սիրող» ու «սրտի նեղվածութիւն» զգացող ավանակ կամ նապաստակ, որ խորհել գիտե, կարող է «պռռալ», աղվես, որ «դատողություններ» է անում, սեխեր, որ ձեռքիդ մեջ կողողան, բամբուլիկ ծաղիկներ, որ նման են եկեղեցում վառվող մոմերին և այսպես՝ անթիվ, անհամար: Այլ խոսքով՝ մարմնավորումը և պատկերավորումը այն ամենի, որը «գերազանցումն է բնութեան և իրերի», որտեղ «... մեր ծառերը, խոտերը, մեր լեռները, ծովերը, գետափ մը, ուռիները գետափի մը երկայնքին, մարդ մը, փողոց մը, շուկայ մը **պիտի հեւան կեանքով, գոյներով, լոյսերով**» (էջ 414): Բոլորը գրված բանվորի կարծրացած ձեռքերով:

Այդ «քիչ ճանաչ» և «անսովոր» մարդու կյանքում ուրիշ, այսպես ասած՝ «երկրորդական» մի դեպք էլ է պատահել, որի մասին նա այս անգամ պատմում է «Բանաստեղծը և դրամը» գործում. «Բանաստեղծ մը փողոցէ մը անցած ատեն, օր մը, հանկարծ թղթադրամ մը կնշմարե, հինգ ոսկինոց մը»², - սկսում է Մնձուրին իր պատումը:

Քերթված կամ պատմվածք գրելու, դրանք իրենց ավարտուն ձևին հասցնելու համար այդ բանաստեղծը օրերով ու շաբաթներով չարչարվում է և դրա դիմաց չնչին դրամներ ստանում, մինչդեռ ահա բախտը ժպտացել է նրան՝ միանգամից նրա առջև բերելով «հինգ ոսկինոց» թղթադրամ: Միանգամից «հարստացած» բանաստեղծը ուրախությամբ մտածում է, որ ինքը գիտե, թե ինչ պիտի անի գտած դրամը և անմիջապես որոշում, որ «փառավոր հացկերույթ» պիտի տա ինքն իրեն, սա-

² Հակոբ Մնձուրի, Երկեր, Եր., 1986, էջ 430:

կայն շուտով պարզվում է, որ անլուծելի է բանաստեղծ-մարդու համար «ի՞նչ անել» հարցը, եթե այն վերաբերում է դրամին: Մինչև հիմա որևէ օր իրեն «բացառիկ պատիվ» չտված և այդպես էլ միշտ երազված «տապկված հավեղեն», «ախորժաբերներ», գինի ու անուշեղեն, դամասկոսյան կարկանդակներ չվայելած այս մարդը ահա կանգնած է քաղաքի շքեղ ճաշարաններից մեկի առջև, պատրաստվում է ներս մտնել, և հանկարծ ծագում է վարանումը: Ծայրագույն զրկանքների ու խնայումների մեջ իր ողջ կյանքն անցկացրած բանաստեղծը անիմաստ է գտնում ճոխ ու սննդաբար ճաշելը, անգամ հիմարություն, և վճռում է, որ պարզ ճաշը ավելի ճիշտ է, որ ... հացն ու ջուրն էլ «կբավե»: Չէ՞ որ իսկական իմաստուններն այդքանով են բավարարվել: Բանաստեղծ-մարդը ո՛չ քաղթենի է և ո՛չ էլ վայելքասեր: Նրա բաճկոնը հնացել է, եզերքները մաշվել, կոշիկները նույնպես, իսկ գլխարկն անգործածելի է դարձել և վկան է «մի քանի վարչաձևերի» փոփոխման: Ուրեմն ավելի լավ է հագուստներ գնել գտած գումարով: Բայց հնացած հագուստներից ո՞րը փոխել, որտեղի՞ց այդքան դրամ, երբ նրանցից ամեն մեկն արժե ավելի քան 6-7 ոսկեդրամ:

Բանաստեղծը հեռանում է նաև հնավաճառների տաղավարից: Ձեռքում հայտնված դրամը ծախսելու անորոշությունների մեջ՝ նա վերջնականորեն որոշում է այն հանձնել իր կնոջը. չէ՞ որ ամառ է. կարելի է եղած հագուստներով էլ բավարարվել: Մանավանդ կնոջ համար իսկական անակնկալ կլինի, եթե նրան ասի, թե ինչպես ուզում է, թող այնպես էլ ծախսի: Բանաստեղծը երևակայում է այն ուրախությունը, որ ունենալու է կինը, այն ցնծությունը, որը պարզելու է իր ցնցոտիապատ երեխաներին: Նա երեկոյան բարձր տրամադրությամբ տուն է գնում՝ ուրախացնելու համար ծակ գուլպաներով «վազվզող» երեխաներին, ու երբ գալիս է վայրկյանը անակնկալը մատուցելու. «...կնայի կնոջ մաշած դեմքին... կփոխե միտքը: Կլոռե, կկախե գլուխը և կպահե իր մոտ դրամը»³: Հինգ դրամը տան բազում հոգսերից ո՞ր մեկը պիտի լուծեր, ոչ մեկը, և գումարը մնում է չծախսված:

Իսկապես, իսկական բանաստեղծի ինչի՞ն է պետք դրամը. նրա հարստությունն իր կերտած աշխարհը չէ՞, և գրելը այն գոհողությունների թվում չէ՞, որ ամենօրյա կիսաքաղցն է, գունաթափ հագուստներ կրելը, տան անդամներից՝ հայացքի խուսանավումը. «Ու բանաստեղծը չգիտե, թե գտած հինգ ոսկինոցը ի՞նչ ընէ: Կպահե միշտ իր գրպանը, շաբաթները կանցնին, ու շվարած է, թե որո՞ւ ու ինչի՞ տա»⁴:

Ազնվության մարմնացում բանաստեղծ-մարդու կամ մարդ-բանաստեղծի՝ Հակոբ Մնձուրու ոչ միայն իրական մարդկային նկարագիրը ներկայացնող, այլև նրա՝ որպես գրողի գեղագիտական հավատամքն ու բարոյական բարձր կեցվածքը պարզող վերոհիշյալ երկու

³ Նույն տեղում, էջ 432:

⁴ Նույն տեղում:

գործերն էլ հաստատումն են այն բանի, որ նա հոգով ու մտքով բանաստեղծ էր ծնվել և, ինչպես գրում է «Բանաստեղծը» պատմվածքում, «գիտունները... կանգ կառնեին» նրա գործերում ասված «խորունկ խօսքերուն» վրա, «կը գմայլեին ձեռի, գոյնի, յուզումներու այդքան քնքշութիւններ»-ով: Նրա, որ «Աւետիս» պատմվածքում գրում է. «Նշենին ծաղկած էր: Նուրբ ու անուշ վարդագոյն ծաղիկներով քողքուեր էր, հարս էր եղեր: Ոսկեգոյն մեղու մը կը դառնար եւ կ'եղանակեր շուրջը ու ծաղկած մատաղ նշենին կը դողար արեւին մէջ» (էջ 464): Եվ այդ ամենը միշտ գոյների միջոցով և երգի ձևով. «... կ'երգէր ան զի լ, զի լ ձայնովը... կապոյտ ձորերն ու կապոյտ քարերը խօսեցնող իր ձայնովը...: Աղամորդու կանչուածք չէր ան» (էջ 431):

Տաղանդավոր ու սիրելի այդ մարդը այլ «տարօրինակություններ» էլ է ունեցել: Ինքն է վկայում, որ երբ սովորում էր Կ. Պոլսի Ռոբերտ քոլեջում, զանազանվում էր բոլոր ուսանողներից. իր գավառին բնորոշ հագ ու կապից չէր հրաժարվել գյուղական տրեխներ, որոնք հետո նա փոխարինեց հայ վարպետի կարած կապարե ներբաններով, գոմեշի կաշվից և երկաթե հաստ գամերից կարված այնպիսի կոշիկներով, որոնք առհասարակ չէին կարող մաշվել, և որոնցով, ինչպես երգիծում է. «Գոլեճին մարմարե գետիններուն վրայ ...քառասմբակ ձիաւոր մըն էի որ կանցնէի» (էջ 159-160): Բողե սպիտակ գուլպաները քաշվում էին վառ գոյնի կապոյտ ու լայն, պարկի պես կախ ընկնող տաբատի վրա, իսկ սպիտակ կարճաթև սալթան (վերնաշապիկը) կարված էր հաստ կտավից: Քոլեջի եվրոպացի ուսուցիչները հաճախ էին միջանցքներում զարմանքով կանգ առնում դիտելու երիտասարդ գավառացու հագուկապը:

Ավելի ուշ, երբ 1907-ին այդ երիտասարդը Արմտան վերադարձավ, այս անգամ մի ուրիշ «տարօրինակություն» դրսևորեց: «Քսան տարեկան էի, - գրում է Մնձուրին իր «Տեղեր, ուր ես եղեր եմ» հետմահու հրատարակված գրքում, - երբ նշանեցին զիս, **փողկապով երկիր** գացի: Մինչև 1914 քսանութ տարեկան եղայ, երկիր մնացի, ձմեռները ուսուցչութիւն ըրի, ... արտ ցանեցի, հերկեցի, ... լեռան արտերը գիշերեցի, ... արտ քաղեցի, ... խոտ քաղեցի, ... բերք կրեցի ...: **Միշտ փողկապով** եղայ, Սկիւտար փոշիներու մէջ եղայ... ձեռքերս մինչև աչքերս մուրերու մէջ էի, ... **միշտ փողկապով** էի, ... եկեղեցական եղայ, հիմա ալ նստել եմ, դուրս գրեթե չեմ կրնար ելել, **միշտ փողկապով** եմ, ... գործածած, հին, ուրիշներ ձեռք չեն առներ, ես կը գործածեմ»⁵: «Միշտ փողկապով» այս մարդուն նշանել էին առանց իր գիտության, Կ. Պոլսում գտնված ժամանակ նրան նամակով պարզապես տեղեկացրել էին, որ իրեն նշանել են համազրուդացի Կորչոյենց Ողիտայի հետ, մինչդեռ Մնձուրու մտադրություններում իր համազրուդացի ուրիշ աղջիկներ էին՝ Մանուկանց Մարոն, Բարեկանց Նանոն, Տոդանանց Նանոն, որոնց

⁵ **Յակոբ Մնձուրի**, Տեղեր ուր ես եղեր եմ, Իսթանպուլ, 1984, էջ 120-121:

կյանքի ու ճակատագրի մի շարք պատկերումների մենք հանդիպում ենք գրողի տարբեր պատմվածքներում:

Հակոբ Մնձուրին ապրեց 92 տարի: Դրանք եղան «անձայրածիր եռուզեռի» և մեծ կորուստների երկար շղթա: Գավառում կորցնելով իր բոլոր հարազատներին՝ նա Պոլսում երկրորդ անգամ ամուսնացավ, երկրորդ կինը՝ Արտանուշը, ջարդերից փրկված գավառացիներից էր և «անապատեն եկած էր»: Ընտանիքը վեց հոգուց էր բաղկացած. ինքը միակ աշխատողն էր, «երեքալ» չէր կարելի, օրն ի բուն պիտի տքներ: Ո՛վ պիտի իմանար, որ Եփրատի ձորերի օձաշատ կիրճերում նա բնագրով Գարլայ ու Ջուլա էր կարդացել, Խառիճակի այգիներում՝ Տոլստոյի անգլերեն թարգմանությունները...: Որտեղի՞ց իմանային, որ նա զրուցել է Միսաք Մեծարենցի հետ, բարեկամ եղել Գեղամ Բարսեղյանին (ուս 1915-ին թուրքերը կախեցին Թաքսիմի հրապարակում), մտերիմ եղել Չիֆթե-Մարաֆի, Արտաշես Հարությունյանի, Արամ Անտոնյանի, Ռուբեն Ջարդարյանի և արևմտահայ այլ մտավորականների ու գրողների հետ: Ո՛վ պիտի իմանար, որ, հենց իր խոսքերով ասած, «կեանքով հեռացող, գոյներով ու լոյսերով» փողփողացող այդ գրականության հեղինակը «սեւցած դեմքով, նիհար» այն մարդն է, որ հիմա՝ իր կյանքի վերջին շրջանում, տնից դուրս չի գալիս, քանի որ դավաճանել են ոտքերը, որոնցով նա ժամանակին այնպես հպարտանում էր՝ «իմ սրունքներս իմ հպարտութիւններս են... Եվ աստուածները չհանդուրժեցին, նախանձեցան քալելուս»: Եվ դարձյալ՝ ո՛վ պիտի հավատար, որ Մնձուրին իր գործերի մեծ մասը հենց քայլելով է գրել և ոչ թե տանը՝ սեղանի մոտ. «... ափիս վրայ գրեցի, ծունկիս վրայ գրեցի», քանի որ փուռ հասնելու համար ստիպված էր Պոլսի մի ծայրից մյուսը քայլել և այն էլ՝ գիշերով:

«Գրեցի »: Այո՛, գրեց ու վկայեց, նկարեց ու գեղագրեց, թոչնագրով ու կենդանագրերով զարդարեց այն ամենն ու ամենքին, «... որ գիտէի, ունէի, պէտք էր, որ չմնար իմ մէջս»⁶:

Այնուամենայնիվ, նրան «ճանաչողներ» եղել են, որոնցից մեկի մասին Մնձուրին գրում է հումորով: Փռատանն աշխատելիս, երբ հերթական հացն է տարել բաժանորդ տներից մեկին և գրույցի բռնվել տանտիրոջ աղջկա հետ, աղջկա մայրը հարցրել է, թե ում հետ է խոսում: «Մամա՛, մարդ չէ, հացավաճառն է», - եղել է պատասխանը: Աղջիկը մասամբ ճիշտ էր. իր գրուցակիցը «մարդ» չէր սովորական իմաստով, այլ մարդ՝ ոգու, հոգու, մտքի և գեղեցկի:

АРЦУН АВАГЯН – Авторский автопортрет в двух рассказах Акопа Мндзури. – В статье впервые говорится о двух рассказах Акопа Мндзури, которые еще ни разу не были представлены читателям нашими литературоведами.

Мндзури всегда повторял, что его произведения и есть его биография. И действительно, Мндзури — это человек, присутствующий, участвующий или

⁶ Նույն տեղում, էջ 203:

действующий во всех своих историях. Эта реальность особенно видна в двух обсуждаемых рассказах, один из которых озаглавлен «Поэт», а другой – «Поэт и деньги». В первом писатель представляет поэта, «жившего века назад», который на самом деле является им самим, свидетельством чего являются все атрибуты и образы, которые он направляет тому «поэту», но которые взяты из рассказов Мндзури. Во втором рассказе писатель представляет «случай» поэта, обнаружившего на улице пять золотых монет, которые он в итоге не тратит, потому что с этими деньгами не решится ни одна проблема, принимая во внимание его проблемы и нужды.

В обоих рассказах Мндзури делает акцент на представления о человеческой честности и красоте, показывая тем самым истинную сущность художника, нравственного человека.

Ключевые слова: *Мндзури, поэт, автобиография, село, искусствовед, мемуары, изображать, рассказ, носок, галстук, печь, писать, люди, идея*

ARTSRUN AVAGYAN – *Author’s Self-Portrait in Two Stories Written by Hakob Mndzuri.* – The article refers for the first time to two stories by Hakob Mndzuri, which have not ever been presented to our readers by our literary critics.

Mndzuri has always repeated that his works are right his biography. And indeed, Mndzuri is a person present, participating or acting in all his stories. This reality is especially visible in the two works under discussion, one of which is entitled “The Poet”, and the other – “The Poet and Money”. In the first, the writer introduces the poet “who lived centuries ago”, who is in fact himself, the evidence of which are all the attributions and images that he directs to that “poet”, but which are taken from Mndzuri’s stories. In the second story, the writer presents a “case” of a poet finding five gold coins on the street, which he does not spend finally, because no problem would be solved with that money, taking into consideration his concerns and needs.

In both stories, Mndzuri raises ideas of human honesty and beauty, thus showing the true essence of an artist, a moral person.

Key Words: *Mndzuri, poet, autobiography, village, art critic, memoir, depict, story, sock, tie, oven, to write, people, idea*

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՏԵԻ «ՀՈՒԼՈՒՆՔԱՆԱՂԸ» ԵՎ ՊՈՍՏՄՈՂԵՌՆԻԶՄԸ

ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հնդվածում դիտարկվում են խնդիրներ, որոնք վերաբերում են Հերման Հեսսեի «Հուլունքախաղ» վեպի և պոստմոդեռնիզմի առնչություններին: Անդրադարձ է կատարվում պոստմոդեռնիզմի պատմությանը, արևմտյան գեղագիտական - տեսական մտքի վերջին ամենաազդեցիկ դրսևորմանը, որին յուրահատուկ են նաև պարադոքսները: Դրանցից մեկն այն է, որ թեև արդեն յոթ տասնամյակ գեղագետներն ու փիլիսոփաները խոսում են պոստմոդեռնիզմի մասին, սակայն առ այսօր միասնական կարծիք չկա գրական այդ ուղղության շուրջ:

Առանձնացվում են որոշակի գաղափարներ (քառս, էկլեկտիզմ, սիմուլյակր, բազմամշակութայնություն, խաղ և այլն), որոնք փաստորեն շփման կետեր են Հեսսեի վեպի և պոստմոդեռնի միջև: Միաժամանակ ընդգծվում է այն կարևոր հանգամանքը, որ հրատարակվելով պեստմոդեռնիստական բուն բանավեճերից տասնամյակներ առաջ՝ Հերման Հեսսեի վեպը որոշակիորեն նպաստում է այդ գաղափարների տարածմանը պոստմոդեռնի գեղագետների միջավայրում:

Բանալի բառեր – *մոդեռնիզմ, պոստմոդեռնիզմ, քառս, գրական էկլեկտիզմ, բազմամշակութայնություն, խաղ, դեստրուկցիա, տեքստ*

Ավելի քան հինգ տասնամյակ է, ինչ Արևմուտքի գեղագիտական-փիլիսոփայական միտքը զանգվածաբար խոսում է պոստմոդեռնի՝ իբրև 20-րդ դարավերջի և 21-րդ դարի քաղաքական, սոցիալական, գիտական և գեղարվեստական մշակույթի գերիշխող ուղղության մասին, ստեղծվել և շարունակում են ստեղծվել գիտական և գեղարվեստական տեքստեր, մեկնաբանություններ, գումարվում են գիտաժողովներ, գրվում են գիտական թեզեր, սակայն կա մի պարադոքս. այդ ամենով հանդերձ՝ առ այսօր դեռևս հստակություն չկա եզրույթի և պոստմոդեռնի պատկերացումներում: Հանրագիտարանների և առանձին գրականագետների տարատեսակ բնորոշումները, միմյանց կրկնելով, հաճախ նաև հակադրվելով, ստեղծում են պոստմոդեռնի չափազանց բազմաշերտ ու հակասական պատկերը՝ փիլիսոփայական, իմացաբանական, գիտատեսական և զգայագեղագիտական պատկերացումների համակարգից, գեղագիտական բազմակարծությունից, առանձնահատուկ գրականագիտական մեթոդաբանությունից մինչև հոգևոր կացություն, ժամանակի ոգի և նմանատիպ այլ հասկացություններ: Ումբերտո Էկո-

յի բնութագրմամբ՝ «...պոստմոդեռնիզմը ժամանակագրական որոշակի շրջանակներով պարփակված հոսանք չէ, այլ հոգևոր հասկացություն կամ, ավելի ճշգրիտ, Kunstwollen¹, գործելակերպ»²: Էկոն, որը, անկասկած, պոստմոդեռնի ամենահեղինակավոր տեսաբաններից մեկն է, կարծում է, որ ամեն անգամ մոդեռնիզմի դարաշրջանին անհրաժեշտաբար հաջորդում է պոստմոդեռնը, և այս տրամաբանությամբ նա պոստմոդեռնիստներ է համարում Ռաբլեին, Ստերնին: Ֆրանսուա Լիոտարը խոսում է «պոստմոդեռնիստական իրադրության» մասին: Նման կարծիքների թվարկումը կարելի է շարունակել: Դրանք իհարկե հաստատում են, որ մոդեռնիզմի նման պոստմոդեռնիզմը ևս ավելին է, քան սովորական գրական ուղղությունը: Ճիշտ կլինի այն բնորոշել իբրև գեղագիտական կացություն, որը կանխորոշում է գրողի և արվեստագետի գիտակցությունը: Հատկանշական է, որ գեղագիտական-տեսական մտքին առավելապես հաջողվում է տալ դրա պատմական, բայց ոչ տեսական ամբողջական դիմանկարը: Ի դեպ, գրական այս ուղղության պատմությունը հարուստ է և այլ պարադոքսներով: Օրինակ՝ պարադոքսային է պոստմոդեռնի հանդես գալը: Բանն այն է, որ գրական ուղղությունները սովորաբար անուն են ստանում իրենց կայանալուց բավականին ուշ, մինչդեռ «պոստմոդեռնիզմ» անվանումը հայտնվեց ավելի վաղ, քան այն ներկայացնող գրական տեքստերը: Ինչպես հայտնի է, դա կապված էր Ռոբերտ Պանվիցի 1917-ին հրատարակված «Եվրոպական մշակույթի ճգնաժամը» աշխատության հետ, երբ հրապարակում պոստմոդեռնիստական ոչինչ չկար: Պարադոքսալ, հակասական գծեր կան մոդեռնիզմ-պոստմոդեռնիզմ առնչություններում: Թեև պոստմոդեռնիզմի ձևավորումը որոշ չափով կապվում է մոդեռնիզմին բնորոշ ճգնաժամը հաղթահարելու հետ, բայց դրանք ոչ միայն չեն հաղթահարվում, այլև խորանում են ծայրաստիճան: Այդուհանդերձ, գրական այս ուղղությունների գեղագիտական դիմագիծը ամենից լավ երևում է այն ժամանակ, երբ համադրվում են դրանց գաղափարական հարացույցները: Օրինակ՝ եթե մոդեռնիզմի համար կարևոր են **խորհրդանիշը, ձևը, ամբողջականությունը, նպատակը, ժանրը, վարպետությունը, մետաֆորը** և **ընտրությունը**, ապա պոստմոդեռնիզմը հիմնավորապես փոխում է ամեն ինչ՝ դրանց դիմաց համապատասխանաբար կարևորելով **անմտությունը, հակաձևը, կազմաքանդումը, խաղը, տեքստը, հոգնածությունը, մետոնիմիան, համակցումը**: Ի դեպ, ժամանակակից գրականագիտությունը բավական լայնորեն սկսում է խոսել ոչ միայն մոդեռնիզմի, այլև գրական մյուս ուղղությունների՝ ռոմանտիզմի, հատկապես բարոկկոյի հետ պոստմոդեռնի կապերի մասին: Պարադոքսի դրսևորումներ կան նաև գերմանախոս երկրներում պոստմոդեռնիզմի ձևավորման և զարգացման մեջ: Այն դեպքում, երբ Գերմա-

¹ «Կամք առ արվեստ» (գերմ.):

² Ու. Էկո, Գրառումներ «Վարդի անվան» էջերին, Եր., 2014, էջ 113:

նիայում գրական այս ուղղությունը ընդհանրապես աչքի չի ընկնում նշանակալից հաջողություններով, ապա Ավստրիայում և Շվեյցարիայում կան պոստմոդեռնի հսկաներ՝ ի դեմս Պետեր Հանդկեի և Մաքս Ֆրիշի: Թեև կարծիք է հայտնվել, թե պոստմոդեռնը հայրենիք չունի, այդուհանդերձ իբրև դրա ծագման աշխարհագրական միջավայր մատնանշվում է իսպանաամերիկյան երկրները:

Ինչպես հայտնի է, գրականության պատմությունը պոստմոդեռնի արմատները հասցնում է մինչև 19-րդ դարի վերջը, այսինքն՝ մինչև դեկադանսի գրականություն և Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայություն: Ռիչարդ Տարնասը այդ կապակցությամբ ուղղակի գրում է. «Բոլոր նշանների համաձայն՝ պոստմոդեռնիստական մտածողության գլխավոր մարգարեն Նիցշեն էր՝ իր արմատական քննական գիտակցությամբ, իր հզոր և թունոտ հոտառությամբ, որ թույլ տվեց նրան կանխագգալ արևմտյան մտածողության մեջ ծագող նիհիլիզմը»³: Իսկ «բարձր մոդեռնի» գրողները՝ Ջոյսը, Ֆոլքները, Կաֆկան, Մուզիլը, Թ. Մանը, դառնում են պոստմոդեռնի անմիջական նախապատրաստողներ:

Անկասկած, դրանց թվում է և Հերման Հեսսեն: Ավելին, չթերագնահատելով թվարկած գրողների ծառայությունը պոստմոդեռնի հաստատման գործում, գտնում ենք, որ Հեսսեն իր արձակով և բանաստեղծությամբ հնարավորություն է տալիս առավել հիմնավոր խոսելու առնչությունների մասին:

Փորձենք փաստարկել այս վարկածը:

Հեսսեի՝ իբրև արևմտյան մտքի և մշակույթի կրողներից մեկի մասին խոսելիս, ի շարս նրա ստեղծագործության բազմաթիվ առանձնահատկությունների, որոնց շնորհիվ Հեսսեն այսօր համաշխարհային գրական մեծություն է, կարելի է ընդգծել դրանցից հատկապես մեկը՝ ունիվերսալիզմը: Դա մի հատկանիշ է, որ բնորոշ է միմիայն ընտրյալներին, և որով նրանք միմյանց են կապում ժամանակներն ու գաղափարները: Նկատեցիք հավանաբար, որ նշված առանձնահատկությունը բնորոշ ոչ միայն Հեսսեին, այլև «բարձր մոդեռնի» մյուս գրողներին: Եվ անշուշտ, գիտական ոչ պակաս հետաքրքրությամբ պոստմոդեռնիզմի հետ առնչությունների առումով քննության նյութ կարող էր դառնալ Կաֆկայի «Դատավարությունը», Ֆոլքների «Շառաչ և ցասումը» կամ Ջոյսի «Ուլիսեսը» (թեև Ումբերտո Էկոն մատնանշում է հատկապես «Ֆինեգանի հոգեհացը»): Մակայն այս գրողներից յուրաքանչյուրը ունիվերսալ է յուրովի:

Եվ այսպես՝ Հերման Հեսսե և պոստմոդեռնիզմ: Որո՞նք են շփման այն կետերը, որտեղ Հեսսեն և պոստմոդեռնիզմը դառնում են համադրելի և հնարավորություն տալիս խոսելու նրանց առնչությունների մասին:

1. Ամենից առաջ **«աշխարհն իբրև քառու»** գաղափարն է, որի մասին խոսում էին նաև մոդեռնիստները: Բայց էական տարբերություն

³ Тарнас Р. История западного мышления, М., 1995, с. 335.

կա քառսի մասին նրանց պատկերացումներում: Եթե մոդեռնիզմի գրականության մեջ դեռ որոշակիորեն պահպանվում է քառսը հաղթահարելու, կեցության և գիտակցության միասնականության հասնելու ճիգը, պոստմոդեռնիզմը հետևողականորեն ոչնչացնում է սոցիալական, մշակութային և հոգևոր ցանկացած կառուցվածք: Ինչպես հայտնի է, պոստմոդեռնիզմը ձևավորվում է իբրև անդրադարձ պատմական նոր իրադրության: Երկու համաշխարհային պատերազմները, ապա դրանց հաջորդած գիտատեխնիկական հեղափոխությունը, հումանիստական արժեքների հանդեպ խոր հիասթափության հետ, առաջ են բերում նաև սպառողական հոգեբանության և դրան համարժեք բարքերի արմատավորում: Պետք է դրանց ավելացնել նաև զանգվածային մշակույթի տարածումը, փիլիսոփայական, գրական-տեսական, լեզվափիլիսոփայական դպրոցների ու հոսանքների կտրուկ բռնկումը: Այս իրողություններից է ծնվում պոստմոդեռնը, որ գրականությունն ու արվեստ է բերում անորոշություն, քաղաքացիական և քաղաքական իդեալների բացակայություն, մշակութային հոգնածություն և էնտրոպիա՝ անտարբերություն Պետություն, Մարդ, Աստված, Բանականություն և այլ հիմնարար արժեքների հանդեպ, ինչը խորացնում է քառսի գաղափարը: Բայց, ըստ էության, քառսի գիտակցության սկիզբը դնում է Ֆ. Նիցշեն՝ «Աստված մեռած է» հանրահայտ դատողությամբ: Քառսի գաղափարը յուրատեսակ զարգացում է ապրում պոստմոդեռնիզմի գեղագետների՝ Մ. Ֆոկոյի, Ռ. Բարտի, Ժ. Դերիդայի և մյուսների շնորհիվ: Աստծու մահվանը հաջորդում են հեղինակի, ապա անհատի (ընթերցողի), ի վերջո նաև ոճի մահանալու գաղափարները (Ռ. Բարտ): Ժ. Դեյլոզն ու Ֆ. Գվատարին շրջանառության մեջ են մտցնում «քառսմոս» եզրույթը (Ջ. Ջոյսի փոխանցմամբ՝ «Ֆինեզանի հոգեհացը»): Իբրև քառսի նշան նրանք խոսում են «անվերջանալի փոփոխությունների» և «անվերջանալի արագությունների», «ակնթարթների» մասին, որոնք ժամանակի վերածվելու համար կա՛մ չափազանց կարճ են, կա՛մ չափազանց երկար⁴:

Քառսի գաղափարը հետաքրքիր մեկնաբանություն է ստանում նաև Հերման Հեսսեի «Հուլունքախաղ» վեպում:

Ինչպես հայտնի է, «Հուլունքախաղ» վեպում իրադարձությունները տեղի են ունենում ուտոպիական միջավայրում՝ 22-րդ կամ 23-րդ դարերում: Հետադարձ հայացքով Հեսսեն անդրադառնում է 19-րդ դարասկզբի և 20-րդ դարավերջի քաղաքական, տնտեսական և հոգևոր աղետներին: Հեսսեն այդ ժամանակներն անվանում է «ֆելիետոնային»: Տնտեսական և քաղաքական ցնցումների, անվերջանալի պատերազմների և հոգևոր աղքատացման այդ ժամանակների մասին խոսելով՝ Հեսսեն «ոգու ստորացման, ծախվածության և կազմալուծման օրինակ-

⁴ St' u Делез Ж., Гваттари Ф. Что такое философия?, СПб., 1998, էջ 256:

ներից⁵» ընդգծում է հասկապես կեղծ հոգևոր արժեքները, զանգվածային ժամանցի զբաղմունքները, անիմաստ զեկուցումները, հողվածներն ու բանախոսությունները (կամ ֆեյկետոնները), որոնցով կերակրվում էր հասարակությունը, և ձևավորվում էր կեղծ ինտելեկտուալ միջավայր: Դրանք գրվում էին ամենատարբեր թեմաներով. օրինակ՝ Գյոթեի, արաբական մշակույթի, Ֆրիդրիխ Նիցշեի և 1870-ի կանանց մոդայի, երգահան Ռոսինիի սիրած կերակրատեսակների, մեծ կուրտիզանուհիների կյանքում սենյակային շնիկների ունեցած նշանակության մասին, «որոնցում, ինչպես զառերը բաժակի մեջ, թափահարվում էին մոդայիկ մի քանի ինտելեկտուալ բառեր, և ունկնդիրներից յուրաքանչյուրն ուրախանում էր, երբ այդ բառերից գոնե մեկը հասկանում էր մոտավորապես⁶: Բայց այն, ինչի մասին խոսում է Հեսսեն, այլ բան չէ, քան պոստմոդեռնի գեղագետների (ժ. Բատայ, ժ. Բոդրիյար) կողմից հռչակված *սիմուլյակր*⁷ հասկացությունը: Միմուլյակրը կամ կեղծ պատկերը, որ հայտնի է դեռևս անտիկ ժամանակներից (Էպիկուր, Լուկրեցիուս), դառնում է պոստմոդեռնի կարևոր հասկացություններից մեկը՝ արտացոլելով իրականության և լեզվի միջև առկա աղետալի խզումը: Բոդրիյարի կարծիքով՝ սիմուլյակրի շնորհիվ ստեղծվում է «հիպերիրականություն», որը ոչ մի կապ չունի ռեալ իրականության հետ: Արդիականությունը, ըստ այս փիլիսոփայի, համատարած սիմուլյացիա է, որով ախտահարված են սոցիալական և մշակութային բոլոր բջիջները⁸: ժ. Դեյյոզը լեզուն մեկնաբանում է իբրև «սիմուլյակրներից ամենաբարձրը»⁹:

Հատկանշական է, որ սիմուլյակրի կամ կեղծ ճշմարտությունների մասին, որոնցով կերակրվում է հանրությունը, Հեսսեն խոսում է նաև «Տափաստանի գայլը» վեպում, այսինքն՝ «Հուլունքախաղից» դեռ 15 տարի առաջ: Սոցյարտի և Գյոթեի դրվագներում Հեսսեն շատ նրբորեն ներկայացնում է կեղծ ճաշակի վրա հիմնված քաղթենիական միջավայրի ողջ տրագիկումիզմը: «Եվ իրոք, - կարդում ենք վեպում, - ի հաստատումն իմ աննկարագրելի զարմանքի և սոսկումի, թիթեղյա սատանայական ձագարը շուտով դուրս թքեց բրոնխային խորխի և ծամված ռետինի այն խառնուրդը, որ գրամոֆոն ունեցողներն ու ռադիոյի մասնագետներն անվանում են երաժշտություն... Եվ հիմա դուք լսում եք ոչ միայն ռադիոընդունիչի կողմից բռնաբարված Հենդել, դուք միաժամանակ տեսնում ու լսում եք կյանքի մի գերազանց օրինակ... Նույն կարգով է և կյանքը, որ առանց ընտրության այս ու այն կողմ է շարտում աշխարհի հոյակապ կերպածները, թույլ է տալիս, որ Հենդելի երաժշ-

⁵ **Հ. Հեսսեն**, Հուլունքախաղ, Եր., 2016, էջ 18:

⁶ Նույն տեղում, էջ 22:

⁷ Լատիներեն simulacrum բառից, որ նշանակում է պատկեր, նմանություն, երևութականություն:

⁸ Մեջբերման աղբյուրը՝ «Западное литературоведение XX века», М., 2004, էջ 373:

⁹ **Делез Ж.** Логика смысла, М.-Екатеринбург, 1998, с. 371.

տությանը հաջորդի միջին արդյունաբերական ձեռնարկություններում հաշվեկշռի հաշվետվությունը»¹⁰: Նույն ցավն է ապրում վեպի հերոս Հարրին, երբ ծանոթ պրոֆեսորի տանը տեսնում է Գյոթեի նկարը, բայց արված անճաշակությամբ, որի հետևանքով գերմանացի մեծ բանաստեղծը զրկվելով բնականությունից՝ ներկայանում է «քաղցրավուն, քաղքենի, սալոնային» կերպարանքով:

2. Երկրորդ գաղափարը **էկլեկտիզմն է**: Ժ.-Ֆ. Լիոտարի կարծիքով՝ «էկլեկտիզմը պոստմոդեռնի դարաշրջանի մշակույթի տիրապետող նշանն է»¹¹: Այն որոշակիորեն առկա է Հեսսեի վեպում. ճիշտ է՝ այս հասկացության մասին Հեսսեի և պոստմոդեռնիստների պատկերացումները մի փոքր տարբեր են: Նախ, էկլեկտիզմի օրինակ է հենց հունքախաղը: Բացի այդ, այստեղ մենք տեսնում ենք գրական ժանրերի, ոճերի, գրական հնարների այնպիսի համադրություն ու բազմազանություն, որոնց նմանը հաճախ չես հանդիպի մեծ գրականության մեջ: Այստեղ արձակը, բանաստեղծությունը, փիլիսոփայական էսսեն, քաղաքական պամֆլետը, լեզենդը, ժամանակագրությունը հաջորդում են միմյանց: Ուշադիր դիտարկման դեպքում կարելի է երեք-չորս վիպատեսակներ (օրինակ՝ սոցիալական, կենսագրական, հոգեբանական, պատմական, դաստիարակության) մատնանշել: Ի դեպ, էսսեի և էսսեականության մասին:

3. «Պոստմոդեռնիզմի գրողը կամ արվեստագետը, - գրում է նույն Լիոտարը, - գտնվում է փիլիսոփայի վիճակում»¹²: Այս ժանրը, որ փիլիսոփայության և գրականության միավորման արդյունք է և բնավ ոչ նորություն արձակի պատմության մեջ, նոր կյանք է ստանում պոստմոդեռնի փիլիսոփաների և գրողների շնորհիվ (Մ. Կունդերա, Ո. Էկո, Ժ. Դերիդա, Մ. Բլանշո, Մ. Հայդեգեր, Ռ. Բարտ): Խոսելով պոստմոդեռնիականավոր տեսաբան Ժակ Դերիդայի փիլիսոփայական լեզվի մասին՝ Ի. Իլյինն ընդգծում է, որ նրա ստեղծագործության մեջ կարևորը ոչ միայն գաղափարներն են, այլև դրանց մատուցման կերպը, որի շնորհիվ փիլիսոփայի խոսքը ձեռք է բերում «ինտելեկտուալ էսթետիզմի», «արտիստականության» գծեր, որոնք վկայում են այն մասին, որ փիլիսոփայությունը լեզվի առումով վաղուց այլևս հեռացել է գերմանական դասական մոայլությունից և մոտեցել ֆրանսիական մենթալ զվարթությանը¹³: Չմոռանանք նաև, որ Նիցշեն իր «Զվարթ գիտությամբ» այդ ավանդույթի հիմնադիրներից է:

4. Մշակութային **պլյուրալիզմը կամ բազմամշակութայնությունը (multikulturalizm)**, որը պոստմոդեռնի ամենաբարդ հասկացություններից է և առավել բնորոշ է ամերիկյան պոստմոդեռնին, հաճախ հանդի-

¹⁰ **Հ. Հեսսե**, Տափաստանի գայլը, Եր., 2013, էջ 244-245:

¹¹ Մեջբերման աղբյուրը՝ «Западное литературоведение XX века», էջ 327:

¹² Նույն տեղում:

¹³ Տե՛ս **Ильин И.** Постструктурализм. Деконструктивизм. Постмодернизм, М., 1998,

պում է նաև Հեսսեի արձակում, իսկ «Հուլունքախաղ» վեպում դա կոմպոզիցիոն կարևոր բաղադրիչ է: Այստեղ այն ներկայացվում է երկու տեսանկյունից: Նախ, հանգամանորեն տրվում է եվրոպական մշակույթի պատկերը իր բոլոր հիմնական՝ հոգևոր, գիտական և գեղարվեստական տեսանկետով: Ապա, ինչը շատ կարևոր է, Արևմուտքի և Արևելքի, մասնավորապես չինական մշակութային կոդերը համադրվում են միմյանց: Առանց դառսական փիլիսոփայության յուրացման Յոզեֆ Կնեխտը չի կարող հասնել կատարելության այն աստիճանին, որ պահանջվում է Խաղի վարպետ դառնալու համար:

Հատկանշական է, որ բազմամշակութայնությունը պոստմոդեռնի տեսաբանները շողկապում են մարգինալիզմի հետ: «Որոշակի առումով պոստստրուկտուրալիզմը և պոստմոդեռնիզմը կարող են բնութագրվել իբրև մարգինալիզմի ֆենոմենի արտահայտություններ»¹⁴, գրում է Ի. Իլլինը: Այսինքն՝ ներկայացվում է բազմամշակութայնության միանգամայն հակառակ գաղափարը, երբ օտար մշակույթը համարվում է անընդունելի: Հերման Հեսսեի վեպը հարուստ օրինակներ է տալիս խոսելու նաև այս երևույթի մասին: Չէ՞ որ այն ամբողջովին կառուցված է երկու հակադիր աշխարհների մարգինալ սկզբունքի հիման վրա: Ընդամին, աշխարհընկալման այս տիպը բնորոշ է Հեսսեի գրեթե բոլոր գործերին՝ բնագրի և բանականության, արվեստի և իրականության, փիլիսոփայության և պոեզիայի հակադրությունների տարբերակներով: «Հուլունքախաղում» Կաստալիան և մնացյալ աշխարհը անհաշտ օպոզիցիաներ են: Խաղը տարանջատում է այդ երկու աշխարհները: Մեկը սովորական աշխարհն է՝ իր սովորական առօրյայով և ապրելակերպով, մյուսը՝ էլիտար մարդկանց աշխարհը՝ Կաստալիան, որտեղ ապրում են ընտրյալներ, ընդ որում՝ միմիայն տղամարդիկ, և ծառայելով ոգուն՝ փորձում են կորստից փրկել մարդկության ստեղծած մշակութային ժառանգությունը: Կաստալիան մի կողմից խորհրդանշում է Հեսսեի կապը հունական դիցաբանության այս կարևոր տեղանվան և Ապոլոնի հետ, մյուս կողմից՝ գերմանական գրականության երկու հսկաների՝ Գյոթեի («Վիլհելմ Մայստեր», «Մանկավարժական պրովինցիա») և Շիլլերի («Գեղագիտական պետություն») հետ առնչությունները: Կաստալիայում գործող այրերը կարծում են, որ նոր մշակույթ ստեղծելու կարիք չկա, պարզապես պետք է լավ պահպանել արդեն ստեղծվածը, ինչը նույնպես մարգինալիզմի որոշակի տարրեր է պարունակում: Մարգինալիստական տարրեր կան նաև Յոզեֆ Կնեխտի խորհրդավոր ինքնասպանության մեջ, որով նա փորձում է հաշտեցնել երկու աշխարհները: Հետաքրքիր է, որ այս առումով Հեսսեի վեպի հետ գաղափարական ընդհանրություն կարելի է գտնել Չ. Ջենկսի այն դատողության մեջ, ըստ որի՝ պոստմոդեռնի արվեստը օժտված է «երկակի կոդավորմամբ» և հասցեագրված է ոչ միայն էլիտային, այլև

¹⁴ Западное литературоведение XX века, с. 266.

լայն զանգվածներին¹⁵:

4. Անհրաժեշտ է դիտարկել ևս մի խնդիր, որը կապված է այն դատողության հետ, թե պոստմոդեռնը հայրենիք չունի (Հազ Դ. Միլվերման): Գուցե դրա մեջ կա ճշմարտության ինչ-որ բաժին, եթե նկատի ենք ունենում նրա խիստ տարածվածությունը աշխարհով մեկ, թեև իրականության մեջ նման բան սովորաբար չի լինում. գրական շարժումները և ուղղությունները միշտ էլ սկիզբ են առնում ինչ-որ տեղից: Տվյալ դեպքում ավելի հաճախ շրջանառվում է իսպանաամերիկյան մշակութային միջավայրը¹⁶: Սակայն հայրենիք չունենալու գաղափարը շատ ավելի իմաստավորվում է, երբ այն տարածում ենք պոստմոդեռնի հերոսների վրա: Իսկապես, նրանք հայրենիք չունեն: Եթե ռոմանտիզմի և մոդեռնիզմի գրականությունն արժարժում է «տրանսցենդենտալ անապաստանության» (Obdachlosigkeit) գաղափարն իբրև մարդու ողբերգական կացության բաղադրիչ¹⁷, ապա տիեզերական ծավալների միտված պոստմոդեռնը կորցնում է «հայրենիք» հասկացության իմաստը, քանզի նրանք կորցրել են ինքնությունը: Նրանք ապրում են կատարյալ պայմանական միջավայրերում, այսինքն՝ ապրում են ամենուրեք և ոչ մի տեղ: Հերման Հեսսեի «Տափաստանի գայլը» վեպի հերոս երաժիշտ Պաբլոն նման հերոսի օրինակ է, որոնցով լեցուն է «Հուլունքախաղը»:

5. Ուշադրության արժանի է նաև մեկ այլ հանգամանք. վեպում Հեսսեն խոսում է այն մասին, որ Կաստալիայում ոչինչ նոր բան չեն ստեղծում, այլ խնամքով պահպանում են հինը և հանուն իրենց ազատության՝ նշանների լեզվով այն վերարտադրում հուլունքախաղի մեջ: Այս գաղափարը կարևոր է այն առումով, որ այնտեղ ակնհայտորեն դրսևորվում են պոստմոդեռնիստական գծեր, որոնք ինչ-որ չափով կարծես կրկնում են Հեսսեի գաղափարը: Պոստմոդեռնիստները նույնպես թերահավատ են նոր մշակույթ, նոր գրականություն ստեղծելու գաղափարին և ամեն ինչ հանգեցնում են տեքստի և միջտեքստայնության: Պոստմոդեռնի ամենահայտնի գրողներից մեկը՝ արգենտինացի Լուիս Բորխեսը, որը տիեզերքը ներկայացնում է իբրև մի վիթխարի լաբիրինթոս, «Բաբելոնի գրադարանը» հանրահայտ պատմվածք-էսսեում գրում է. «Այն համոզմունքը, որ ամեն ինչ գրված է, ոչնչացնում է մեզ կամ տեսիլք դարձնում»¹⁸:

6. Վերջապես՝ **խաղ** հասկացությունը, որը, ըստ էության, միավորում և ամբողջացնում է վերը նշված բոլոր գաղափարները՝ դառնալով հիմնարար ինչպես Հեսսեի վեպի, այնպես էլ պոստմոդեռնի գեղագիտության համար: Հատկանշական է Վ. Բիչկովի ձևակերպումը այս դեպքում: «Պոստմոդեռնիզմը,- գրում է նա,- ամենից առաջ կեցության,

¹⁵ Տե՛ս Դժենկս Չ. Язык архитектуры постмодерна, М., 1985, էջ 136:

¹⁶ Տե՛ս Անդերսոն Պ. Истоки постмодернизма, М., 2011, էջ 11:

¹⁷ Տե՛ս Լուկաս Գ., Die Theorie des Romans, dtv, 1962, էջ 32:

¹⁸ Լ. Բորխես, Երկու արքաները և երկու լաբիրինթոսները, Եր., 1992, էջ 55:

մշակույթի, մտածողության զգացումն ու գիտակցումն է իբրև խաղ»¹⁹: Հեսսեի «Հուլունքախաղի» և պոստմոդերնիզմի կապն այնքան հանրահայտ է, որ մեկ այլ գրականագետ այսպիսի արտահայտություն ունի. «Պոստմոդերնիստ գրողը հուլունքախաղի նվիրյալ է, որը տրված առաջադրանք է լուծում»²⁰:

Ինչպես հայտնի է՝ խաղի՝ իբրև մշակութային ֆենոմենի գաղափարը հայտնի է դեռևս Պլատոնի ժամանակներից և մինչև Շիլլեր ու Հայզինգա անցնում է զարգացման փուլեր: Այդ ճանապարհին իրենց որոշակի ավանդն են բերում նաև Նիցշեն, Շպենգլերը, Վիտգենշթայնը (իր «լեզվական խաղեր» հասկացությամբ): Պոստմոդերնի տեսաբանների համար նույնպես «խաղի» գաղափարը դարձավ հիմնարար: Կարծում ենք, որ դրա ըմբռնումը մշակելու գործում չափազանց մեծ է Հեսսեի «Հուլունքախաղի» ազդեցությունը:

Խաղի գաղափարը, ինչպես ներկայացնում է Հեսսեն, ծնվում է նախ տաղանդավոր երաժիշտների և մաթեմատիկոսների միջավայրում, որոնց հետո միանում են բանասերները, պատմաբանները, արվեստագետները, աստվածաբանները, փիլիսոփաները՝ մտավորականներ, որոնք կամովին ցանկանում են ծառայել ոգուն և մշակույթի փրկությանը: Այստեղից է ծագում հերոսի՝ Յոզեֆ Կնեխտի անունը, որ բառացի նշանակում է ծառա, բայց ոչ հեգելյան, այլ քրիստոնեական առումով: Արդեն ձևավորված և շարունակ կատարելագործվող Խաղը Հեսսեն ներկայացնում է իբրև խորհրդավոր և էզոթերիկ մի հասկացություն, որի մեջ առկա են մշակույթի ընդհանրական բովանդակությունը և արժեքները: «Այն ամենը,- գրում է Հեսսեն,- ինչ մարդկությունը իր ստեղծագործական վերելքի դարաշրջաններում ստեղծել է բանականության, բարձր գիտելիքի և արվեստի ոլորտներում...ահա, հոգևոր արժեքների անընդգրկելի այդ ամբողջ պաշարը հուլունքախաղի վարպետը խաղալով ներկայացնում է այնպես, ինչպես երգեհոնահարը երգեհոն է նվագում»²¹:

Թե վերջապես ինչ է հուլունքախաղը, առ այսօր հստակ պատկերացում չկա: Ինչպես հայտնի է, ի տարբերություն Յ. Հայզինգայի էմպիրիզմի, Հեսսեն վեպում գործածում է խաղի տրանսցենդենտալ չափումներ, որոնք արմատապես փոխում են դրա բնութագիրը և մանավանդ դարձնում ավելի բարդ: Որոշակի իմաստից զերծ լինելով հանդերձ այն միաժամանակ կարող է բազմաթիվ զուգահեռներ ունենալ իրական կյանքում: Այս անորոշության հիմքը դնում է նախ Հեսսեն՝ տալով մեկից ավելի բնութագրումներ՝ «մոզական թատրոն», «խաղերի խաղ», «lingua sacra», «sui generis արվեստ» և այլն: Բառը փորձել են մեկնաբանել բազմաթիվ մասնագետներ, բայց անօգուտ: Պոստմոդերնիզմի մի

¹⁹ Бычков В. Эстетика, М., 2004, с. 453.

²⁰ «Новый мир», 1992, №. 2, с. 226.

²¹ Հ. Հեսսե, Հուլունքախաղ, էջ 14:

շարք հիմնարար գաղափարների նախօրինակները կարելի գտնել խաղի հասկացության մեջ: Օրինակ՝ «Աշխարհն իբրև տեքստ» գաղափարը: Կաստալիական էլիտար մշակույթը և ինքը՝ հուլունքախաղը, գրավոր մշակույթ են, տեքստ. Յոզեֆ Կնեխտը այդ մշակույթի մարմնացումն է իբրև կատարյալ հերոս: Կամ՝ «Մշակույթն իբրև նշանների համակարգ»: Լեզվի դիտանկյունից նայելով խնդրին՝ տեսնում ենք, որ Խաղն ունի առանձնահատուկ լեզու, որի մեջ համադրված են մի շարք լեզվամիջոցներ, օրինակ՝ մաթեմատիկայի, փիլիսոփայության, երաժշտության լեզուներն իբրև նշաններ, ինչի հետևանքով նախորդ ողջ մշակույթը ներկայանում է իբրև նշանների համակարգ: Այդ նշանների վարպետ համադրման շնորհիվ, ինչը նաև էկլեկտիզմի օրինակ է, «պետք է հնարավոր լինի ամեն խաղ, անգամ այն, որ որևէ բույս լատիներեն խոսի պարոն Կարլ Լիննեյի հետ»: Նման օրինակներ կարելի է բերել և դեստրուկցիայի, միջտեքստայնության և պոստմոդեռնի մյուս գաղափարների վերաբերյալ:

«Հուլունքախաղ» վեպի և պոստմոդեռնի միջև անշուշտ, կան նաև բազմաթիվ զանազանություններ: Առանձնացնենք գուցե ամենակարեվորը. եթե իր գեղագիտական և փիլիսոփայական հայացքների բազմազանությամբ հանդերձ՝ Հեսսեն այդուամենայնիվ մնում է ամբողջական և հավատարիմ հումանիստական արժեքներին, ապա պոստմոդեռնի գրականությունը հիմնականում միտված է քանդելու, իմաստագրկելու ցանկացած ամբողջականություն, գրողի համոզմամբ՝ աշխարհի մոդելավորման ցանկացած փորձ անիմաստ և անհնար է, այսինքն՝ ամեն ինչ հանգեցվում է անհայտության և անորոշության: 20-րդ դարավերջին Ռ. Տարնասը պոստմոդեռնի բերած այս անորոշությունը և մետաֆիզիկական դատարկությունը համարում է մեր ժամանակի գերխնդիրը: «Կձգվի՞ դա մինչև անվերջություն՝ տարիների և տասնամյակների ընթացքում թերևս ընդունելով առավել տանելի կամ առավել խիստ ձևեր,- գրում է նա,- արդյո՞ք այն յուրատեսակ էնտրոպիական պրոյուդիա է պատմության ապոկալիպտիկ հանգուցալուծման, թե՞ այն շրջափուլային անցում է մի բոլորովին նոր դարաշրջանի, որ կրում է քաղաքակրթական նոր ձև և նոր աշխարհայացք, որոնց իդեալներն ու սկզբունքները արմատապես տարբերվում են այն իդեալներից և սկզբունքներից, որոնք նախկինում դրդել էին ժամանակակից աշխարհին շարժվելու իր դրամատիկ հետագծով»²²:

АРА АРАКЕЛЯН – Роман «Игра в бисер» Германа Гессе и постмодернизм. – В статье рассматриваются задачи, касающиеся постмодернизма и связи романа Германа Гессе «Игра в бисер». Затрагивается история постмодернизма, последнего наиболее влиятельного проявления западной эстетико-теоретической мысли, которому свойственны также парадоксы. Один из них заключается в том, что, хотя уже семь десятилетий эстетика и философия говорят о постмодернизме, до

²² Тарнас Р., նշվ. աշխ., էջ 348:

сих пор нет единого мнения об этом литературном направлении.

Выделяются определенные идеи (хаос, эклектика, симулякры, мультикультурализм, игра и т. д.), которые фактически являются точками соприкосновения романа Гессе и постмодернизма. В то же время подчеркивается то важное обстоятельство, что роман Германа Гессе, опубликованный за десятилетия до бурных дебатов постмодернистов, в определенной степени способствует распространению этих идей в среде эстетов постмодернизма.

Ключевые слова: *модернизм, постмодернизм, хаос, литературный эклектизм, мультикультурализм, игра, деструкция, текст*

ARA ARAKELYAN – *The Novel “The Glass Bead Game” by Hermann Hesse and Postmodernism.* – The article makes a focus on the problems related to the connections of the novel “The Glass Bead Game” by Hermann Hesse and postmodernism. The article touches upon the history of postmodernism, the last most influential manifestation of Western aesthetic-theoretical thought, which also can contain paradoxes. One of them is that, although aesthetes and philosophers have been talking about postmodernism for seven decades, there is still no consensus about this literary trend. There are certain ideas (chaos, eclecticism, simulacrum, multiculturalism, game, etc.) that are actually points of contact between Hesse’s novel and postmodernism. At the same time, the important fact is emphasized that Hermann Hesse’s novel, published decades before the stormy debates of postmodernists, contributes to a certain extent to the dissemination of these ideas among postmodern aestheticians.

Key words: *modernism, postmodernism, chaos, literary eclecticism, multiculturalism, game, destruction, text*

ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ Կ(Ղ)- ԱՊԱՌՆԻԻ ԵՎ -ՈՒ ԱՊԱՌՆԻԻ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ
ՇՈՒՐՁ

ՄԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Փաստարկվում է, որ արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնին* (*կզնամ, կխոսեմ*) որպես այսպես կոչված՝ ենթադրական եղանակի կամ պայմանական եղանակի ձև բնորոշելու փորձերը *առարկություն են հարուցում* ընդհանուրլեզվաբանական և տիպաբանական տեսանկյունից: Հատկապես կարևոր են հետևյալ նկատառումները. **1)** ինչպես ցույց են տվել մի շարք հետազոտողներ, ապառնի ժամանակը, ի տարբերություն ներկա ժամանակի և անցյալ ժամանակի, երբեք զուտ ժամանակային կարգ չէ. այն մասամբ ժամանակային է, մասամբ՝ եղանակային: Ապառնի ժամանակի ցուցիչները (նշորդները) պատմականորեն հաճախ առաջանում են այնպիսի միավորներից, որոնք սկզբնապես գործածվել են զանազան եղանակային իմաստներ արտահայտելու համար: Մյուս կողմից՝ ապառնի ժամանակի ձևերը սովորաբար նաև եղանակային գործառույթներ են կատարում, **2)** արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնին* իմաստագործառույթային տեսանկյունից էապես չի տարբերվում այլ լեզուներում առկա սահմանական եղանակի ապառնիից, **3)** *կ(ը)- ապառնիի* գործառույթունը պայմանական կառույցներում նրա առաջնային (հիմնական) գործառույթը չէ, ինչպես լինում է սովորաբար տիպիկ պայմանական եղանակի (Conditional mood) դեպքում: Ինչ վերաբերում է արդի արևելահայերենի *-ու* ապառնիի (զնալու եմ, խոսելու եմ) իմաստագործառույթային բովանդակությամբ, այն համապատասխանում է սպասելի ապառնիի (կամ նախորոշված ապառնիի) տիպաբանական բնութագրությանը, ուստի պետք է դիտարկվի վերջինիս հետ նույն հարթության վրա: Այսպիսով՝ արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնիի* և *-ու ապառնիի* իմաստագործառույթային փոխհարաբերությունը համապատասխանաբար պետք է դիտել որպես հակադրություն պարզ ապառնի ժամանակի և սպասելի ապառնի (կամ նախորոշված ապառնի) ժամանակի միջև:

Բանալի բառեր - *ապառնի ժամանակ, եղանակային իմաստներ, արդի արևելահայերեն, կ(ը)- ապառնի, -ու ապառնի, սպասելի ապառնի (նախորոշված ապառնի), ենթադրական եղանակ, սահմանական եղանակի ապառնի*

Արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնիի* (*կզնամ, կխոսեմ* ևն) եղանակային պատկանելության, ինչպես նաև դրա և *ու- ապառնիի* (*զնալու եմ, խոսելու եմ* ևն) իմաստագործառույթային փոխհարաբերության հարցում հայ լեզվաբանության մեջ մինչև օրս միասնականություն գո-

յություն չունի: Առավել տարածված տեսակետի համաձայն՝ *կ(ը)- ապառնին* ենթադրական (կամ պայմանական), իսկ *ու- ապառնին* սահմանական եղանակի ժամանակաձև է: Իհարկե, մի շարք հետազոտողներ փորձել են կասկածի տակ դնել *կ(ը)- ապառնիի* ենթադրական (կամ պայմանական) եղանակային բնույթը՝ հաշվի առնելով, որ այն շատ հաճախ ստույգ, հաստատապես կատարելի գործողություն/եղելություն է արտահայտում: Այդուհանդերձ, վերջիններս նույնպես ընդհանուր առմամբ հավատարիմ են մնացել ընդունված ավանդույթին և, ըստ այդմ, *կ(ը)- ապառնին* ներկայացրել ենթադրականի (կամ պայմանականի), իսկ *ու- ապառնին* սահմանականի եղանակաժամանակային ձևերի շարքում՝ երբեմն դրանց մասնակի վերաբնութագրամբ¹: Մյուս կողմից՝ թեև հայ և օտարագրի որոշ լեզվաբաններ, մեր կարծիքով, հիմնականում ճիշտ են մեկնաբանել *ու- ապառնիի* իմաստագործառության լուծումը, սակայն նրանց այդ բնորոշումները հայ քերականագիտության մեջ պատշաճ ուշադրության չեն արժանացել: Ուստի սույն հոդվածում փորձ է արվում առկա տեսակետների քննական վերլուծությամբ *կ(ը)- ապառնիի* և *ու- ապառնիի* իմաստագործառության փոխհարաբերության հարցը վերանայել ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից:

Ս. Պալասանյանը «Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց» (Թիֆլիս, 1870) աշխատության մեջ, որը, ի դեպ, արևելահայ աշխարհաբարի քերականության տեսության առաջին փորձն է, *կ(ը)- ապառնին* (կը գրեմ, կ'իմանամ) համարում է սահմանական եղանակի ժամանակաձև, իսկ *ու- ապառնին* (գրելու եմ, իմանալու եմ)՝ երկրորդական բաղադրյալ ժամանակաձև՝ *ապառնի ըղձական (ներկա)*²: Թեև *կ(ը)-*ով օժտված անցյալի ապառնին (կը գրէի, կ'իմանայի) ևս նա հիշյալ աշխատության մեջ ներառում է սահմանական եղանակի ժամանակաձևերի շարքում *երկրորդ կամ պայմանական ապառնի* անվանմամբ, բայց միևնույն ժամանակ նշում է, որ վերջինս «գրեթէ միշտ ֆրանս. պայմանական եղանակի ներկայ ժամանակի (Conditionnel présent) միտքն ունի»³: Իսկ ահա իր հաջորդ քերականական աշխատության մեջ Ս. Պալասանյանը *կ(ը)-*ով օժտված անցյալի ապառնին (կը գրէի, կ'իմանայի) արդեն առանձնացնում է որպես ինքնուրույն՝ պայմանական եղանակ⁴: Առաջին հայացքից տարօրինակ թվացող *ապառնի ըղձական (ներկա)* անվանումը թերևս կարելի է բացատրել այդ ժամանակաձևին նրա տված իմաստագործառության բնորոշմամբ,

¹ Տե՛ս, օրինակ, **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը, Եր., 1967, էջ 370-375, **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 167-169, **Նույնի** Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 217-218, **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Եր., 1989, էջ 302-304:

² Տե՛ս **Ս. Պալասանեան**, Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 67-70, 73-74:

³ Նույն տեղում, էջ 70: Հմմտ. նաև էջ 77 հջ. հարացույցային օրինակները:

⁴ Տե՛ս **Ս. Պալասանեան**, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874, էջ 141-156:

ըստ որի՝ «չու ապառնի դերբայով կազմուած ըղձական ապառնին վարվում է, երբ կամենում ենք յայտնել, թէ դիտատրութիւն կայ գործողութիւնը կատարելու. երբեմն էլ հարկադրականի մտքով է գործ դրվում, մանաւանդ եթէ բայը բացասական է...»⁵: Իսկ *կ(ը)- ապառնի* (ըստ Մ. Պալասանյանի՝ պարզ ապառնիի) հիմնական գործածության մասին նա գրում է, որ «պարզ ապառնին գործ է ածվում՝ սովորական ապագայ գործողութիւնը յայտնելու...»⁶: Մ. Աբեղյանը արդի արևելահայերենի համար ընդունում է հինգ եղանակ՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական՝ *կ(ը)- ապառնի* և *անցյալի ապառնի* ժամանակաձևերը ներառելով ենթադրական եղանակի մեջ⁷, և նշում, որ վերջինս «ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողը մտածում, ենթադրում, կարծում է, թէ լինում է, եղել է, կամ կը լինի...»⁸: Ինչ վերաբերում է *ու- ապառնիին* և անցյալի ապառնիին (նստելու եմ, գնալու եմ, նստելու էի, գնալու էի նն), Մ. Աբեղյանը, դրանք դիտելով որպէս սահմանական եղանակի ժամանակաձևեր⁹, *ու-* ապառնի դերբայի իմաստը բնորոշում է հետևյալ կերպ. «Ապառնի դերբայը բայական իմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան դեռ նոր կատարելի լինելը, կամ դիտատրութիւն, պէտք մի բան անելու: Օրինակ՝ ես գնալու եմ...նշանակում է՝ ես մտադրութիւն ունիմ գնալու, ես պէտք է գնամ...»¹⁰: Ըստ այդմ՝ Մ. Աբեղյանը *ու- ապառնիի* իմաստագործառութային էությունը մեկնաբանում է գրեթէ նույն կերպ, ինչպէս Մ. Պալասանյանը, բայց, ի տարբերություն վերջինիս, նա *ու- ապառնին* դիտում է իբրև սահմանական եղանակի ժամանակաձև: Մյուս կողմից՝ ինչպէս հայտնի է, Մ. Աբեղյանը արդի հայերենի վերլուծական ժամանակաձևեր կազմող դերբայներին (*անկատար, վաղակատար, ապառնի դերբայ*) վերագրում է կատարվող, կատարված և կատարելի կերպային իմաստներ և գտնում, որ գործողության կատարման ժամանակն արտահայտվում է օժանդակ բայի, իսկ ընթացքային վիճակը (կերպը)՝ դերբայների միջոցով: Ըստ այդմ ստացվում են՝ *գնում է* (կատարվող կերպ), *գնացել է* (կատարված կերպ), *գնալու է* (կատարելի կերպ)¹¹: Մեր հետագա քերականները դերբայներով և *եմ/էի* օժանդակ բայով կազմված բաղադրյալ եղանակային ձևերում ընդհանուր առմամբ Մ. Աբեղյանի հետևողությամբ տարբերակում են կատարվող, կատարված և կատարելի կերպեր¹²: Սակայն Գ. Ջահուկյանը չի ընդունում այդ ավանդական մո-

⁵ Մ. Պալասանյան, Ընդհանուր տեսութիւն..., էջ 99:

⁶ Նույն տեղում, էջ 98:

⁷ Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 97-98, 113, 118:

⁸ Նույն տեղում, էջ 97:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 114-117:

¹⁰ Նույն տեղում, էջ 101:

¹¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 270-271, 458-461:

¹² Տե՛ս Զ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 151-152, Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 369, Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պատնասյան, Զ. Ա.

տեցումը և գտնում է, որ համապատասխան դերբայները արտահայտում են ոչ թե իսկական կերպային իմաստներ, այլ համընթացություն, նախորդում և հաջորդում: Այսինքն՝ տվյալ դեպքում մենք գործ ունենք «ժամանակի ոչ իրադրական (անորոշ) արտահայտության հետ. իրադրական ժամանակի դեպքում նշվում է հաղորդողի ընտրած համեմատության եզրը՝ խոսելու պահը կամ անցյալում ու ներկայում ընտրված որևէ պահ... Ոչ իրադրական ժամանակը ցույց է տալիս պարզապես ժամանակային հաջորդականություն՝ անկախ հաղորդողից...»¹³: Այն, որ հիշյալ դերբայների և *եւ/էի* բայի գուգորդությամբ կազմվող ժամանակաձևերում այդ դերբայները ոչ թե կերպային, այլ ժամանակային իմաստ են արտահայտում, մեզ միանգամայն համոզիչ է թվում: Մակայն կարծում ենք՝ ժամանակի քերականական կարգի ներսում ոչ իրադրական ժամանակի և իրադրական ժամանակի տարբերակումը որպես (ենթա-) կարգեր առարկություն է հարուցում և թյուրըմբռնման տեղիք է տալիս: Ուստի ավելի ճիշտ կլիներ պահպանել այդ ժամանակաձևերի ավանդական անվանումները, բայց ոչ թե կերպային, այլ ժամանակային մեկնաբանությամբ¹⁴:

Իսկ *կ(ը)- ապառնիի* մասին Գ. Ջահուկյանը գրում է. «Այն ցույց է տալիս հաղորդողի կողմից հաստատաբար, որոշակիորեն ենթադրվող եղելություն: Օգտագործելով ավանդական անվանումը՝ *կ(ը)*-ով օժտված բայաձևերը կարելի է կոչել ենթադրական: Քանի որ *կ(ը)*-ն հաստատ, որոշակի ենթադրություն արտահայտող մասնիկի արժեք ունի, ուստի *կ(ը)*-ով օժտված *կ(ը)* գնամ, *կ(ը)* գրեմ տիպի բայաձևերը սահմանական եղանակի արժեք են ստանում, մանավանդ որ որպես հավաստի արձանագրվող յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն ենթադրական է»¹⁵: Դժվար չէ նկատել, որ Գ. Ջահուկյանը *կ(ը)- ապառնիին*, ըստ էության, համարում է սահմանականի ձևեր՝ *ենթադրական եղանակ* անվանումը պահպանելով պայմանականորեն՝ ավանդույթի ուժով: Իսկ այն, որ յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն/գործողություն երբեք մաքուր ժամանակային իմաստ չունի, այլ անհրաժեշտաբար ներառում է նաև ենթադրականության կամ նման որևէ եղանակային իմաստ, հաստատվում է ընդհանուրլեզվաբանական և տիպաբանական տվյալներով¹⁶: Ուշագրավ է նաև, որ ապառնիի ձևերը

Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու: Հ. 2: Ձևաբանություն, Եր., 1974, էջ 352-353, **Մ. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 280-281:

¹³ **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 283-285:

¹⁴ Տե՛ս **Ս. Ավետյան**, Հայերենի ժամանակի և կերպի քերականական կարգերը ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից // Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, Եր., 2017, 3 (24), էջ 20-34:

¹⁵ **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 246:

¹⁶ Տե՛ս u, օրինակ, **J. Lyons**, Semantics, Vol. 2, Cambridge University Press, 1977, էջ 677-678, 815-817, նաև՝ **F. R. Palmer**, Mood and Modality, 2nd ed., Cambridge University Press, 2001, էջ 104-106:

պատմականորեն հաճախ առաջանում են նախկին անիրական եղանակային ձևերից կամ ցանկություն, պարտավորություն, անհրաժեշտություն և նման եղանակային իմաստ արտահայտող բառային սկզբնաձևերից¹⁷: Իսկ իրական-անիրական (*realis-irrealis*) եղանակային հակադրությամբ բնութագրվող լեզուներում ապառնիի իմաստը սովորաբար արտահայտվում է անիրական եղանակի բայաձևերով¹⁸: Մյուս կողմից՝ ապառնիի ձևը հաճախ գործածվում է նաև անիրական եղանակի իմաստներ արտահայտելու նպատակով¹⁹, կամ էլ միևնույն ցուցիչը արտահայտում է ն՝ ապառնիի, ն՝ անիրական եղանակի իմաստներ²⁰:

Այլ հետազոտողներ ևս փորձել են *կ(ը)- ապառնիին* սահմանական եղանակի իմաստ վերագրել, բայց, դարձյալ հետևելով ընդունված ավանդույթին, պահպանել են *ենթադրական եղանակ* անվանումը²¹: Սկզբնապես այդպիսի դիրքորոշում է ունեցել նաև Է. Ադայանը: Սակայն հետագայում «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Եր., 1967) աշխատության մեջ կրկին անդրադառնալով այդ հարցին՝ նա վերանայում է իր նախկին տեսակետը և գտնում, որ «ենթադրական եղանակը գործողությունը ներկայացնում է որպես կանխատեսում, նախագուշակում, կանխադրում... ենթադրական եղանակը պետք է բնութագրել գործողության կանխադրման կամ նախատեսման վերաբերական իմաստով»²²: Ըստ այդմ՝ Է. Ադայանը արդեն ոչ թե պատմականորեն, այլ սկզբունքորեն *կ(ը)- ապառնիին* դիտում է որպես ենթադրական եղանակի ժամանակաձև: Սակայն, ինչպես նշվեց, ապառնի ժամանակն առհասարակ տիպաբանորեն բնութագրվում է այդպիսի եղանակային իմաստներով: Ուստի կարծում ենք՝ դա բավարար հիմք չէ արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնիին* որպես սահմանականից անկախ, ինքնուրույն եղանակաձև (ենթադրական եղանակ) առանձնացնելու համար: Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից առավել կարևոր է այն, թե Է. Ադայանն ինչպես է բնորոշում *կ(ը)- ապառնիին* և *ու- ապառնիին* իմաստային փոխհարաբերությունը: Նրա կարծիքով՝ *ու- ապառնիին* դեպքում «գործողությունը դիտվում է իբրև անխուսափելիորեն կատարելի... ինչպես որ **եկել եմ** նշանակում է, թե ես այժմ գործողությունը ավարտած վիճակի մեջ եմ, **գալիս եմ**՝ գործողությունը կա-

¹⁷ Տե՛ս J. Lyons, նշվ. աշխ., էջ 816-818, J. Bybee, R. Perkins, W. Pagliuca, The Evolution of Grammar. Tense, Aspect, and Modality in the Languages of the World, Chicago-London, 1994, Ch. 7, էջ 243-280, B. Heine & T. Kuteva, World Lexicon of Grammaticalization, Cambridge University Press, 2002, էջ 142-143:

¹⁸ Տե՛ս F. R. Palmer, նշվ. աշխ., էջ 124, 145 հջ.:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 105, նաև J. Lyons, նշվ. աշխ., էջ 816:

²⁰ Տե՛ս J. Bybee, R. Perkins, W. Pagliuca, նշվ. աշխ., էջ 205 հջ., 347-348:

²¹ Տե՛ս, օրինակ, Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 167-169, նույնի ժամանակակից գրական հայերեն, էջ 217-218, Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 302-304:

²² Է. Ադայան, նշվ. աշխ., էջ 373:

տարելու վիճակի մեջ եմ, այդպես էլ **գալու եմ** նշանակում է, թե ես այժմ ապագայում գործողությունը կատարելու վիճակի մեջ եմ, այսինքն՝ գործողությունը դիտվում է որպես նախորոշված, հաստատապես կատարելի գործողություն, ուստի և բնականաբար կատարելի գործողությունն էլ անխուսափելի է, մինչդեռ **կգամ** բայաձևի մեջ այդ անխուսափելիությունը չի արտահայտվում, այլ պարզապես շեշտվում է գործողության կատարելի լինելը»²³: Թեև է. Ադայանը այստեղ հարցին մոտենում է *կատարվող, կատարված և կատարելի* կերպերի աբեղյանական ըմբռնման դիրքերից, այդուհանդերձ կարծում ենք, նա ընդհանուր առմամբ ճիշտ է բնորոշում *ու- ապառնիի* իմաստը՝ գտնելով, որ տվյալ դեպքում գործողությունը դիտվում է որպես նախորոշված և անխուսափելիորեն կատարելի: Մեր կարծիքով՝ *ու- ապառնիի* իմաստով համապատասխանում է տիպաբանությունից հայտնի *սպասելի ապառնի* (expected future) ժամանակաձևին, որն արտահայտում է նախորոշված, սպասելի ապագա (ապառնի) գործողություն/եղելություն²⁴: Ոչ պակաս կարևոր է այն, որ ապառնի ժամանակաձևի առաջացման տիպաբանորեն հայտնի սկզբնաձևերի և ելակետային կառույցների մեջ նշվում է նաև *սեռականի ցուցիչ + ունենալ կամ լինել օժանդակ բայ* կառույց²⁵: Արդ, եթե հաշվի առնենք, որ նախորոշված, սպասելի գործողությունը ենթադրում է նաև գործողի նպատակադրվածություն, մտադրություն, ինչպես նաև գործողության պլանավորվածություն և դրա իրագործման անխուսափելիություն, անհրաժեշտություն, ապա կարող ենք ասել, որ Մ. Պալասանյանը և Մ. Աբեղյանը նույնպես ընդհանուր առմամբ ճիշտ են մեկնաբանել *ու- ապառնիի* իմաստը (տե՛ս վերը):

Ն. Կոզինցևան նույնպես գտնում է, որ *ու- ապառնիի* ցույց է տալիս «պլանավորված գործողություն, որն սպասելի է կամ մտադրված գործողի կողմից (a planned action which is expected or intended by the agent)»²⁶: Բայց տարօրինակ է, որ, այդպիսի բնորոշմամբ հանդերձ, նա իր բերած օրինակում *ու- ապառնիի* անգլերեն թարգմանում է պարզ ապառնի ժամանակաձևով (Վաղը ես գնալու եմ Երևան – Tomorrow I shall go to Yerevan)²⁷, այն դեպքում, երբ անգլերենը համապատասխան բայական կառույցներ ունի պլանավորված, սպասելի գործողությունն արտահայտելու համար²⁸: Ինչ վերաբերում է *կ(ը)- ապառնիին*, թեև Ն. Կոզինցևան այդ և դրա անցյալի ապառնին համարում է պայմանական եղանակի (Conditional mood) ձևեր, այդուհանդերձ *կ(ը)- ապառնիի* ար-

²³ Նույն տեղում, էջ 372:

²⁴ Տե՛ս J. Bybee, R. Perkins, W. Pagliuca, նշվ. աշխ., էջ 249-251:

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 252, 258-260: Հմմտ. նաև էջ 262:

²⁶ N. Kozintseva, Modern Eastern Armenian (Languages of the World/Materials 22), München-Newcastle: Lincom Europa, 1995, էջ 30:

²⁷ Տե՛ս նույն տեղը:

²⁸ Տե՛ս J. Bybee, R. Perkins, W. Pagliuca, նշվ. աշխ., էջ 249-251: Հմմտ. B. Comrie, Aspect: An Introduction to the Study of Verbal Aspect and Related Problems, Cambridge University Press, 1976, էջ 64-65:

տահայտած իմաստները թվարկելիս a) կետում նախնառաջ նշում է իրական ապառնիի իմաստը (the meaning of real future)²⁹: Ի դեպ, այլ լեզվաբաններ ևս *կ(ը)- ապառնին* բնորոշել են որպես *պայմանական եղանակ* կամ *պայմանական/ենթադրական եղանակ*, բայց դարձյալ նշել են, որ *կ(ը)- ապառնին* շատ հաճախ արտահայտում է ստույգ կատարելի գործողություն: Այդ առումով հատկապես ուշագրավ է Ա. Ղարիբյանի հետևյալ բնորոշումը. «Պայմանական կամ ենթադրական եղանակին պատկանող բայաձևերը ցույց են տալիս ենթակայի կատարելիք մի գործողություն կամ եղելություն, որի կատարումը **հաճախ** ստույգ է, **երբեմն** պայմանական կամ ենթադրական է»³⁰ (ընդգծումը մերն է՝ Ս. Ա.): Ըստ այդմ՝ Ա. Ղարիբյանն ընդունում է, որ *կ(ը)- ապառնին* ավելի հաճախ ստույգ, քան պայմանական/ենթադրական գործողություն/եղելություն է արտահայտում, այդուհանդերձ, նա նախընտրում է պահպանել *պայմանական կամ ենթադրական եղանակ* եզրույթը:

Կասկածից վեր է, որ *ու- ապառնին* առաջացել է *անորոշ դերբայի սեռական հոլով + եմ օժանդակ բայ* սկզբնական կապակցությունից³¹: Եվ ինչպես արդեն նշվել է, այդպես ապառնիի առաջացման դեպքեր հայտնի են նաև լեզվաբանական տիպաբանությունից: Այդուհանդերձ կարծում ենք՝ *սեռական հոլով + եմ օժանդակ բայ > սպասելի (նախորոշված) ապառնի ժամանակ* իմաստային զարգացումը որոշակի լուսաբանման կարիք է զգում, որին էլ անցնում ենք այժմ:

Սեռական և տրական հոլովները որոշակի իմաստային աղերսներ և գործառության ընդհանրություններ ունեն: Այսպես, պատկանելության իմաստը կարող է արտահայտվել թե՛ սեռականի և թե՛ տրականի միջոցով³²: Մյուս կողմից՝ սեռական հոլովը կարող է արտահայտել նաև «մեկի կամ մի բանի համար սահմանված, նախատեսված, հատկացված, պիտանի» նշանակությունը, որը բնորոշվում է որպես որակական սեռական³³. հմմտ. զինվորի սնունդ (= զինվորի համար նախատեսված սնունդ), երեխայի կաթ (= երեխայի համար նախատեսված կաթ), հնձելու խոտ (= հնձելու ենթակա խոտ կամ խոտ, որը պետք է հնձել) ևն: Ընդ որում՝ ստորոգման առկայության դեպքում «մեկի կամ մի բանի համար նախատեսված, նախորոշված» իմաստն ավելի հստակ է դրսևորվում, իսկ հատկապես անորոշ դերբայի սեռականի դեպքում այդ կառույցը ձեռք է բերում նաև անհրաժեշտության իմաստային երանգ. հմմտ. Այս

²⁹ Տե՛ս **N. Kozintseva**, նշվ. աշխ., էջ 41-42:

³⁰ **Ա. Ղարիբյան**, Հայոց լեզվի քերականության դասագիրք հինգերորդ և վեցերորդ դասարանների համար, Եր., 1950, էջ 231: Հմմտ. նաև **Հ. Տարսեղյան**, նշվ. աշխ., էջ 235-245, **J. Dum-Tragut**, Armenian: Modern Eastern Armenian, Amsterdam/Philadelphia, 2009, էջ 251-258:

³¹ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 146-164:

³² Տե՛ս **B. J. Blake**, Case, 2nd ed., Cambridge University Press, 2004, էջ 143, 149, նաև՝ **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 420, 435:

³³ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, էջ 426:

խոսքը հնձելու է (= պետք է հնձել), Հողը վարելու է, Ծառերը էտելու են, Խաղողը քաղելու է նն: Իհարկե, բերված օրինակներում իբրև սպասելի և անհրաժեշտաբար կատարելի դիտվող գործողությունը նաև կրավորական սեռի իմաստ է արտահայտում, մինչդեռ արդի արևելահայերենի *ու- սպասունին* բայասեռային նման սահմանափակում չունի: Նկատենք սակայն, որ կրավորական, կրավորակերպ չեզոք/չեզոք և ներգործական իմաստները հավասարապես համատեղելի են «սպասելի, նախորոշված, անհրաժեշտաբար կատարելի» գործողության և/կամ եղելության իմաստի հետ: Բանն այն է, որ իմաստային դերերի տեսանկյունից թե՛ գործողը և թե՛ կրողը հանդես են գալիս որպես տվյալ գործողության իրադրության մասնակիցներ: Իսկ անանցողական, միարժույթ բայերի միակ մասնակիցը, բայիմաստի բնույթով պայմանավորված, կարող է համապատասխանել անցողական բայերի գործողին կամ կրողին³⁴: Օրինակ՝ *Տղան վազեց* նախադասության մեջ *տղան* քերականական ենթական իմաստային, հասկացական մակարդակում գործող է, մինչդեռ *Տղան մահացավ*, *Տղան ցած ընկավ* նախադասությունների մեջ *տղան* ենթական իմաստային, հասկացական մակարդակում կրող է, քանի որ անանցողական *մահանալ* և *ցած ընկնել* բայերի դեպքում *տղան*՝ որպես կրող, վիճակային փոփոխության է ենթարկվում նույն կերպ, ինչպես, ասենք, *սպանել* և *աքսորել* անցողական բայերից կազմված կրավորական սեռի *սպանվել* և *աքսորվել* բայերի դեպքում. հմմտ. *Տղան սպանվեց թշնամու կողմից* և *Տղան մահացավ*, մյուս կողմից՝ *Տղան ցած ընկավ* և *Տղան աքսորվեց իր հայրենիքից*: Ըստ այդմ՝ անցողական բայերի անորոշ դերբայի սեռական հոլովը արդի արևելահայերենի *ու- սպասունիի* սկզբնաձևային կառույցում պետք է ցույց տար տվյալ գործողության իրադրությանը մասնակից դառնալու սպասելի, առկախված վիճակ (անխուսափելիության/ անհրաժեշտության իմաստային երանգով) ինչպես գործողի, այնպես էլ կրողի տեսանկյունից: Նմանապես անանցողական բայերի միակ մասնակցի պարագայում այդ նույն սկզբնաձևային կառույցը պետք է ցույց տար տվյալ գործողության/եղելության իրադրությանը մասնակից դառնալու (գործողի կամ կրողի կարգավիճակով) նույնպիսի սպասելի վիճակ: Իհարկե, այսօր, երբ անորոշ դերբայի սեռական հոլովը *ու- սպասունիի* կազմում լիովին քերականացված կախյալ դերբայի կարգավիճակ ունի, սկզբնական իմաստային դրությունը զգալիորեն մթազնած է: Այդուհանդերձ, անանցողական բայերի դեպքում դեռ կարելի է նշմարել նախկին իմաստային դրությունը: Այսպես, *Այս տունը շատ հին է և փլվելու է*, *Հիվանդի վիճակը ծանր է և մեռնելու է*, *Այս վարդերը շուտով բացվելու են*

³⁴ Իմաստային դերերի, քերականական դերերի և դրանց փոխհարաբերության մասին տե՛ս **T. Givón**, *Syntax: An Introduction*, Vol. I, Amsterdam/Philadelphia, 2001, Ch. 3, էջ 105-109, **V. Velupillai**, *An Introduction to Linguistic Typology*, Amsterdam/ Philadelphia, 2012, Ch. 9, էջ 229-236: Հմմտ. նաև՝ **S. Kittilä**, *Transitivity: Towards a Comprehensive Typology (dissertation)*, Turku, 2002, էջ 44-53, 56 հջ.:

նախադասությունների դեպքում գործ ունենք ներկայի իրադրության հանգամանքներից բխող և անխուսափելիորեն սպասելի ապագա եղելության առկախված վիճակի հետ: Այսինքն՝ մի դեպքում *տանը*, մյուս դեպքում՝ *հիվանդին*, երրորդ դեպքում՝ *վարդերին* անխուսափելիորեն վիճակված է դառնալու տվյալ եղելության մասնակիցը կրողի կարգավիճակով: Նկատենք նաև, որ անցողական բայերի (և այն անանցողականների, որոնց միակ մասնակիցը սովորաբար հանդես է գալիս գործողի կարգավիճակով, օր.՝ *գնալ, քայլել, խոսել* են) դեպքում սպասելի գործողությունը միաժամանակ նաև պլանավորված, նախատեսված, նպատակադիր գործողության իմաստ է արտահայտում: Եվ դա միանգամայն հասկանալի է, եթե հաշվի առնենք, որ տիպիկ գործողը (prototypical agent) հիմնականում բնութագրվում է հետևյալ երեք հատկանիշների միաժամանակյա առկայությամբ՝ ա) տվյալ գործողությունը նախաձեռնելու, բ) նպատակադիր գործելու և գ) գործողության ընթացքը վերահսկելու կարողությամբ³⁵:

Կուզենայինք նշել ևս մեկ կարևոր հանգամանք: «Նախորոշվածություն, սպասելիություն» և «անխուսափելիություն, անհրաժեշտություն» իմաստային բաղադրիչները առանցքային են և գրեթե միշտ առկա *ու- ապառնիի* իմաստի դեպքում: Մինչդեռ «նպատակադրվածություն» և «պլանավորվածություն» իմաստային բաղադրիչները բնորոշ են միայն անցողական բայերից (և այն անանցողականներից, որոնց միակ մասնակիցը գործողի կարգավիճակ ունի) կազմված *ու- ապառնիին*, այն էլ՝ ոչ միշտ: Անանցողական բայերի (որոնց միակ մասնակիցը կրողի կարգավիճակ ունի, օր.՝ *մահանալ, թուլանալ, ցած ընկնել, կոտրվել* են) դեպքում «նպատակադրվածություն» և «պլանավորվածություն» իմաստային տարրերի բացակայությունը ինքնին հասկանալի է, քանի որ գործ ունենք ներկա իրադրության հանգամանքներից բխող, այլ ոչ թե հատուկ պլանավորված ապագա եղելության սպասելի վիճակի հետ: Իսկ անցողական բայերի դեպքում այդ նույն իմաստային բաղադրիչները սովորաբար բացակայում են ոչ տիպիկ գործողի (հետևաբար՝ ոչ տիպիկ անցողական բայերի) պարագայում: Բանն այն է, որ արդի լեզվաբանության մեջ բայական անցողականությունը դիտվում է ոչ թե որպես բացարձակ, այլ հարաբերական, աստիճանական հասկացություն: Ըստ այդմ՝ բայական գործողությունը կարող է լինել՝ տիպիկ անցողական (prototypically transitive) և ոչ տիպիկ (մասնակիորեն) անցողական՝ կախված այն բանից, թե արդյոք գործողին և կրողին բնորոշ բոլոր հատկանիշները դրսևորվում են տվյալ գործողության դեպքում, թե՛ ոչ: Եվ ուշագրավ է, որ ոչ տիպիկ բայական անցողականության դեպքում տվյալ բայը շատ հաճախ լեզուներում քերականորեն ձևավորվում է անանցողական բայերի սկզբունքով կամ էլ, համենայն

³⁵ Հմմտ. **Å. Næss**, Prototypical Transitivity, Amsterdam/Philadelphia, 2007, Ch. 3, էջ 33-46, նաև՝ **S. Kittilä**, նշվ. աշխ., էջ 56-61:

դեպս, անցողականներից տարբեր ձևաբանական արտահայտություն է ստանում³⁶:

Նախքան վերը կատարված քննության արդյունքներն ամփոփելը կուզենայինք անդրադառնալ ևս մեկ հարցի՝ արդի արևելահայերենի պարագայում *պայմանական եղանակ* եզրույթի նպատակահարմարությանը: Ինչպես տեսանք, մի շարք հայերենագետներ այդ եզրույթը գործածում են իբրև *ենթադրական եղանակ* եզրույթին զուգահեռ կամ որպես դրա այլընտրանքային տարբերակ: Մինչդեռ Ս. Պալասանյանը *պայմանական եղանակ* ասելով նկատի ուներ միայն կ(ը)-ով անցյալի ապառնին (կգնայի, կիմանայի), իսկ կ(ը)- *ապառնին* (կգնամ, կիմանամ) նա համարում էր սահմանական եղանակի ժամանակաձև՝ *պարզ ապառնի*: Այդ երկու մոտեցումներն էլ քննադատության են ենթարկվել հայ քերականագիտության մեջ: Ս. Պալասանյանին քննադատել են քերականական ձևերի նկարագրության հարցում համաչափության սկզբունքը չպահպանելու համար. քննադատության հեղինակների կարծիքով՝ ինչպես կ(ը)- *ապառնին*, այնպես էլ դրա համապատասխան *անցյալի ապառնին* պետք է բնորոշվեն նույն սկզբունքով և, ըստ այդմ, դիտվեն որպես միևնույն եղանակի ձևեր³⁷: Իսկ որոշ լեզվաբաններ *պայմանական եղանակ* եզրույթի գործածությունը արդի արևելահայերենի դեպքում առհասարակ անընդունելի են համարել՝ նշելով երկու հանգամանք. ա) «ենթադրական եղանակին պայմանականության եղանակային իմաստ վերագրելը ճիշտ չէ, պայմանականությունը այդ եղանակի շարահյուսական մասնավոր իմաստն է, որը կապված է շարահյուսական որոշակի կառուցվածքի հետ»³⁸, բ) «... բառաձևի ձևաբանական կարգը պետք է որոշել՝ ելնելով բուն բառաձևից և ոչ թե այն կապակցություններից, որոնցում նա գործածվելով կարող է այլևայլ երանգներ ստանալ»³⁹:

Սակայն լեզվաբանական տիպաբանությունից հայտնի է, որ քերականական ձևերի իմաստային զարգացումը ոչ միշտ է տեղի ունենում համաչափության սկզբունքով. ըստ այդմ՝ սկզբնապես գործառությանին տեսանկյունից համաչափական (symmetric) հարաբերության մեջ գտնվող ներկայի և անցյալի բայաձևերի հետագա իմաստային զարգացումները կարող են և չհամընկնել, ինչպես եղել է, օրինակ, անգլ. *will + ինֆինիտիվ* ապառնի (future) և *would + ինֆինիտիվ* անցյալի ապառնի (future in the past) ձևերի դեպքում: Հին անգլերենում *would*-ը *will* «կամենալ, ցանկանալ» բայի անցյալի ձևն է, հետևաբար սկզբնապես երկու կառույցներն էլ համաչափական ձևաիմաստային փոխհա-

³⁶ Տե՛ս **P. J. Hopper and S. A. Thompson**, Transitivity in Grammar and Discourse // Language, Vol. 56, N 2, (Jun., 1980), էջ 251-299, **S. Kittilä**, նշվ. աշխ., հատկապես՝ Ch. 3, Ch. 4, էջ 44-181, նաև՝ **Å. Næss**, Prototypical Transitivity, Amsterdam/Philadelphia, 2007:

³⁷ Տե՛ս **Հ. Բարսեղյան**, նշվ. աշխ., էջ 52-53:

³⁸ **Բ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 373:

³⁹ **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 168:

րաբերության մեջ են գտնվել: Սակայն այդ երկու կառույցների հետագա զարգացման ընթացքում սկզբնական իմաստագործառնության զուգահեռականությունը զգալիորեն խախտվել է, այնպես որ would-ով կառույցը այժմ հանդես է գալիս նաև որպես անցյալի սովորության (habitual) կերպի ձև, որը բնորոշ չէ will-ով կառույցին: Իսկ եղանակային իմաստով գործածվելիս would-ով կառույցը այժմ ընդհանրապես ժամանակային իմաստ չի արտահայտում, այլ գործառում է որպես անիրական պայմանի բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասության եղանակային ցուցիչ⁴⁰: Մյուս կողմից որոշ եղանակաձևերի հիմնական իմաստագործառնության բովանդակությունը հաճախ անբաժանելիորեն կապված է որոշակի շարահյուսական կառույց(ներ)ի հետ, և ըստ այդմ էլ բնորոշվում է նրանց ձևաբանական կարգավիճակը: Այսպես, Մ. Հասպելմաթի կարծիքով, բավարար հիմք կա ենթադրելու, որ ստորադասական եղանակի (Subjunctive mood) սկզբնական և հիմնական իմաստագործառնության տիրույթը ոչ հաստատական, ոչ իրագործված ստորադասական նախադասություններն (non-assertive/non-realized subordinate clauses) են, իսկ գլխավոր նախադասություններում ստորադասական եղանակաձևի գործածությունը հետագա գործառնության ընդլայնման արդյունք է⁴¹: Այդ տեսանկյունից *պայմանական եղանակ* եզրույթի գոյությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշակի բայաձևեր գործառում են պայմանական կառույցներում՝ երկրորդական և/կամ գլխավոր նախադասության կազմում՝ ցույց տալով գլխավոր նախադասությամբ արտահայտվող գործողության/եղելության պայմանային կախվածությունը երկրորդականի իմաստից⁴²: Իհարկե, պայմանական կառույցի թե՛ գլխավոր և թե՛ երկրորդական նախադասություններում տիպաբանորեն կարող են գործառել տարբեր եղանակաժամանակային ձևեր⁴³: Սակայն, որպես կանոն, առանձին պայմանական եղանակ տարբերակելու համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ մի շարք լեզուներում (ֆիններեն, հունգարերեն, թուրքերեն ևն) որոշակի բայաձևեր գերազանցապես կամ հիմնականում հանդես են գալիս պայմանական կառույցներում, թեև, իհարկե, *պայմանականի* այդ նույն ձևերը նշված լեզուներում կարող են արտահայտել նաև ստորադասական/ըղձական (subjunctive/optative) եղանակին բնորոշ որոշակի իմաստ՝ ցանկություն, իղձ⁴⁴: Եվ

⁴⁰ Տե՛ս J. Bybee, R. Perkins, W. Pagliuca, նշվ. աշխ., էջ 156-157:

⁴¹ Տե՛ս M. Haspelmath, The Semantic Development of Old Presents. New Futures and Subjunctives without Grammaticalization // Diachronica, 15:1, 1998, էջ 35, սողաստակի ծան. 9:

⁴² Հմմտ. A. Timberlake, Aspect, tense, mood // T. Shopen (ed.), Language Typology and Syntactic Description, 2nd ed., Vol. III: Grammatical Categories and the Lexicon, Cambridge University Press, 2007, Ch. 5, էջ 326:

⁴³ Տե՛ս B. C. Храковский (ответ. ред.), Типология условных конструкций, Санкт-Петербург, 1998, նաև A. Timberlake, նշվ. աշխ., էջ 321-330:

⁴⁴ Հմմտ., օրինակ, F. Karlsson, Finnish: An Essential Grammar, London and New York, 1999, էջ 162-165, C. Rounds, Hungarian: An Essential Grammar, London and New York, 2001,

Եթե հաշվի առնենք, որ տիպաբանորեն ստորադասականի/ըղձականի եղանակային ձևերը ևս կարող են գործառել որպես պայմանական կառույցների երկրորդական և/կամ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալ⁴⁵, ապա կարելի է ենթադրել, որ *պայմանական եղանակը* տարածմանակյա տեսանկյունից տվյալ դեպքում ոչ այլ ինչ է, քան երբեմնի նույն ստորադասական/ըղձական եղանակը, որը հետագա իմաստագործառության տեղաշարժի հետևանքով տիրապետող է դարձել պայմանական կառույցներում, որով էլ հենց պայմանավորված է նրա *պայմանական եղանակ* (Conditional mood) անվանումը: Ըստ այդմ՝ արդի արևելահայերենի *կ(ը)*-ով օժտված անցյալի ապառնիի եղանակային կարգավիճակի մասին վերջնական խոսք ասելու համար հարկավոր է ձեռքի տակ ունենալ այդ բայաձևի գործառույթներից յուրաքանչյուրի հաճախագործածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ արդի արևելահայերենի կորպուսային ուսումնասիրության հիման վրա (որը դեռևս արված չէ): Ինչ վերաբերում է *կ(ը)*- *ապառնիին*, վերջինիս կարգավիճակը որպես սահմանական եղանակի պարզ ապառնի ժամանակաձև, ինչպես տեսանք, որևէ առարկություն չի հարուցում:

Այսպիսով՝ վերը կատարված քննությամբ հանգում ենք այն եզրակացության, որ արդի արևելահայերենի թե՛ *ու- ապառնիին* և թե՛ *կ(ը)*- *ապառնիին* ընդհանուրլեզվաբանական և տիպաբանական տեսանկյունից պետք է դիտել որպես սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևեր՝ դրանցից առաջինը բնորոշելով որպես *սպասելի կամ նախորոշված ապառնի*, իսկ երկրորդը՝ *պարզ ապառնի*: Ըստ այդմ՝ *ու- ապառնիին* ցույց է տալիս այնպիսի ապագա (ապառնի) գործողություն/եղելություն, որը խոսելու պահին նախորոշված, սպասելի վիճակում է գտնվում՝ ենթադրելով դրա իրագործման որոշակի անխուսափելիություն: Այդ հիմնական և անփոփոխիմաստից բացի, *ու- ապառնիին*, բայիմաստով և տվյալ բայի անցողականության աստիճանով պայմանավորված, կարող է ներառել նաև «գործողի նպատակադրվածություն» և «գործողության պլանավորվածություն» իմաստային բաղադրիչները: Իսկ *կ(ը)*- *ապառնիին* պարզապես ցույց է տալիս կատարելի ապագա գործողություն/եղելություն, որի իմաստային դաշտն անհրաժեշտաբար ներառում է թե՛ հավաստիության և թե՛ ենթադրականության, հավանականության իմաստային տարրեր, ինչպես և մյուս լեզուների սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևը: Ընդ որում՝ «հավաստիություն» և «ենթադրականություն» իմաստային բաղադրիչների հարաբերակցության աստիճանը *կ(ը)*- *ապառնիի* իմաստային տիրություն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, բայիմաստով և խոսքա-

Էջ 48-49, J. Kornfilt, Turkish, London and New York, 1997, էջ 366-369, A. Göksel and C. Kerkelke, Turkish: A Comprehensive Grammar, London and New York, 2005, էջ 419 հջ., 312:

⁴⁵ Հմմտ. Храковский В. С., նշվ. աշխ., 1998:

յին համատեքստով պայմանավորված, կարող է տարբեր լինել՝ մեկի կամ մյուսի գերակշռությամբ: Ինչ վերաբերում է կ(ը)-ով օժտված անցյալի ձևերին (անցյալի ապառնիին), վերջինիս եղանակային կարգավիճակը պետք է բնորոշվի կ(ը)- ապառնիից անկախ՝ արդի արևելահայերենի լեզվական կորպուսում կ(ը)-ով օժտված անցյալի ձևերի հիմնական և առավել հաճախադեպ իմաստային գործառույթի հիման վրա:

САРГИС АВЕТЯН – К вопросу о семантико-функциональном взаимоотноении между կ(ը)- будущим временем и -ուի будущим временем в современном восточноармянском языке. – Аргументируется, что попытки охарактеризовать կ(ը)- будущее время (կգնամ, կխոսեմ) в современном восточноармянском языке как принадлежащее к так называемому предположительному (гипотетическому) наклонению (*ենթադրական եղանակ*) или условному наклонению (*պայմանական եղանակ*) вызывают возражения с общелингвистической и типологической точки зрения. Наиболее важны следующие соображения: 1) как было указано рядом ученых, будущее время, в отличие от настоящего времени и прошедшего времени, никогда не является чисто временной категорией; оно является частично временной и частично модальной. Любопытно, что показатели будущего времени диахронически часто возникают из элементов, которые первоначально использовались для выражения различных модальных значений. С другой стороны, формы будущего времени, как правило, выполняют также модальные функции; 2) կ(ը)- будущее время в современном восточноармянском языке не отличается каким-либо существенным образом от будущего времени изъявительного наклонения в других языках с семантико-функциональной точки зрения; 3) употребление կ(ը)- будущего времени в условных конструкциях не является его основной функцией, как это обычно бывает с типичным условным наклонением. Что касается семантико-функционального содержания -ուи будущего (գնալու եմ, խոսելու եմ) в современном восточноармянском языке, оно соответствует типологической характеристике ожидаемого будущего (или предопределенного будущего) времени и, соответственно, должно рассматриваться наравне с последним. Таким образом, семантико-функциональное взаимоотноение между կ(ը)- будущим временем и -ուи будущим временем следует рассматривать как контраст между простым будущим временем и ожидаемым будущим (или предопределенным будущим) временем соответственно.

Ключевые слова: будущее время, модальные значения, современный восточноармянский язык, կ(ը)- будущее время, -ուи будущее время, ожидаемое будущее (предопределенное будущее) время, предположительное (гипотетическое) наклонение, будущее время изъявительного наклонения

SARGIS AVETYAN – On the Question of the Semantic-Functional Relationship between the կ(ը)- Future and the -ուի Future in Modern Eastern Armenian. – It is argued that attempts at characterizing the կ(ը)- future (կգնամ, կխոսեմ) in Modern Eastern Armenian as pertaining to the so-called Hypothetical mood (*ենթադրական եղանակ*) or the Conditional mood (*պայմանական եղանակ*) are objectionable from the General linguistic and typological perspective. The following considerations are of great importance: 1) as pointed out by a number of scholars, the future tense, in distinction from the present tense and the past tense, is never a purely

temporal category; it is partly temporal and partly modal. Interestingly enough, future tense markers often arise diachronically from elements which initially were used to express various modal meanings. On the other hand, future tense forms tend to serve modal functions as well; 2) the *ի(ը)-future* in Modern Eastern Armenian does not differ in any significant way from the future indicative in other languages from the semantic-functional viewpoint; 3) the use of the *ի(ը)-future* in conditional constructions is not its primary function as is usually the case with the typical Conditional mood. As to the semantic-functional content of the *-ու future* (գնալու են, խոսելու են) in Modern Eastern Armenian, it corresponds to the typological characterization of the expected future (or predestined future), and, accordingly, should be viewed on a par with the latter. Therefore, the semantic-functional relationship between the *ի(ը)-future* and the *-ու future* should be regarded as a contrast between the simple future tense and the expected future (or predestined future) tense, respectively.

Key Words: *the future tense, modal meanings, Modern Eastern Armenian, ի(ը)-future, -ու future, expected future (predestined future), Hypothetical mood, future indicative*

«ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅՈՎ ՀԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԿԱՌՈՒՅՑԸ
ԳՐԱԲԱՐՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածում գրաբարի երկերից վերցված բազմաթիվ օրինակների միջոցով փորձ է արվել բացահայտելու և դիտարկելու «անցյալ դերբայ+խոնարհված բայաձև» կառույցի ձևաբանական և ոճական կողմերը: Գրաբարի քերականությունների մեջ այն հաճախ ներկայացվում է *բայական հավելադրությունների* շարքում, և դա ընդունելի համարելով՝ բայական այս կառույցը հեղինակն անվանել է «անցյալ դերբայով հավելադրություն» (ԱԴՀ): Վերջինս երկանդամ բայական կառույց է՝ կազմված «անցյալ դերբայ + խոնարհված բայաձև» կաղապարով, որը շեշտված արտահայտում է գործողության ընթացանություն, անընդհատություն, գործածվում է որպես նախադասության մեկ անդամ և իբրև ձևային-ոճական կառույց լայնորեն կիրառված է գրաբար երկերում՝ անկախ հեղինակից ու ժանրից:

«Անցյալ դերբայով հավելադրություն» կառույցը ոճական պաճուճանք և երբեմն ճոխություն է հաղորդում գրաբար տեքստերին: Եվ հեղինակի կարծիքով, բնագրերը աշխարհաբար թարգմանելիս, որպեսզի ոճական այդ կողմը կորուստ չունենա, առավել նպատակահարմար է պահպանել ԱԴՀ կազմի մեջ եղած բայերը՝ դրանք հնարավորինս համապատասխանեցնելով դիմավոր բայի ժամանակաձևին:

Բանալի բառեր – *գրաբար, անցյալ դերբայ, հավելադրություն, կառույց, սահմանում, ժամանակաձև, ոճական հնարանք*

Հայերենի դասական շրջանի տեքստերն ընթերցելիս աչքի է զարնում անցյալ դերբայով կազմված՝ **«անցյալ դերբայ+խոնարհված բայաձև»** կառույցների առատությունը (*յարուցեալ եկն, անուանեալ կոչէ, երթեալ բնակէ, կարգեալ սահմանեցեր, քննեալ դատիս*): Գրաբարին բնորոշ այդ կառույցի խիստ տարածվածությունը հաշվի առնելով՝ հարկ համարեցինք մի փոքր մանրամասն քննել այն: Գրաբարի քերականությունների մեջ այն հաճախ ներկայացվում է *բայական հավելադրությունների* շարքում, և դա ընդունելի համարելով՝ բայական այս կառույցը անվանում ենք **«անցյալ դերբայով հավելադրություն»** (ԱԴՀ)¹:

ԱԴՀ կառույցը նկարագրված է հայագիտության մեջ, սակայն խիստ համառոտ: Արսեն Բագրատունին իր քերականության մեջ այն

¹ Հոդվածում ԱԴՀ օրինակները ներկայացված են 5-րդ դարի երկերից և Գր. Նարեկացու «Մատեն»-ից:

հիշատակում է «անցյալ դերբայ + էական բայ» կառույցի շարքում՝ *յո՞ր-դեզիբոս եղեալ լինիցին, սիրեալ լեալ կաս՞*: Աշոտ Աբրահամյանը գրաբարի անցյալ դերբայի ձևաբանական տարբեր գործածությունների շարքում մեր մասնանշած կառույցը մեկ նախադասությամբ նկարագրում է այսպես. «...մեկից ավելի բայ-ստորոգյալ, բայց նույն ենթական ունեցող նախադասություններում, երբ բայերն արտահայտված են լինում միևնույն ժամանակով և եղանակով, նրանցից մեկը դրվում է եղանակային ձևով, իսկ մյուսները արտահայտվում են անցյալ դերբայով»³, օրինակ՝ *փախուցեալ երթայցէ, դիմեալ գայր*: Ավելի ուշ Ա. Աբրահամյանը «Գրաբարի ձեռնարկում» այս կառույցի մասին խոսում է գրաբարի ռճական առանձնահատկությունների բաժնում որպես «նույնանիշ կամ հոմանիշ բառերի բայական ավելադրություն»: «Բայի դիմավոր ձևի վրա դրվում է հոմանիշ բայը՝ անցյալ դերբայի ձևով, որը գրվածքին բնորոշ ռճ է տալիս, ինչպես և ընդգծում, սաստկացնում է բայ-ստորոգյալի իմաստը, ուստի և հաղորդվող միտքն ավելի որոշակի է դարձնում, բայց երբեմն էլ չի ազդում իմաստի վրա և դրվում է իբրև զարդարանք»⁴, օրինակ՝ *բաժանեալ բաշխէին, քանդեալ բրէին, ցանեալ ցրուեցան, անուանեալ կոչի*: Նույն կառույցը բնութագրելիս Պավել Շարաբխանյանը գրում է. «Տարածված է անցյալ դերբայի գործածությունը դիմավոր բայից (կամ բայերից) առաջ, երբ այդ դերբայի և բայի ենթական նույնն է: Այս դեպքում անցյալ դերբայն աշխարհաբար թարգմանվում է հաջորդ դիմավոր բայի դեմքով ու ժամանակով կամ հարակատար դերբայով և կամ անորոշ դերբայի գործիականով, օրինակներ՝ *յարուցեալ եկն – վեր կացավ եկավ, գնացեալ յարեցաւ – գնաց միացավ, եկեալ ցուցին – եկան ցույց տվին* և այլն»⁵:

Իբրև լեզվական կառույց՝ ի՞նչ է ԱԴՀ-ն: Ձևաբանորեն ճիշտ բնութագրելու համար հարկ է ԱԴՀ-ն համեմատել իրենց կազմում անցյալ դերբայ ունեցող համադրելի այլ կառույցների, առաջին հերթին՝ դերբայական դարձվածի և բաղադրյալ ժամանակաձևերի հետ:

1. Առաջին հայացքից ԱԴՀ-ն կարող է նույնացվել դերբայական դարձվածներին: Դերբայական դարձվածը սովորաբար սահմանվում է որպես բառակապակցություն, որի ա) գերադաս կամ առանցքային անդամը արտահայտված է դերբայով, բ) դերբայն ունենում է լրացումներ, գ) նախադասության մեկ ծավալուն անդամ է⁶: Փորձենք այս երեք հատկանիշները կետ առ կետ համեմատել ԱԴՀ-ի հետ:

ա) ԱԴՀ-ի գերադաս անդամը դերբայը չէ, քանի որ այն ձևաբանա-

² Տե՛ս Արսէն Կ. **Բագրատունի**, Քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 201-202:

³ **Աշոտ Աբրահամյան**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 352:

⁴ **Աշոտ Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 393:

⁵ **Պավել Շարաբխանյան**, Գրաբարի դասընթաց, Եր., 1974, էջ 240:

⁶ Տե՛ս **Հրանտ Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 185-188:

կան և իմաստային առումներով ձուլված է խոնարհված բային, ուստի գերադաս անդամ մատնանշել տեղին չէ, մանավանդ այն դեպքերում, երբ անցյալ դերբայն ընդգծված դիմորոշ գործածություն ունի, որ առհասարակ գրաբարի համար սովորական իրողություն է: Օրինակ՝ *էկեալ բնակեցաւ* կապակցության մեջ դժվար է մատնանշել, թե որն է գերադաս անդամը, քանզի *էկեալ բնակեցաւ / էկավ բնակվեց* համազոր բայ-անդամներ են:

բ) Դերբայն ԱՂՀ-ում առանձին լրացում(ներ) չունի և ստորոգյալի վրա դրվում է ուղղակի՝ առանց կողմնակի լրացումների: Այն դեպքերում, երբ անցյալ դերբայն ու խոնարհված բայաձևն ընդմիջարկվել են այլևայլ բայական անդամներով, ինչպես՝ *ընթացեալք ի քաղաքն պատմէին, իջեալ յերկնից երգեն* և այլն, արդեն գործ ունենք դերբայական դարձվածների հետ, քանի որ «դերբայ+կողմնակի լրացում»-ը (բերված օրինակներում՝ *ընթացեալք ի քաղաքն, իջեալ յերկնից*) որպես մեկ անդամ լրացնում են բային: Դերբայական դարձվածներ են պարունակում Ագաթանգեղոսից վերցրած հետևյալ հատվածները. «*Խառնակեալ թաթաւեալ խնամութեամբ ընդ նոսա՝ առին ուսան զանաստուածպաշտութիւնս*», «*Տեղեկացեալ ի դպրացն՝ հասանէին*», որոնցում անցյալ դերբայի ու ստորոգյալի միջև ընկած են այլ անդամներ՝ *խնամութեամբ, ընդ նոսին, ի դպրաց*: Եթե չլինեին այդ անդամները, ապա գործ կունենայինք ԱՂՀ-ի հետ (*խառնակեալ առին, տեղեկացեալ հասանէին*): Այս տեսակետից կարելի է պնդել, որ ԱՂՀ-ն դերբայական դարձվածի մի տեսակ է՝ առանց կողմնակի անդամների: Մակայն, որպես լեզվական կառույց, մի բան է դերբայական դարձվածը (*զերծեալ՝ զիս ապրեցուցե՛ս, բարեգործեալ՝ քեւ կենդանասցի*), այլ բան՝ նույնը առանց կողմնակի անդամի (*զերծեալ ապրեցուցես, բարեգործեալ կենդանասցի*). վերջինը քերականական մեկ ամբողջության մեջ իմաստի ձուլում ստացած ԱՂՀ-ներ են:

գ) ԱՂՀ-ն ծավալուն չէ և ունի միայն երկու անդամ: Այն դերբայական դարձվածի նման չի դառնում նախադասության անդամ, գործածվում է ստորոգյալի պաշտոնով որպես մեկ ամբողջություն: Երբեմն միայն, կախված բայի արժույթից, կարելի է խոսել անցյալ դերբայի պարագայական իմաստի մասին:

2. ԱՂՀ կառույցը ձևաբանորեն որոշակի նմանություն ունի գրաբարի բաղադրյալ ժամանակաձևների հետ այնքանով, որ անցյալ դերբայի հետ դրված խոնարհված բայաձևը բայական հանգույցի դեր է ստանձնում, ինչպես գրաբարում բաղադրյալ ժամանակաձևերում հանգույցի դեր են ստանձնում *եւ, կամ, լինիմ, ունիմ* բայերը՝ *կերակրեալ լինիմ, նշանակեալ ունին, պապանձեալ կայր* և այլն: Մակայն բաղադրյալ ժամանակաձևներից տարբերությունն ակնհայտ է նրանով, որ ԱՂՀ-ի կազմում խոնարհված բայը նյութական իմաստ ունի և ոչ թե սոսկ ձևանիշ բառ է, հմնտ. *էկեալ է – էկեալ տեսանէ, հետեւեալ էաք –*

հետևեալ մտին, նորոգեալ իցէ – նորոգեալ կենդանացոյց և այլն:

3. ԱՂՀ-ն անցյալ դերբայով որոշիչ-որոշյալ կապակցություն չէ, սա ակնհայտ է, քանի որ նրանում անցյալ դերբայը հավելադրված է բայի և ոչ թե գոյականի վրա, ոչ թե *յարուցեալ Յիսուս, մոլորեալ ոչխար*, այլ *յարուցեալ եկն, մոլորեալ մուծանէ*: Որոշչի պաշտոնով անցյալ դերբայը գրաբարում հասկացվում և թարգմանվում է հարակատար դերբայով *յարուցեալ Յիսուս – հարություն առած Հիսուս*, իսկ ԱՂՀ-ի մեջ անցյալ դերբայը թարգմանվում է գերազանցապես անցյալ ժամանակով *յարուցեալ եկն – վեր կացավ եկավ*:

4. ԱՂՀ-ների բնութագրման ճիշտ տեղը, ըստ մեզ, իմաստային ուղորտն է: Սրանք բայական կառույցներ են, որ ստեղծվում են բայի ընթացայնության իմաստը շեշտելու, գործողությունը մեկ ամբողջության մեջ դնելու համար: Իմաստային այդ կողմը նկատի ունի Ա. Աբրահամյանը, երբ գրում է. «Շատ սովորական է հատկապես **տեղափոխություն ցույց տվող բայերի** (ընդգծումը՝ Ն. Պ.) գործածությունը, օրինակ *դիմեալ եկեալ հասալ էին, ելեալ գնաց, փախուցեալ երթայցէ*»⁷ և այլն: Իրոք, խիստ առատ են շարժում ցույց տվող ԱՂՀ-ները, այնքան, որ կարծես ի սկզբանե ստեղծված լինեն գործողության ընթացքը, նրա փուլերը շեշտելու համար, ինչպես՝ *երթեալ բնակէ, բարձեալ բերէ, անկեալ թաւալէին, ընթացեալ հասին, եկեալ մատուցէ, հետևեալ ստացան* և այլն:

Նույն իմաստն են արտահայտում գուգադրական բայերը, բայց օրինակ՝ *եկին ցուցին* նշանակում է գործողության հերթականություն, որ կարելի է հասկանալ «նախ եկան, ապա ցույց տվեցին», մինչդեռ *եկեալ ցուցին*-ը որպես մեկ՝ ամբողջական ու չգատվող գործողություն:

Ոճական-իմաստային այդ կողմը առավել շեշտված ու տեսանելի է հատկապես այն ձևերում, որտեղ գուգադիր կիրառվում են հոմանիշ կամ իմաստով մոտ բայեր՝ *հայեցեալ տեսին, եկեալ եկաց, յարուցեալ գնաց, բարկացեալ սաստեաց, մտեալ բազմեցաւ*, օրինակներ «Նարեկից»՝ *ճզգրտեալ թարգմանեաց, հոսեալ բղիսեցեր, վանեալ վիրաւորեաց, պապանձեալ կարկիս, պաշարեալ տիրեաց, ծանեալ գիտացից* և այլն:

ԱՂՀ ոճական կողմը շեշտադրելիս պետք է ասել, որ այն մոտ է *աստիճանավորում*⁸, *հավելում*, *կրկնապատկություն* ոճական իրողություններին, սակայն նույնական չէ դրանց այն տեսքով, ինչպես նկարագրված է հայերենագիտության մեջ⁹:

Ամփոփելով պետք է սահմանել, որ **ԱՂՀ-ն երկանդամ բայական կառույց է՝ կազմված «անցյալ դերբայ + խոնարհված բայաձև» կադապա-**

⁷ Աշոտ Աբրահամյան, Հայերենի դերբայները..., էջ 352:

⁸ Նման համեմատություն կա նաև «Հայերենագիտական բառարան»-ում, էջ 357, «Հավելադրություն կամ Ավելագրություն» բառահոդվածի տակ:

⁹ Այդ մասին տե՛ս, օրինակ, Պողոս Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հտ. 2, Եր., 1991, էջ 102, 105, 118 և այլ:

րով, որը շեշտված արտահայտում է գործողության ընթացայնություն, անընդհատություն, գործածվում է որպես նախադասության մեկ անդամ և իբրև ձևային-ճակատային կառույց՝ լայնորեն կիրառված է գրաբար երկերում՝ անկախ հեղինակից ու ժանրից:

Մահմանումից հետևում է, որ ԱԴՀ կազմում անցյալ դերբայը նախորդում է դիմավոր բային: Հետադաս անցյալ դերբայի գործածությունները եզակի են՝ *տեսանենք լցեալ կատարեալ, նստէր զգեցեալ եւ զգաստացեալ, յայտնեսցի ազդեալ*: Քիչ են հանդիպում անցյալ դերբայի փոխարեն անորոշ դերբայի հոլովված ձևերով կազմված օրինակները, ինչպես՝ *կանխելով* (փոխ. կանխեալ) *վերօրհնենք, նորոգելով տաճարացուցեր, խաչակից առնելով պսակեցեր, եղանակելով երգեն*: ԱԴՀ ճակատային կառուցումն է բազմակի անցյալ դերբայով կազմությունը, ինչպես՝ *դարձեալ անցեալ եկեալ լինէր յաշխարհ իւր, էլեալ եւ իջեալ հոսէր ընկենտյր, դէմ եղեալ տարադէմ գնացեալ փախստեալ լինէին, ելեալ աճեցեալ տայր պտուղ, փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին, զգեցեալ եւ զգաստացեալ նստէր* և այլն:

ԱԴՀ անդամ բայերը գերազանցապես հոմանիշ են կամ իմաստով մոտ, օրինակ՝ *բարկացեալ սաստեաց, մատուցեալ կալան, հայեցեալ տեսին, փակեալ պահեաք, սպասեալ մնային* և այլն: Հետաքրքիր է *կանգնեալ նստալ* (Կորյուն, ԻԶ) հականիշ բառերի բացառիկ գործածությունը, որ Մանուկ Աբեղյանը թարգմանել է «վեր կացավ նստեց», Ստ. Բանեանը՝ «ելաւ ու ուղիղ նստաւ»¹⁰ տարբերակներով:

Առանձին մի կիրառություն են *դարձեալ* դերբայով կազմված ԱԴՀ-ները, որոնցում *դարձեալ*-ը մակբայի վերածվելու ընթացքի մեջ է և կիրառվում է թե՛ նյութական բայի (=վերադառնալ), թե՛ մակբայի (=կրկին) իմաստներով: *Եթող գնոսա, դարձեալ եմուտ* (վերադարձավ մտալ) *ի նաւ: Դարձեալ* (կրկին) *եղ ձեռս ի վերայ աչաց: Եւ նա դարձեալ* (կրկին) *ուրացաւ: Կարգիմ եւ դարձեալ* (=կրկին) *սասանիմ* (Նարեկ):

Անցյալ դերբայի հետ ի՞նչ ժամանակաձևեր են կիրառվում: ԱԴՀ կազմում դիմավոր բայաձևի դերում գործածվում են բոլոր ժամանակաձևերը, այդ թվում՝ պատճառականով կազմված, որևէ սահմանափակում նկատելի չէ: Ընդհանուր առմամբ հնարավոր է խոսել միայն ժամանակաձևերի ժանրային բաշխվածության մասին, օրինակ՝ պատմողական երկերում գերակշռում են անցյալի ձևերը, շարականներում՝ ապառնիի տարբեր ձևերը: Ստորև բերվող օրինակները քաղել ենք 5-րդ դարի տարբեր երկերից:

Անցյալի կատարյալ ձևերով կազմված ԱԴՀ կառույցներ. *աւերեալ վանեցեր, բազմեալ տեսաք, բոցակիզեալ շիջոյց, երեւեալ պայծառացան, զարհուրեալ հիացայ, ընթացեալ հասին, լուսազարդեալ երեւեցար, խոնարհեալ իջեր, կորզեալ արտաքսեցեր, հանեալ արտաքսե-*

¹⁰ «Վարք Մեսրոպբայ հարազատ բնագրան Կորեան եւ թարգմանութիւն ի յաշխարհիկ բարբառ», յօրինեաց Ստեփան 3. Բանեան, Մէլչուսեց, 1951:

ցոյց, հետեւեալ մտին, հետեւեալ ստացան, հիացեալ սասանեցան, հիւժեալք մաշեցին, հրդեհեալ բոցակիզեաց, նորոգեալ կենդանացոյց, պատարագեալ հեղեր, սարսեալ հալածեցաւ, քաղցրացեալ իջուցին և այլն:

Տարածվածությամբ հաջորդը, թեև զգալիորեն զիջելով անցյալ կատարյալին, ապառնիի ձևերով ԱԴՀ-ներն են. *փախուցեալ երթայցէ, ամուսնացեալ մերձենայցէ, թելադրեալ կարծեցուցանիցէ, եկեալ յածիցի, ամբարշտացեալ տեսանիցեն, պատերազմեալ յաղթիցէ, կրեալ ըմբերանեացի, պարտաւորեալ գտանիցի, աղաւաղեալ կամակորիցէ, ընտելուցեալ համբուրեցուցանէ, հասեալ տեսանիցէ, հպարտացեալ արհամարհիցէ, ցածուցեալ նստուցանէ* և այլն:

Հանդիպում են անցյալ անկատար ժամանակաձևով կառույցներ. *եկեալ կատարիւր, ենթադրեալ կորզեր, խոնարհեալ տեսանէր, պարունակեալ պահէին, պարտեալ ամաչէր, վերանստեալ հանգչէիր, ստուգեալ գիտէր, եկեալ ասէր, անկեալ աղաչէր* և այլն:

Ներկայով կազմութիւնները զգալիորեն քիչ են՝ *բարձեալ բերէ, խոտորեալ թարգմանի, մատուցեալ ողորթէ, էլեալ սահմանէ, մոլորեալ մուծանէ, ուռուցեալ յառնեն, մեռեալ կործանի* և այլն:

Այլ ժամանակաձևերը դիպվածային կիրառություն ունեն՝ *հետեւեալ ժամանեա՛, պարգեւեալ շնորհեա՛*:

Ինչպէ՞ս պետք է թարգմանել ԱԴՀ կազմութիւնները: ԱԴՀ-ի իմաստը հստակ ուրվագծվում է գրաբարից թարգմանելիս: Հետևելու համար, թե ինչ կերպ կարելի է վարվել ԱԴՀ-ն աշխարհաբար մատուցելիս, դիտարկել ենք գրաբար երկերի՝ անվանի հայագետների թարգմանությունները:

Մ. Խորենացու Պատմությունը թարգմանելիս Ստ. Մալխասյանը վարվել է մի քանի կերպ¹¹:

ա) Որոշ դեպքերում հարազատորեն թողել է բնագրի կրկնակ բայերը՝ այն դարձնելով դերբայական դարձված.

ի նոյն մատենէ *սկսեալ ասացից* – նույն մատյանից *սկսելով՝ կասեմ հաւաքեալ փոխեցին* ի յոյն լեզու – *գտնելով փոխադրեցին*

Զորոց մեք *սկսեալ ճառեսցուք* – սրանցից *սկսելով մենք կճառենք հարստացեալ տիրէ* ի վերայ երկոցունցն – *բռնանալով տիրում* է մյուս երկուսի վրա

վերջոտնեալ էլանէր – *հետ քաշվելով սկսեց բարձրանալ*:

բ) Անցյալ դերբայը դրել է դիմավոր բայաձևի ժամանակով.

Երթեալ բնակէ ի լեռնոտին միում – *գնում բնակվում* է մի լեռան ստորոտում

ի նքն *երթեալ դադարէ* – ի նքը *գնում դադարում* է

ջեռուցեալ մեղկեա՛ զցրտութիւն – *տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ* զուրտ սառնությունը:

¹¹ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Ստ. Մալխասյանցի, Եր., 1990:

զ) ԱՂՀ երկու անդամները ամփոփել է մեկ բայի մեջ.

հաստատեալ կարգեցին – հաստատեցին

հեղեղաւ **ջնջեալ մաքրին** – հեղեղով **մաքրվում են**

անուանեալ կարդային Դիւցընկէց – **ասում էին** Դիւցընկէց

յառաջագոյն ցրուելոցն **դադարեալ բնակէին** – **սպրում էին** առաջուց ցրվածներից

երթեալ հասանիցենք ի հեթանոսականսն զրուցատրութիւնս – **կհասնենք** հեթանոսական զրույցներին:

դ) ԱՂՀ իմաստը արտահայտել է շարահյուսական այլ կառույցով.

ի բերանոյ Աստուծոյ **առեալ ասի** պատուէր – Աստծո բերանից պատվէր **ստացավ**,

համոզեալ դադարեցուցանէ զաղմուկն – **համոզեց, որ** խռովությունը **դադարեցնեն**

խնամ տարեալ հոգացայ ամենայնի – ամեն բան **խնամք և հոգ տարաւ**

աճապարեալ հաւաքէ զորդիս իւր եւ զթոռունս – **շտապով հաւաքում է** իր որդիներին և թոռներին և այլն:

Դժվար է Մտ. Մալխասյանի թարգմանության մեջ այս ենթատեսակներից որևէ մեկի գերակշռությունը մատնանշել, բանասերն այդ կառույցները կիրառում է ըստ հարկի, իմաստի թելադրանքով:

Մեկ այլ Ագաթանգեղոսի Պատմության Ա. Տեր-Ղևոնդյանի աշխարհաբար թարգմանության¹² մեջ ևս օրինաչափություն չի նկատվում, թարգմանիչը գործածում է վերը բերված 4 տարատեսակները ըստ իր հայեցողության, այդ թվում՝ ԱՂՀ կառույցը մեկ բառով ամփոփելով, ինչպես՝ **դիմեալ նաւեցաք – նավարկեցինք, ցնորեալ պաշտէք – պաշտում եք, կործանեալ աւերեցին – հիմնահատակ կործանեցին**, բայց նաև այլ կերպ՝ **փութացեալ բացցուք – փութանք բացել, թագ եդեալ փառաւորեցից – թագ դնելով՝ կփառավորեմ քեզ** և այլն:

Աշխարհաբար թարգմանության համար համեմատել ենք Կորյունի «Վարք Մաշտոցի» Մանուկ Աբեղյանի արևելահայերեն և Ստեփան Բանեանի արևմտահայերեն թարգմանություններում ԱՂՀ-ների կիրառության դեպքերը, որ հանդիպադրված են աղյուսակում:

Համառոտ այս համեմատությունը հուշում է, որ անցյալ դերբայը գերազանցապես թարգմանվում է դիմավոր ձևով և ստանում իր դիմավոր բայի ժամանակաձևը, ինչպես **կարգեալ եւ հաստատեալ կշոէր – կշռադատեց, կարգավորեց**: Երբեմն բայաձևերը դրվում են շաղկապով որպես բազմակի ստորոգյալներ՝ **նախանձեռուցեալ յորդորեց – նախանձեռուց եւ յորդորեց**: Այլ օրինակներում Մ. Աբեղյանը թարգմանում է նաև հարակատար դերբայով կամ անորոշ դերբայի գործիական հոլովով՝ **շեշտելով պարագայական իմաստը, ինչպես՝ բարձեալ բերէ –**

¹² Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, աշխ. թարգմ. և ներածական՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1977:

բարձած բերում է, տազնապեալ աղաղակեր - տազնապած աղաղակում էր, վիճեալ պնդին – վիճելով պնդում են և այլն:

Գրաբար բնագիրը	Մ. Աբեղեանի թարգմանությունը	Մ. Բանեանի թարգմանությունը
պատմեալ նախանձեցուցեալ յորդորեաց	պատմելով՝ նախանձեցնելով հորդորում է	նախանձեցուց եւ յորդորեց
նշանակեալ անուանեալ եւ կարգեալ յօրինէր	նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց	նշանակեց, անուններ դրաւ, կարգաւորեց
կարգեալ եւ հաստատեալ կշռէր	կշռադասեց, կարգավորեց, հաստատեց	կարգի կը դներ, կը հաստատէր ու կը ճշդէր
թեթեւացեալ եւ սթափեալ ի ցաւոց՝ կանգնեալ նստաւ	ցավերից թեթևանալով և սթափելով՝ վեր կացավ նստեց ժողովրդի մեջ	ցաւերէն թեթեւցաւ, սթափեցաւ, ելաւ եւ ուղիղ նստաւ ժողովին մէջ

«Նարեկի» «*Եթէ տնկակից ինձ թողցես զմեղս՝ / Ի նոսին վատնեալ մաշեցայց*» (Բան ՀԸ. Գ) հատվածի վատնեալ մաշեցայց կապակցությունը աշխարհաբար տարբեր թարգմանություններում մատուցվել է երկու հիմնական կերպ, մի դեպքում բազմակի ստորոգյալներով.

Եթէ թողուս, որ մեղքերս ինձի հետ աճին / Ես անոնցմով **պիտի հայիմ ու մաշիմ:** (Թորգոմ Գուշակյան)

Եթէ մեղքերս ինձ թողուս տնկակից / Անոնց մեջ **կը մաշիմ ու կը քայքայուիմ:** (Գարեգին Եպս. Խաչատուրյան)

Եթէ մեղքերս թողնես, որ ինձ հետ տնկակից աճեն / Նրանցով **պիտի մաշվեմ, սպառվեմ:** (Մկրտիչ Խերանյան)

Նույն հատվածը այլ դեպքերում թարգմանվել է դերբայական դարձվածով.

Եթէ մեղքերս ինձ հետ աճին / Անոնց մեջ **խեղդուելով պիտի կորսուին:** (Միսաք Գոչուկյան)

Եթէ մեղքերս ինձ թողնես տնկակից / Նրանցով **մաշված՝ կսպառվեմ անհետ:** (Վազգեն Գևորգյան):

ԱՂՅ գործածությունը կախված է արդյոք հեղինակի ոճական նախընտրությունից: Նշեցինք, որ ԱՂՅ կառույցները հանդիպում են բոլոր հեղինակների երկերում, և դա տարբեր հեղինակների ոճական ինչ-ինչ հարցերի մասին խոսելու հնարավորություն տալիս է: Կորյունի երկում առատ է առհասարակ անցյալ դերբայի գործածությունը, մանավանդ՝ դերբայը ստորոգյալի արժեքով. «*Վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց... տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհական կարգաց...*»: Համապատասխան չափով շատ են նաև ԱՂՅ կառույցները՝ *հատուցեալ զարդարեսցի, փութացեալ գնայր, եկեալ դիպէր, բնակեցուցեալ հաստատէր, պատուիրեալ գուշակէր, պաշարեալ դներ* և այլն: Այդ առանձնահատկության վրա հենվելով՝ ժամա-

նակին առիթ ունեցել ենք վարկած առաջ քաշելու, որ հասկապես Կորյունն է Աստվածաշնչի Յոբի գրքի հայերեն թարգմանիչը, այնքան որ նման են անցյալ դերբայով կառույցները «Վարք Մաշտոցի» և Յոբի գրքերում: Կորյունի երկի և Յոբի գրքի լեզվական համեմատությունը ներառում էր տարբեր մակարդակներ, այդ թվում՝ դերբայների գործածության օրինաչափությունները¹³:

Անցյալ դերբայով կառույցը առատ է նաև Ագաթանգեղոսի մոտ, որ կարող է վկայել «Վարք»-ի հեղինակի հետ ունեցած ընդհանրության կամ առնվազն այդ շրջանակներում ընդունված ինչ-ինչ ոճական առնչությունների մասին: Օրինակներ Ագաթանգեղոսից *օրհնեալ խառնեցի, հնազանդեալ գնացեն, նշանակեալ արձակե, նշանագրեալ վայելեցուցանե, ցանկացեալ հայեր* և այլն:

ԱՂՀ կառույցներ առատորեն հանդիպում են շարականներում, օրինակ՝ 5-8-րդ դարերի՝ *բարձրացեալ պարծին, լուսազարդեալ երեւեցար, հիացեալ սասանեցան, հրդեհեալ բոցակիզեաց, պատարագեալ հեղցես, ցոլացեալ երեւիր, գերազանցեալք յաղթեցեն* և այլն:

ԱՂՀ կառույցներ կիրառված ենք գտնում «Նարեկում», սակայն նրանում սպասված բազմազանությունը չի նկատվում՝ համեմատած ոճական այլ հնարանքների հետ: Նշելի է միայն, որ Գրիգոր Նարեկացին ստեղծել է ԱՂՀ եզակի օրինակներ, որոնք երկրորդ գործածությունը չունեն այլ երկերում, ինչպես՝ *խթեալ խոցոտիմ, ապրեալ ողջացի, դեզերեալ ողբայ, մորմոքեալ ճկեցուցանեն, հերքեալ պարտեցի, ռոռգեալ ծաղկեցի, բղխեալ պատրաստեաց* և այլն:

Որպես ամփոփում պետք է ասել, որ ԱՂՀ կառույցը ոճական պաճուճանք և երբեմն ճոխություն է հաղորդում գրաբար տեքստերին: Եվ բնագրերը աշխարհաբար թարգմանելիս, որպեսզի ոճական այդ կողմը կորուստ չունենա, առավել նպատակահարմար է պահպանել ԱՂՀ կազմի մեջ եղած բայերը՝ դրանք հնարավորինս համապատասխանեցնելով դիմավոր բայի ժամանակաձևին: Այդպես ենք մենք վարվել, օրինակ, Պաղտասար Դպիրի «Գրքոյկ շահաւետ» և Կարապետ Պալատեցու «Տարեկան քարոզգիրք»¹⁴ երկերը գրաբարից աշխարհաբար փոխադրելիս, որտեղ, օրինակ, *խոնարհեալ ասաց*-ը վերածել ենք *խոնարհվեց և ասաց, գայթակղեցեալ կորուսանիցես – չգայթակղվես և կորցնես, տրտմեալ ցաւիմք – տրտմում և ցաւում ենք* և այլն:

НОРАЙР ПОГОСЯН – Языковая структура с “прибавлением прошедшее причастие” в габаре.– На многочисленных примерах, взятых из произведений габара, была сделана попытка выявить и рассмотреть морфологические и стилистические аспекты структуры «прошедшее причастие + глагол спрягаемый»

¹³ Տե՛ս **Նորայր Պողոսեան**, Արդեօ՞ք Կորիւնն է թարգմանել Յոբի գիրքը, «Միոն», 2001, թ. 1-3, էջ 91-97:

¹⁴ **Կարապետ Արք. Պալատեցի**, Տարեկան քարոզգիրք (ընտրանի), գրաբարից աշխարհաբարի փոխադրեցին՝ Նորայր Պողոսեան, Գեւորգ Մրկ. Կարապետեան, Լոս Անջելես, 2021:

(ППГ). Это уникальная языковая единица староармянского языка, и автор сделал попытку определить эту структуру, опираясь на фактический материал текстов. ППГ является одним из идиоматических, стилистически богатых средств выразительности древнеармянского языка, используемых во всех произведениях и всеми авторами. Автор этой статьи также сравнил, как разные филологи относятся к ППГ в процессе перевода текстов с древнеармянского языка на новоармянский, после чего высказывает мнение, что при переводе следует сохранить две части глаголов ППГ, чтобы не пострадала стилистическая сторона данного контекста.

Ключевые слова: *гбар, прошедшее причастие, прибавление, определение, структура, время глагола, стилистическая конструкция*

NORAYR POGHOSYAN – *Language Structure with “Past Participle + Verb” in Grabar.* – Using numerous examples taken from the works of the Grabar, we made an attempt to identify and consider the morphological and stylistic aspects of the construction “past participle + verb” (PPV). This is a unique linguistic unit of the Old Armenian language, and the author of this article has made an attempt to define this structure, based on the actual material of the texts. PPV is one of the stylistically rich means of expressiveness of the ancient Armenian language, used in all works and by all authors. The author of this article has also compared how different philologists observe the PPV in the process of translating texts from the Old Armenian language into New Armenian, after which he expresses the opinion that two parts of the PPG verbs should be preserved in the translation so that the stylistic side of this context does not suffer.

Key words: *Grabar, past participle, addition, definition, structure, verb tense, stylistic construction*

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒՍԱՂԵՐՈՒՄ

ՍՈՒՍԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի գրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմության համար: Միջին հայերենի բառապաշարն իր զարգացման ընթացքում մշտապես համարվել և հարստացել է արտացոլելով հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Այս ժամանակաշրջանը բավականին հարուստ է փոխառություններով, որոնք ամրացել են մեր լեզվում՝ շնորհիվ այլ ժողովուրդների հետ հայ ժողովրդի մշակութային, քաղաքական և առևտրային հարաբերությունների: Ասվածն անառարկելիորեն վերաբերում է նաև Հովհաննես Թլկուրանցու տաղերին: Նա ծավալել է գրական լայն գործունեություն:

Հարուստ և բազմազան է Հովհաննես Թլկուրանցու տաղերի բառապաշարը: Նա տպագրված առաջին միջնադարյան հեղինակներից է: Հ. Թլկուրանցին գրել է քառասունից ավելի տաղեր, որոնք աչքի են ընկնում գեղարվեստական արժանիքներով: Նրա տաղերը հարուստ են արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն փոխառություններով: Դրանք մնացել են հայերենի բարբառների բառապաշարում կամ ժամանակի ընթացքում ձուլվելով գրական լեզվին՝ դարձել նրա բառաշերտի կենսունակ տարր՝ հնչյունական կամ իմաստային որոշ տարբերություններով: Սույն հոդվածի նպատակն է Հ. Թլկուրանցու կողմից գործածված փոխառությունների ուսումնասիրությունը, դրանց կիրառության ոլորտը, ինչպես նաև դրանց իմաստային առանձնահատկությունների վերհանումը:

Բանալի բառեր – բառապաշար, միջին հայերեն, փոխառություններ, հնդեվրոպական ծագում, նորակազմություններ, ստուգաբանություն, բարբառ, իմաստային խմբեր, ժողովրդախոսակցական լեզու

Հովհաննես Թլկուրանցու մասին կենսագրական տեղեկություններ չկան: Նա երկար ժամանակ թյուրիմացաբար համարվել է 15-16-րդ դարերի բանաստեղծ՝ «առանց խորամուխ քննության, դյուրագայթ մոտեցմամբ»¹ նույնացվելով Սսի կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցու հետ: Այս կարծիքին են և՛ Մ. Չամչյանը, և՛ Ղ. Ալիշանը, և՛ Կ. Կոստանյանցը, և՛ Ա. Տևկանցը, և՛ նույնիսկ Լեոն ու Մ. Աբեղյանը: Ղ. Ալիշանը գրում է, որ նշված անձը սիրո և գովասանքի երգեր է գրել և միաժամանակ Սսի կաթողիկոս է եղել²: Կ. Կոստանյանցն իր գրքի³ առաջաբա-

¹ Հովհ. Թլկուրանցի, Տաղեր, Եր., 1960, էջ 27:
² Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1869, էջ 125:
³ Տե՛ս Կ. Կոստանյանց, Հովհաննես Թլկուրանցի և յուր տաղերը, Թիֆլիս, 1892:

նում փորձել է ներկայացնել Թլկուրանցու կյանքն ու գործը՝ դարձյալ նույնացնելով Թլկուրանցի տաղասացին և նույնանուն կաթողիկոսին:

1960 թվականին հրատարակվեց Էմ. Պիվազյանի «Հովհ. Թլկուրանցի, Տաղեր» աշխատությունը, որտեղ հեղինակն ի մի է բերում թլկուրանցիագիտության անցած ուղին: Էմ. Պիվազյանը նշում է, որ քննության առնելով Հովհաննես Թլկուրանցի կաթողիկոսի գահակալության ժամանակի հարցը՝ առաջին անգամ Հ. Թլկուրանցի տաղասացի և Սսի Հ. Թլկուրանցի կաթողիկոսի տարբեր անձինք լինելու մասին խոսել է Տաղասերը (Ն. Ակինյան)՝ դեմ գնալով բանասիրության մեջ ընդունված և արմատացած կարծիքին⁴: Սակայն դրանից հետո էլ տաղերգուն դասագրքերում և գրականագիտական այլ գրքերում ավանդաբար շարունակում էր համարվել Սսի կաթողիկոս: Իր աշխատության առաջին «Ուսումնասիրություն» մասում Էմ. Պիվազյանը ներկայացնում է Թլկուրանցու ապրած ժամանակաշրջանը, նրա տեղն ու դերը միջնադարյան հայ գրականության մեջ: Համադրելով բազմաթիվ ակնառու փաստեր՝ Էմ. Պիվազյանն ապացուցում է, որ բանաստեղծի հայրենիքը եղել է Թլկուրան ավանը: Նա ապրել ու ստեղծագործել է 14-րդ դարի երկրորդ և 15-րդ դարի առաջին կեսին, այսինքն՝ ժամանակով հեռու չէ Կ. Երզնկացուց: Հեղինակի յուրաքանչյուր տաղին առանձին՝ դրա հետ կապված բանասիրական զանազան հարցերի բարձրացմամբ, Էմ. Պիվազյանը անդրադառնում է «Ծանոթագրություններ և բանասիրական դիտողություններ» բաժնում: Սույն ուսումնասիրությունն ավելի է արժևորվում գրքի վերջում զետեղված դժվար հասկանալի բառեր ու բառաձևեր պարունակող բառարանով: Էմ. Պիվազյանը հեղինակի՝ մեզ հասած ավելի քան չորս տասնյակ չափածո գործերից 24-ը հրատարակել է զանազան աղբյուրների համեմատական քննությամբ: Նա Հ. Թլկուրանցու ստեղծագործությունների քննական բնագրերը կազմել է Մատենադարանում պահպանվող բազմաթիվ ձեռագրերի հիման վրա:

Հովհ. Թլկուրանցու կյանքին և ստեղծագործությանն է անդրադարձել նաև Վ. Եղիազարյանը: 2001 թվականին նա հրատարակեց տաղերգունին նվիրված մենագրություն⁵, իսկ 2004 թվականին՝ «Տաղեր և զանձեր» ժողովածուն⁶, որտեղ ամփոփված են Թլկուրանցու մինչև այժմ հայտնի բոլոր տաղերն ու զանձերը: Գիրքն ունի ձեռագրագիտական, բանասիրական արժեք: Բնագրերը կազմվել են համեմատական քննությամբ՝ հիմք ունենալով Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հնագույն ձեռագրերը և դրանց բոլոր տպագիրները: Գիրքն ունի նաև հարուստ ծանոթագրություններ և բառարան:

Ինչպես նշում է Էմ. Պիվազյանը, Հ. Թլկուրանցին իր ստեղծագոր-

⁴ Տե՛ս **Հովհ. Թլկուրանցի**, նշվ. աշխ., էջ 15:

⁵ Տե՛ս **Վ. Եղիազարյան**, Հովհաննես Թլկուրանցի. կյանքը և ստեղծագործությունը, Եր., 2001:

⁶ Տե՛ս **Վ. Եղիազարյան**, Տաղեր և զանձեր, Եր., 2004:

ծության բնույթով անմիջական հետևորդն է Կոստանդին Երզնկացու: Մ. Աբեղյանը, խորը և ինքնատիպ ձևով անդրադառնալով Հ. Թլկուրանցու ստեղծագործությանն ու հեղինակի խառնվածքին, շեշտում է նրա յուրահատուկ աշխարհասիրությունը, որն արդեն այն չէ, ինչ որ Կոստանդին Երզնկացին ուներ, որտեղ ամեն ինչ կրոնական հրճվանք էր աստվածային բնության գեղեցկության ու հավիտենականության առաջ. այստեղ արդեն մարդը երկնային ոլորտներից իջել է իրական աշխարհի և ապրում է իրական կյանքի վայելքը⁷:

Հ. Թլկուրանցին աշուղ չի եղել, քանի որ աշուղական արվեստը Հայաստանում սկիզբ է առել 16-17-րդ դարերում, իսկ դրանից առաջ երգիչները աշուղներ չէին հենց ստեղծագործական հատկանիշներով: Նա եղել է երգիչ-երգահան, ինքն էլ հորինել է իր երգերը⁸: Հայ միջնադարյան տաղերգության մեջ բացառիկ տեղ ունեն նաև Հ. Թլկուրանցու վիպական տաղերը: Նա առաջին հայ տաղերգուն է, որ անդրադարձել է ժողովրդական բանահյուսությունից քաղված թեմաներին և մշակել դրանք. այդպիսիք են Գրիգոր Նարեկացու, կլիկյան հայ գորավար Լիպարիտի և Ալեքսիանոսի վերաբերյալ ժողովրդական գրույցների ու ավանդությունների յուրովի մշակումները:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Հ. Թլկուրանցու տաղերի բառապաշարը, որն աչքի է ընկնում ժողովրդախոսակցական բառաձևերի, բարբառային, փոխառյալ բառերի գործածությամբ:

Մենք առանձնացրել ենք Հովհ. Թլկուրանցու բանաստեղծություններում գործածված փոխառությունները՝ ընդգրկելով Էմ. Պիվազյանի աշխատասիրությամբ կազմված վերոնշյալ գրքում եղած բոլոր տաղերը: Փոխառյալ բառերի բացատրությունների և դրանց համեմատությունների, նրանց ծագման աղբյուրի ներկայացման համար հիմք են հանդիսացել մի քանի հայտնի բառարաններ⁹, ինչպես նաև Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն»¹⁰, Ռ. Ղազարյանի «Միջին գրական հայերենի բառապաշարը»¹¹ աշխատությունները:

Տարբեր ժողովուրդների հետ շփումների արդյունքում հայերենը փոխառել է բազմաթիվ բառեր ասորերենից, հունարենից, արաբերենից, պարսկերենից, թուրքերենից: Դրանցից շատերը մնացել են հայերենի բարբառների բառապաշարում կամ ժամանակի ընթացքում ձուլվելով գրական լեզվին՝ դարձել նրա բառաշերտի կենսունակ տարր

⁷ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Եր., 1970, էջ 486:

⁸ Տե՛ս Հովհ. Թլկուրանցի, նշվ. աշխ., էջ 31:

⁹ Տե՛ս Գ. Աւետիսեան, Հ. Միրամիլեան, Մ. Աւգերեան, Նոր հայկազեան բառարան (ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981: Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (ՄՀԲ), Եր., 2009: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), հ. 1-7, Եր., 1926-1935: Մահակ վարդապետ Ամատունի, Հայոց բառ ու բան, Եր., 1912: Մ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), հ. Ա-Դ, Եր., 1944-1945:

¹⁰ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951:

¹¹ Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001:

հնչյունական կամ իմաստային որոշ տարբերություններով, ինչպես՝ *պաղչա, բոստան, ըռեհան, լիսն, խաբար, նունուֆար, դալաթ, հերիք, ճար, շաքար, ռանգ, սուլթան, քաբար* և այլն: Որոշ փոխառություններ, չունենալով գործառական լայն ոլորտ, հետզհետե դուրս են մղվել հետագա գործածությունից: Ռ. Ղազարյանը տարբեր լեզուներից փոխառված բառերի մեջ առանձնացնում է նաև միջին հայերենում տարածված կրկնակ փոխառությունները. սրանք այն փոխառված բառերն են, որոնք հետագայում կարող են նորից փոխառվել՝ առաջ բերելով տվյալ բառի կրկնակ ձևեր, որոնք հատուկ են լեզվի զարգացման այս կամ այն փուլին: Այսպես, հին հայերենում գործածական մի շարք փոխառյալ բառեր միջինհայերենյան շրջանում տարբեր ձևերով կրկին գործածվել են, ինչպես օրինակ՝ *բուրզն//բուրջ, գոհար//ճոհար//ճուհար//ջուհար, շուշան//շոշան* և այլն¹²:

Հ. Թլկուրանցու տաղերում գործածված փոխառյալ բառերից շատերը հիմնականում պարսկերենից, արաբերենից և ավելի քիչ թուրքերենից են, որոնք ամենայն հավանականությամբ ժամանակին գործածական են եղել տաղերգուի հայրենիքում: Քանակական առումով այքի են ընկնում արաբերեն բառերը, որոնց հաջորդում են պարսկերենից, ավելի քիչ՝ թուրքերենից կատարված փոխառությունները: Թլկուրանցու բանաստեղծությունները բաժանվում են չորս խմբի՝ սիրո և բնության տաղեր, խրատական-բարոյախոսական տաղեր, վիպական տաղեր և կրոնական հորինվածքներ:

Հետևելով տաղերում գործածված փոխառյալ բառերին՝ նկատում ենք, որ այս բառերի մեծ մասը հանդիպում է հայերենի բարբառներում և մուտք չի գործել գրական լեզու: Հ. Թլկուրանցին ունի նաև երկլեզվյան և եռլեզվյան ոտանավորներ, բայց իր հայերեն տաղերի մեջ ավելի քիչ է գործածում օտար բառեր, քան մյուս տաղերգուները՝ Կոստանդին Երզնկացին, առավել ևս Գրիգոր Աղթամարցին¹³:

Ստորև ներկայացնում ենք Հ. Թլկուրանցու տաղերում գործածված փոխառությունները իմաստային-թեմատիկ խմբավորումներով՝ փոխատու լեզուներից համապատասխան բնագրային օրինակների բերելով¹⁴: Իհարկե, բազմաթիվ փոխառությունների՝ հատկապես արաբերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառյալ բառերի փոխանցման աղբյուրը բառարաններում հաճախ ստույգ նշված չէ, քանի որ երբեմն դժվար է որոշել, թե որ լեզուն է եղել փոխառության աղբյուր կամ միջ-

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 90:

¹³ Տե՛ս **Հովհ. Թլկուրանցի**, նշվ. աշխ., էջ 77 (այս գրքից բնագրային օրինակներին կից փակագծերի մեջ կնշվեն էջերը):

¹⁴ Փոխառությունների իմաստային խմբերի բաժանման համար հիմք ենք ընդունել Ռ. Ղազարյանի «Միջին գրական հայերենի բառապաշարը» գրքում հեղինակի առանձնագրած խմբերը՝ մեր կողմից կատարված որոշ փոփոխություններով: Խմբերում չեն նշվում հին փոխառությունները, որոնք արձանագրված են գրաբարի բառարաններում և համագործածական են նաև գրաբարի համար՝ *մանուշակ, բալասան, գերեզման, ճարտար, նուշ, ծնծղայ* և այլն:

նորդ: Մեր ընտրանքում քանակով գերազանցում են հատկանիշ, դրու-
թյուն, վիճակ, մարդկային հարաբերություններ արտահայտող բառերը:
Առանձնացրել ենք հեղինակի գործածած փոխառությունների հետևյալ
խմաստային խմբերը¹⁵:

Ա) **Ֆիզիկական աշխարհ, բնություն՝ բահար** (պարսկ.)՝ գարուն: Գե-
նայ *բահա ր*, այլ լ՛ի *բահա ր*,// Այլ լ՛ի կուտան սիրո խաբար (157): **Բղրի**
//**պատր** (արաբ., պարսկ.) լիալուսին: Կ՛թուի *բղրի* լուսին, զէտ արե-
զակն ես (150): **Շամս** (արաբ.)՝ արեգակ: Ճակատող է լոյս ու լոյս կուտայ,
// Բոլոր լուսին, շամս ու դամար (157): **Տարիայ** (պարսկ.)՝ ծով: Տեսայ ա-
չեր զէտ ըզծովեր, // Ունէր քան զամպ ու *գտարիայ* (122): **Պաղչայ/բաղ-
չայ** (պարսկ.)՝ պարտեզ: Զծոցո բանաս ի մէջ *պաղչին* (135):

Բ) **Բուսանուններ՝ խիւ**¹⁶ (արաբ.)՝ դեղձ: *Խոխն* ի կապէն թուլցաւ,
անկաւ (167): **Ըռէհան/ըռայհան** (արաբ.)՝ ռեհան՝ միամյա բույս: Շուշան,
ըռէհան ու մանուշակ, // Ու նօնօֆար, լ՛ի ծոցն վարդ (129): **Միշմիշ**/
մշմիշ (արաբ.)՝ ծիրան: *Միշմիշն* ի ծառն դեղնեցան (167): **Կուլ** (պարսկ.,
թուրք.)՝ վարդ: **Տաստան** (պարսկ.)՝ փունջ, ծաղկեփունջ: Թէ սիրեմ զքեզ,
է՛ *կուլի տաստան* (155): **Ֆնտուխ** (պարսկ.)՝ պնդուկ, կաղին: Ընկույզն,
յունապն ու կաստանան, // Նուշն ու *ֆրնտուխն* քաղցրացան (167): **Սալվի**
(պարսկ., թուրք.)՝ նոճի: **Չինար** (պարսկ.)՝ սոսի: Է՛ *սալվի չինար* եւ ըս-
պիտակ թուշ, // Է՛ կամար ունէր եւ աղեղան կուշ¹⁷ (154):

Գ) **Կենդանական աշխարհ՝ բլբուլ/պլպուլ** (պարսկ., թուրք.)՝ սո-
խակ: **Ղումրի** (պարսկ.)՝ տատրակ: Խեւ Յովանէս Թղգուրանցի, *ղումրի*
թութաք ես եւ *բլպուլ* (93): **Պէտաւ** (պարսկ.)՝ արագավազ ձի: Մէկ մի հե-
ծեր պօզ *պէտաւի* (226):

Դ) **Մարդիկ, մարդկային հարաբերություններ, բնակավայրեր, ազ-
գություն, զբաղմունք՝ հարիֆ** (արաբ.)՝ ընկեր: Չերթաս ընկնիս ի հետ գի-
նոյն, // Կանուշանաս հետ *հարիֆնուն* (31): **Ղանարայ** (թուրք.)՝ սպանդա-
նոց: Շատ դրբեր ես սիրու զընտան, դուռըդ ու դրբունքդ է *ղանարայ*
(217): **Չարքազ** (պարսկ., թուրք.)՝ չերքեզ: Քեզ վայել է ծառայ խպթի, // Ուղ-
ղար, *չարքազ*, հոռոմ, լաչին¹⁸ (136): **Շեհրի/շահրի** (պարսկ.)՝ քաղաք: Ի
յայսմ աշխարհիս միջին // Մէնսիկ *շեհրի* Չին ու Մէջին (32): **Պոյաճի**
(թուրք.)՝ ներկարար: *Պոյաճուն* կարասն աւիրի, իւր սիրտն թող հալի,
պատոռի (221): **Ջհուտ** (արաբ.)՝ հրեա: Կինն չգանի եւ ոչ ոքէ, // Ո՛չ ի *ջհուէ*,
ո՛չ ի թուրքէ (188): **Եար** (պարսկ.)՝ սիրուհի: **Մէլամ/սալամ** (արաբ.,
պարսկ., թուրք.)՝ ողջույն, երկրպագություն: Առաւօտուն պարզա հո-
վին, // Չող *սէլամ* տարէք իմ *եարուն* (92): **Թուրպայ** (թուրք., արաբ.)՝ գե-

¹⁵ Փոխառությունների բնագրային օրինակները բերել ենք այբբենական կարգով, սակայն նույն տեղում հանդիպող իմաստային միևնույն խմբին պատկանող մեկից ավելի փոխառություններն ընդգրկող տողերը չկրկնելու նպատակով երբեմն խախտել ենք այբբենական կարգը:

¹⁶ Այս բառի համանունը գրաբարի բառարաններում արձանագրված է *կերակուր* նշանակությամբ:

¹⁷ Նշանակում է *աղեղի լար*: Այս բառի ծագումն անհայտ է:

¹⁸ *Լաչին* ասելով նկատի ունի լատինացուն, հռոմեացուն:

րեզման, շիրիմ: Եկո՛ւ փորէ ինձի թուրպայ (217): **Թուրքման** (պարսկ.)՝ թուրքմեն: Վաթսուն հազար *թուրքման* ելան (200):

Ե) **Պետական-վարչական կյանք, օրենք, տիտղոս, պաշտոն՝ խան** (պարսկ.)՝ թաթար-մոնղոլական իշխան: Ու գլխիբաց, գտակն յափին/Գնաց կանգնեց յառջեւ *խանին* (228): **Ղատի** (արաբ.)՝ իշխան, դատավոր: **Սոլլայ/մոլլայ** (արաբ., պարսկ.)՝ մահմեդական կրոնավոր: **Շահնայ** (պարսկ.)՝ ոստիկան, վերակացու: Աղբօրս ասեն քաղքի *շահնայ*, // Ու հօրս ասեն *ղատի մոլլայ* (229): **Հաքիմ** (արաբ.)՝ բժիշկ: Եթէ *հաքիմ* կարի լինիս // Կեանքդ քան զհով անցնի և՛ երերայ (191): **Հարամի** (արաբ.)՝ ավագակ: **Ճալատ/ջալատ** (արաբ.)՝ դահիճ, մարդասպան: Հա՛յ *հարամի* ու մարդըսպան, *ճալատն* ի քովդ աշկերտ կու գայ (217): **Մտրուպ** (արաբ.)՝ երգիչ, երաժիշտ: Թող լըվանան ըզիս գինով, *մտրուպ* բերեն ինձ քահանայ (217):

Զ) **Զգայական ընկալումներ, վիճակ, հատկանիշ, արտաքին տեսքը բնութագրող բառեր, գույներ՝ ալանի** (արաբ.)՝ բացահայտ, հայտնի: Իմ եարն երկու դուռ ունէր, // Մէկն գաղտ ու մէկն *ալանի* (221): **Եալան** (թուրք.)՝ խաբէություն, ստորություն: **Ղալ/խալ** (արաբ.)՝ խոստում, ուխտ, պայման: **Ղալ** ու հաւատ և՛ երդումն, որ կու սիրեմ զքեզ (146): Նա՛յ յետոյ սուտ ելար *ղալի եալան* քեզ (224): **Զարաթ/զեթթ** (պարսկ., արաբ.)՝ ողորմություն՝ տրված սիրելիի հոգու համար: Ես կու գրեմ զիս քեզ մատաղ, // Ու քեզ ծառայ ու քեզ *զարաթ* (129): **Թամամ**¹⁹ (արաբ.)՝ լրիվ, ամբողջ, կատարյալ: Տարին *թամամ* տասն մեկ էր (280): **Լաշ** (պարսկ.)՝ լեշ, մեռելուտի: Գազանք արինս կըշտացան ու թռչունք ի *լաշիս* վըրայ (217): **Խորոս**՝ գեղեցիկ, սիրուն²⁰: Աչերդ է թուխ ու պէտ²¹, դու *խորոսիկ* ես, // Քաֆուր վարդի նըման անուշիոտիկ ես (150): **Խուպ** (պարսկ.)՝ գեղեցիկ, սիրուն (119): **Սուրաթ** (արաբ., պարսկ.)՝ դեմք, կերպարանք: Ար եկ, ար եկ, իմ *խուպ սուրաթ* (119): **Խօշ** (պարսկ.)՝ լավ, հաճելի: Զիրար սիրենք, *խօշ* կու լինի (227): **Ղալապայ/խալապայ** (արաբ.)՝ *աղակալից, բազմամարդ* (221): Ասցի թէ պագիկ մ՛ առնում, նա տեղիկն է խիստ *ղալապայ*: **Ղալատ // խալատ** (պարսկ., թուրք., արաբ.)՝ թերություն, պակասություն: Զըկայ ի քեզ մագ մի *ղալատ* (73): **Ղուսայ** (արաբ., պարսկ., թուրք.)՝ տրտմություն, թախիծ: Ղամս է իմ *ղուսայ*, մէկ մ՛ այլ կու տիրես (289): **Ճաֆայ/ջաֆայ** (արաբ., պարսկ.)՝ գրկանք: Իմ տուն այդ չէ *ճաֆայ*, գոր դու կու քաշես (224): **Մահանայ** (պարսկ., թուրք.)՝ պատճառ, շարժառիթ: Ի գատ ընկաք, օտարացաք, չարկամն եղել մեզ *մահանայ* (219): **Մէստան** (պարսկ.)՝ արբած, գինով: Աչերդ է ծո-

¹⁹ ՄՀԲ-ում այս բառը համարվում է արաբական փոխառություն, իսկ ըստ Հ. Աճառյանի՝ այն թուրքերենից է փոխառյալ (տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, ՄՀԲ, էջ 233: Հ. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ՝ համեմատութեամբ, Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 117):

²⁰ Այս բառը, ըստ Հ. Աճառյանի, թվում է թաթարական փոխառություն: Այն հնուց ավանդված չէ և միայն հետին հայերենի մէջ կա (տե՛ս Հ. Աճառեան, ՀԱԲ, հ. 2, էջ 411):

²¹ *Պէտ/բէտ* մեծ: Այս բառի ծագումն անհայտ է:

վեր, խումար ու *մէստան* (41): *Ուսուֆ* (արաբ.)՝ երիտասարդ: Հազար *ուսուֆ* է քեզ ծառայ (128): *Պեմունաթ*²² (արաբ., թուրք.)՝ չպարտավորված: Նարեկացի սուրբ վարդապետ// Հոգին սուրբ էր *պեմունաթ* (279): *Պոյ/պոյ* (թուրք.)՝ մարդու հասակը: Ծօ Յովհաննէ՛ս, փոքր ի *պոյաց* // Փոքր ի *պոյաց*, ծանր խելաց (230): *Պոզ/բոզ* (թուրք., պարսկ.)՝ գորշագույն, գորշասպիտակ բոլորն էլ ասված ձիու համար: Մէկ մի հեծեր *պոզ* պետաւի (226): *Միվաթ/սիֆաթ* (արաբ., թուրք.)՝ երես, դեմք, կերպարանք: *Է* շահրի *սիվաթ* եւ աշխարհի գարդ, // Յովսէփ գեղեցիկ և՛ անօրինակ մարդ (41): *Քեարամաթ*²³ (պարսկ., թուրք.)՝ շնորհ: Մենք էլ տեսանք ուր *քեարամաթ* (281): *Տարադաթ* (պարսկ.)՝ հանգիստ, հոգեկան խաղաղություն: Կըտրեր քուն յաչւերուս, դուն *Ֆարադաթ* ես (151): *Տուէ/ֆետայ* (արաբ., պարսկ., թուրք.)՝ գոհ, մատաղ, նվիրում: Ամէն աշխարհս քեզ *ֆրտէ* (128): Մէկ հոգեկ մի ունիմ *ֆետայ* (217):

Ե) **Տարբեր իրեր, գարդեր, զենքեր, սնունդ՝ ալամ** (արաբ.)՝ դրոշ: Չտեղտն ունէին իրեանցն *ալամ* (166): *Եադութ* (արաբ., պարսկ.)՝ հակինթ: Ակն սարդեհոն, *եադութ*, կարկեհան (155): *Ճիկար* (պարսկ., թուրք.)՝ թոք, լյարդ: *Քապասայ* (արաբ., պարսկ.)՝ խորոված: Իմ *ճիկարըս քապասայ* հերիք, արիւնս թող գինի լինայ (217): *Մեզար* (արաբ.)՝ քառակուսի հաստ կտոր՝ Ավետարանը փաթաթելու համար: *Մեզար* լիք քյակաւ արին (280): *Խազինայ* (արաբ.)՝ գանձարան: Ղումաշ ես *խազրնի*, քանի՛ գովեմ զքեզ (151): *Ճադ*²⁴ (վրաց.)՝ շյուղ: Ես իմ սրտիս դանակ ածեմ, // Չաչքս *Ճադի* տամ հանելու (138): *Չարխ* (պրսկ.)՝ աղեղ: *Չարխի* դեղած նետով սիրտս խոցեր ես (146): *Պուկ* (արաբ., պարսկ.)՝ եղեգնից շինված եղջերափող, շեփոր: *Նաֆիր* (պարսկ.)՝ պղնձե գալարափող: *Ըզպուկն* ու *զնաֆիրն* զգաւ հարկան (200): *Սուրմայ* (պարսկ., թուրք.)՝ ծարիր: Չսիրտս երեցիր ու սղկեցիր ու քաշեցիր յաչքըդ *սուրմայ* (217): *Տառայպուլ* (պարսկ.)՝ դյուրավառ նյութ: Թող զիս երեն *տառայպուլով*, որ իմ սրտիս բոցըն գոռայ (217): *Տիքայ* (պարսկ., թուրք.)՝ պատառ: Այս գիշեր ի յերագիս կըտըրտեցին *տիքայ տիքայ* (217): *Տեղվաթ/տողաթ* (արաբ., պարսկ.)՝ հարստություն: Ինքս շատ ունիմ *տեղվաթ*, // Ի՞նչ անեմ ժամու իւերիաթ²⁵ (280): *Sounopան/inouounopանէ* (պարսկ., թուրք.)՝

²² Այս բառի *բէ/պէ* պարսկերեն նախածանցը համագոր է հայերեն *ան* ժխտական ածանցին:

²³ Բառի բացատրությունը որևէ բառարանում չգտանք: Էմ. Պիվազյանը բացատրում է որպես *շնորհ, հրաշագործություն, վեհանձնություն* (տե՛ս **Հ. Թլկուրանցի**, նշվ. աշխ., էջ 298): Մեր կարծիքով, այս բառը կապ ունի *քեար* փոխառյալ բառի հետ, որ նշանակում է *շահ, վաստակ, օգուտ* (տե՛ս **Ս. Մայիսսեանց**, ՀԲԲ, հ. 4, էջ 568):

²⁴ Գ. Ջահուկյանը նկատում է, որ թեև **Հ. Աճառյանը** բառը համարում է վրացերենից փոխառյալ *րճալի՛ ճալի*, սակայն այն համաքարթվելական չէ, և ավելի հավանական է իրանական աղբյուրից փոխառված լինելը (տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 486):

²⁵ *Խերիաթ* բառի ծագումը և բացատրությունը որևէ բառարանում չգտանք, սակայն Էմ. Պիվազյանը բառը մեկնում է որպես *բարիք, բարեգործություն* (տե՛ս **Հ. Թլկուրանցի**, նշվ. աշխ., էջ 296): Հավանաբար կապ ունի արաբերենից փոխառյալ *խեր* (բարիք) բառի հետ (տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 2, էջ 360):

մեծ գավաթ: Յովհաննէսն ի կնկանէ// Շատ է խմեր *inouinopwiné* (190): **Փանճարայ** (պարսկ., թուրք.) լուսամուտ, պատուհան: Աշան նստէր *փանճարային*// Ու խիստ տրտում, ափն երեսին (228):

Ը) **Հագուստ, կտորեղեն՝ դումաշ** (արաբ.) նուրբ կտավ, կերպաս: *Ղումաշ* ես խազընի, քանի՛ գովեմ զքեզ (151): **Ջուպայ** (արաբ., պարսկ.) արևելյան երկար և լայն վերնագգեստ (227): **Վալայ** (պարսկ.) կոշտ ու կոպիտ մազե ներքնագգեստ: Յովհաննէսին մայրն է տղայ, // Հագեր *վալայ*, վրան *ջուպայ* (227): **Քուստիկ**// **քուստուկ** (պահլ.) գոտի: Հարիւր տարու հաբեղանին, // Կտրէ *քուստիկ* պատարագին (134):

Թ) **Քանակ ու թիվ՝ թուման** (թաթարերեն) տասը հազար: Մինն *ըգ-թումանն* հալածէր, // Արիւն հանէր զէտ գէտ Ջիհան (200):

Ժ) **Այլ բառեր՝ զէնայ** (թուրք.) դարձյալ, նորից: *Գէնայ* բահա՛ր, այլ լ՛ի բահա՛ր (46): **Ջէրայ**//**զէրէ** (պարսկ.) որովհետև, քանի որ: Ամէն աշխարհս քեզ ֆըտէ, // *Ջէրայ* չունիս իսկի դալատ (128): **Ղատար** (թուրք., արաբ.) ինչքան, որքան: Ձեզ ի՛նչ *ղատար* ես դիմանամ (142):

Միջնադարի գրականության մեջ՝ հատկապես բանաստեղծների տաղերում, կան բազմազան հարադիր բայեր, հիմնականում արաբերենից, թուրքական լեզուներից, պարսկերենից փոխառյալ հարադիրով: Մրանց մի մասը, առատորեն ներմուծվելով գրավոր աղբյուրների միջոցով, իր ժամանակին աստիճանաբար ձուլվել է լեզվին, ստացել ընդհանուր գործածություն: Այս հարադիր բայերը Հ. Թլկուրանցու տաղերում մեծ մասամբ նորակազմություններ են, որոնցից շատերը զուգահեռաբար ունեն համապատասխան համադրական ձևեր և կարող են դիտվել որպես խոսակցական լեզվի, ինչպես նաև բարբառային միավորներ՝ *մալամաթ շինէլ*՝ խայտառակվել, *դարդ անէլ*՝ ընկղմել և այլն: Ինչպես օրինակներից երևում է, նորակերտ հարադրական բայերից ամենատարածվածը *գոյական + բայ* կաղապարով հարադրություններն են, որտեղ օտարակազմ հարադրավոր բայերի հարադիրն արտահայտում է տվյալ կառույցի հիմնական իմաստը: Օտարաբառ հարադիրն ըստ երևույթին հայերենին է անցել նախ հարադրավոր բայ կերտելու՝ ինչ-ինչ հասկացություն արտահայտելու համար, հետագա գործածությամբ այդ հարադիրները մերվել են լեզվին, ստացել ընդհանուր գործածություն և կազմել նոր բաղադրություններ²⁶: Հ. Թլկուրանցու տաղերում մենք առանձնացրել ենք հետևյալ օտարաբառ հարադրությունները.

Ալաս (արաբ.՝ *փրկում*) **անէլ**՝ հսկել: Ելթն գայլ սարին նստեր // Ու *ալաս կենին* ոչխարին (210):

Թախտան (պարսկ.՝ *թալան*) **անէլ**՝ ավարառել, թալանել: Չիանուն շատ *թախտան արիր* (201):

Թէպտիր//**թտպիր** (արաբ.՝ *խորհուրդ*) **առնէլ**՝ խորհուրդ անել: Նոքա այլ *թէպտիր արարին* (207):

Նարար (արաբ.՝ *լուր, տեղեկություն*) **տալ**՝ լուր տալ: Ով որ զմե-

²⁶ Տե՛ս Ն. Պողոսյան, Ջահուկյանական ընթերցումներ, Եր., 2005, 4-5, էջ 142:

ղաց ճաշակն առնու, // Այլ աստուծոյ չի տայ խաբար (161):

Խաբար տանել՝ լուր տանել: Երթամք ու խապար տանիմք // Առ Սըսայ կաթուղիկոսին (212):

Խել (քրդերեն՝ *խենթ*) **անել**՝ խենթացնել: Անուշ գինով զիս *խել արիք*, որ ի ծոցո գնտանեցայ (217):

Խել լինել՝ խենթանալ, հիմարանալ: Զխելքս առին ու *խել եղայ* (228):

Կաֆայ (արաբ.՝ բանաստեղծության տեսակ՝ գրված հայրենների հետևողությամբ) **ասել**՝ արտասանել: Բռնեց զպօզ ձիուն ազին, // *Կաֆայ ասաց* ամէն ձարին (229):

Հալալ (արաբ., թուրք.՝ *արդարացի*) **անել**՝ արժանի համարել: Զկաթոյ որ կերայ, *հալալ արայ* (228):

Հալալ ասել՝ արդարացնել: Ով զհարբենալն *հալալ ասէ*, // Զերդ շուն ի տերն կու հաչէ (186):

Հախ (արաբ., թուրք.՝ *պարտք, վարձ*) **ու տալիքը կտրել**՝ համաձայնության գալ, օժիտը որոշել: *Զհախն ու զտալիքն կտրեցին* (75):

Հարամ (արաբ.՝ *նզովյալ*) **լինել**՝ անիծվել, չվայելել: -Աշա յ, սերտ ինձ *հարամ լինայ* (229):

Ղազալի/ղազալ (արաբ., պարսկ.՝ *սիրերգ, տաղ*) **կանչել**՝ երգել, տաղ ասել: Նըստեր ի գաղտուկ դրոնակն, կու *կանչէր* հայերէն *ղազալի* (221):

Ղալ (արաբ., թուրք.՝ *խոստում*) **առնել**՝ խոստանալ, ուխտել: *Ղալիկ*²⁷ հետ ինձ *արիք* ու մոռացեալ ես (224):

Ղարար (արաբ.՝ *հանգիստ*) **անել**՝ հանգստացնել: Այդ անատակ ծովուդ նման, // Որ զիս ի քեզ *արիք ղարար* (159):

Ճուղապ (արաբ., պարսկ.՝ *պատասխան*) **ասել**՝ պատասխանել: Յետոյ զայս *ճուղապն ասացին* (227):

Մաթ (արաբ., պարսկ.՝ *սպշած*) **մնայ**՝ ապշել: Վարդապետներ *մաթ մնացին* (282):

Մալամաթ (պարսկ.՝ *կշտամբանք*) **շինել**՝ խայտառակել: Տանի զխելքն ի զլխուն, զամօթն յերեսէն, // *Շինէ մալամաթ*, հանէ յարեւէն (154):

Նատար//նագար (արաբ.՝ *հայացք*) **անել**՝ նայել, դիտել: Զով դու սիրով *նատար անես*, // Անանց կրակով զանձնիկն այրես (126):

Նիաթ//նեաթ/նիյէթ (արաբ., պարսկ., թուրք.՝ *դիտավորություն*) **առնել**՝ դիտավորություն անել: Ոչ մէջ սրտին իսեռ կրոներ, // Ոչ մեկ մարդուց *կառներ նիաթ* (280):

Ռատի (պարսկ.՝ *մեծահոգություն*) **կենայ**՝ մեծահոգի լինել: *Ռատի* յէ՞ր չես *կենար*, որ կու սիրեմ զքեզ (225):

Սիասաթ (արաբ., պարսկ.՝ *դիվանագիտություն*) **ունենայ**՝ իշխել, դիվանագետ լինել: *Սիասաթ ունիս* քան զօրաւոր իսաչ (153):

Հ. Թլկուրանցու տաղերում հանդիպում են նաև անվանական՝ հատկապես շաղկապական օտարաբառ հարադրություններ.

Նախշ ու նիզար // նախշինիզար (պարսկ.)՝ նախշանկար, նկարա-

²⁷ Ղալ բառի նվազական է:

գարդ: Է՛ գեղեցիկ կերպիւ սուրաթ, // Որ է ստեղծած նախշ ու նիզար (159):

Լուրթ (ողորմածություն) ու **քարաւ**/**քերէւ** (արաբ.)՝ ազնվություն, վեհանձնություն: Սպիտակ ճակատ ու սեւ աչեր, // **Լուրթ ու քարաւով** լուսերես (126):

Այսպիսով, յուրաքանչյուր հեղինակ իր ստեղծագործության մեջ ներկայացնում է լեզվի պատմական զարգացման տվյալ շրջանի վիճակը: Հովհաննես Թլկուրանցու տաղերի լեզուն աչքի է ընկնում միջբարբառային ժողովրդախոսակցական լեզվի կենդանի, ճկուն հնարավորությունների օգտագործումով, դարեր շարունակ հայերենում գործառող, ինչպես նաև ժամանակի խոսակցական լեզվում կիրառվող բազմաթիվ փոխառություններով, որոնցից շատերն արձագանքն են իր ժամանակաշրջանի հայերենի մտածողության և անդրադարձումը լեզվական իրողությունների: Եվ վստահաբար կարելի է ասել, որ փոխառությունների այսքան առատ դրսևորումները, ժողովրդախոսակցական բառաձևերի գործածությունը հեղինակի տաղերի յուրահատուկ առանձնահատկությունն են: Հ. Թլկուրանցու բառապաշարի քննությունից երևում է, որ ժամանակի խոսակցական լեզվում հայերեն բառերի հետ գործածական և հասկանալի են եղել նաև նույնիմաստ փոխառյալ բառերը, որոնք ազատորեն գործածել է տաղերգուն: Փոխառյալ բառերի քննությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ոչ միայն հայերեն բառի փոխառյալ հոմանիշը, այլև փոխառյալ բազմաթիվ հոմանիշ բառերի գործածությունները, որոնք թաքցնում են Հայաստանի աշխարհագրական դիրքով ու տարածքով, մեր ժողովրդի պատմական ճակատագրով պայմանավորված լեզվական լայն փոխազդեցություններ²⁸:

СУСАННА ГРИГОРЯН – Заимствования в стихах Ованеса Тлкуранци. – Изучение литературных памятников средневековой Армении дает важный материал для истории армянского языка. Лексический состав среднеармянского языка постоянно пополнялся и обогащался по ходу развития, отражая изменения, происходящие в жизни народа. Этот период достаточно богат заимствованиями, которые прижились в языке благодаря культурным, политическим и торговым связям армянского народа с другими народами. Сказанное безоговорочно можно отнести к стихам Ованеса Тлкуранци, который развил широкую литературную деятельность. Богат и разнообразен лексикон стихотворений О. Тлкуранци. Он является одним из первых средневековых авторов, чьи произведения были опубликованы. О. Тлкуранци сочинил больше сорока стихов, которые отличаются художественными достоинствами. Его стихи изобилуют арабскими, персидскими, турецкими, греческими заимствованиями. Они остались в лексике армянских диалектов или со временем слились с литературным языком, став живым элементом его лексики с некоторыми фонетическими или семантическими отличиями. Целью этой статьи является исследование заимствований, употребленных О. Тлкуранци, выяснение сферы их употребления, а также выявление их смысловых и семантических особенностей.

²⁸ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպէս վաղ աշխարհաբարի արտահայտություն, «Հայոց լեզվի պատմության հարցեր», Եր., 1991, № 3, էջ 115:

Ключевые слова: лексика, среднеармянский язык, заимствования, индоевропейское происхождение, новообразования, этимология, диалект, семантические группы, разговорная речь

SUSANNA GRIGORYAN – *Loanwords in Hovhannes Tlkurantsi's Poems.* –

The study of the literary monuments of the Medieval Armenia provides important material for the history of the Armenian language. The lexical stock of the Middle Armenian language was constantly replenished and enriched in the course of development, reflecting the changes taking place in the life of people. This period is quite rich in loanwords that survived and have been enrooted in the language owing to the cultural, political and commercial ties of the Armenian people with other peoples. The above mentioned can be unconditionally attributed to Hovhannes Tlkurantsi's poems; he developed wide literary activities. The lexicon of H. Tlkurantsi's poems is rich and diverse. He is one of the first medieval authors, whose poetry has been published. Tlkurantsi has written more than forty poems, which are distinguished by their artistic merit. His poems are abundant in Arabic, Persian, Turkish, Greek loanwords. They remained in the vocabulary of the Armenian dialects or eventually merged with the literary language and became a living element of its vocabulary with some phonetic or semantic differences. The purpose of this article is to study the loanwords used by Hovhannes Tlkurantsi, to clarify the scope of their usage, as well as to identify their semantic features.

Key words: *vocabulary, Middle Armenian, loanwords, Indo-European origin, neologisms, etymology, dialect, semantic groups, colloquial speech*

ԲԱՅԱՍԵՌԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՑԱՆ ԲԱՅԵՐՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ձայնավոր խոնարհիչների տեղաշարժերը բայական փոխանցման յուրօրինակ դրսևորումներից են: Եթե խոսքի մասերի փոխանցման ժամանակ բառը մի խոսքի մասից անցնում է մեկ այլ խոսքի մասի, ապա ձայնավոր խոնարհիչների փոխանցումների դեպքում փոխվում է բայի լծորդությունը, երբեմն նաև՝ բայի սեռը, ինչպես օրինակ՝ **էրել(ն)-էրիլ(չ), կտրել(ն)-կտրիլ(չ), շիւարել(չ)-շիւարիլ(չ)** և այլն: Գրական լեզուների փոփոխության գործընթացի ուսումնասիրության համար, տվյալ դեպքում գրաբարից միջին հայերենի անցումը բացատրելու նպատակով կարևոր է բայական փոխանցումների օրինաչափությունների բացահայտումը, որոնց ընթացքում հնարավոր են բայասեռի և բառի կազմության փոփոխություններ: Հոդվածում հետազոտված են միջին գրական հայերենի բայերը իրենց գրաբարյան տարբերակների գուգադրությամբ, վեր են հանված տեղաշարժերի հիմնական ուղղությունները արտահայտության և բովանդակության պլաններում: Խոնարհիչ ձայնավորների փոփոխությունները հիմնականում չեն հանգեցնում բայասեռի փոփոխության, փոխվում է միայն բառի կազմը. արմատին ավելանում են բայական ածանցները՝ **ն/ան/են**, օրինակ՝ **դժարեմ-դժարանամ, տափկիմ-տափականամ, ժանկիմ-ժանգանամ, աժեմ-աժենամ, վառիմ-վառենամ** և այլն: Միջին հայերենում կրավորական սեռի համար արդեն ձևավորվել էր հատուկ սեռանիշ ածանց՝ **ու/ւ/վ**, ինչպես՝ **լցվել-լցիլ/լցուիլ, բացուել/բացել-բացուիլ** և այլն:

Բանալի բառեր – բայական փոխանցում, միջին հայերեն, սեռ, խոնարհիչ ձայնավորներ, պարզ բայեր, ածանցավոր բայեր, բայաձանցներ

Մեր հոդվածի նպատակն է քննության ենթարկել խոնարհիչ ձայնավորների փոխանցում ունեցող միջինհայերենյան բայերը, որոնք վկայված են գրաբարից և շարունակում են կիրառվել նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանում, փորձել ենք պարզել դրանց՝ ա) կիրառության հաճախականությունն ու զարգացման միտումները, բ) միևնույն բայի տարբեր լծորդության պատկանող կրկնակների փոխհարաբերությունը սեռի արտահայտման տեսակետից: Գրական լեզուների փոփոխության գործընթացի ուսումնասիրության համար, տվյալ դեպքում գրաբարից միջին հայերենի անցումը բացատրելու նպատակով կարևոր է բայական լծորդությունների փոխանցումների օրինաչափությունների բացահայտումը, որոնց ընթացքում հնարավոր են բայա-

սեռի և բայակազմության փոփոխություններ: Հոդվածում հետազոտված են միջին գրական հայերենի բայերը իրենց գրաբարյան տարբերակների զուգադրությամբ, վեր են հանված տեղաշարժերի հիմնական ուղղությունները արտահայտության և բովանդակության պլաններում: Ուսումնասիրվող բայերի փոխանցումների և դրանց օրինակների համար իբրև սկզբնաղբյուր ծառայել է «Միջին հայերենի բառարան»-ը¹: Գրեթե բոլոր օրինակները քաղված են հիշյալ բառարանից, բերվել են նաև բնագրային որոշ օրինակներ, որոնք ընդգրկված չեն նշյալ բառարանում:

Բառերի բազմիմաստության և փոխաբերական տարբեր իմաստների զարգացումները կարող են պատճառ դառնալ խոսքի մասերի փոխանցումների, ըստ այդմ էլ՝ քերականական կարգերի փոփոխությունների: Ձեռք բերելով շարահյուսական, ձևաբանական և իմաստային նոր հատկանիշներ՝ բառը մի խոսքի մասից անցնում է մյուսին, որը քերականագիտության մեջ կոչվում է խոսքի մասերի փոխանցում: Կան նման անցումների մի շարք տիպեր՝ գոյականացում, ածականացում, մակբայացում և այլն, ըստ որում՝ դերբայները կարող են վերածվել ածականների և գոյականների (գարհուրելի, գարմանալի, յանգուցեալ, սառուցեալ, ամբաստանեալ), գոյականները՝ կապերի և մակբայների (երեսից, անձամբ, յանձին, յանուն), ածականները՝ մակբայների (քաջ գիտենալ, ամուր լինել) և այլն²:

Փոխանցման յուրօրինակ դրսևորումներից են բայերի ձայնավոր խոնարհիչների տեղաշարժերը, որոնք հիմնականում չեն հանգեցնում խոսքիմասային պատկանելության փոփոխության: Միննույն բայն ունենում է տարբեր լծորդության կրկնակներ, որոնք հաճախ տարբերվում են իրենց խոնարհման տիպերով: Եթե խոսքի մասերի փոխանցման ժամանակ փոխվում է տվյալ բառի խոսքիմասային պատկանելությունը, ապա բայերի լծորդ ձայնավորների փոխանցումների դեպքում փոխվում է բայի լծորդությունը, կազմությունը, երբեմն նաև՝ սեռը, ինչպես օրինակ՝ երել/ն/-երի/չ/, կտրել/ն/-կտրի/չ/, շիարել/չ/-շիարի/չ/: Միննույն բայը կարող է ունենալ ոչ միայն երկու և ավելի ձայնավոր խոնարհիչների փոխանցումներ, այլև պարզ և սուսկածանցավոր զուգադրական ձևեր:

Բայական փոխանցումները բնորոշ են թե՛ գրաբարին (ազազեմ-ազազիմ-ազազանամ, արգելում-արգելեմ-արգելանիմ, եղծեմ-եղծնում-եղծանիմ), թե՛ միջին հայերենին (խոռել-խոռիլ «1.պակասել, ամբողջությունը խախտվել, 2. խոժոռվել», խարել-խարիլ «խավարել», տափկիլ-տափկնալ-տափականալ և այլն): Ընդ որում՝ միջինհայերենյան լծորդությունների փոխարկումները իրենց գործածության հաճախա-

¹ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009:

² Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 38-46:

կանությամբ զիջում են գրաբարյան նմանատիպ կիրառություններին և առանձնանում են սեռի արտահայտման առանձնահատկություններով: Ուստի միննույն բայի կրկնակների դասակարգումը և դրանցում բայասեռի յուրօրինակ դրսևորման քննությունը ունեն գիտական կարևոր նշանակություն: Փաստենք նաև, որ փոխանցումները շարունակվում են նաև արդի արևելահայերենում և արևմտահայերենում, ինչպես նաև պահպանվում են բարբառներում:

Բայասեռի քերականական կարգը կայուն հատկանիշ չէ և բայիմաստով պայմանավորված՝ կարող է փոփոխվել: Ակնհայտ է, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի է ունենում բայի քերականական և շարահյուսական նոր ձևերի փոխներթափանցում, որի արդյունքում որոշ բայեր ձեռք են բերում նոր իմաստներ և բայասեռի տեղաշարժերի պատճառ դառնում: Քերականական այս իրողությունը խոնարհիչների փոխանցումների և միաժամանակ տարբեր լծորդության պատկանող միննույն բայի կրկնակների և դրանց արտահայտած սեռերի առաջացման հիմք է դառնում: Հաճախ, սակայն, խոնարհիչների փոխանցումից, բայիմաստով պայմանավորված, բայասեռը չի փոխվում: Այս անցումները միաժամանակ բարբառների ազդեցության, բայագործածության պատմական զարգացման արդյունք են և ժամանակագրական ու գործածության հաճախականությամբ տարբեր են:

Ինչպես գիտենք, հնդեվրոպական հիմնալեզուն բայասեռի արտահայտման ձևաբանական հստակ ցուցիչ չուներ, ուստի սեռը որոշելու լավագույն միջոց էր խնդրառությունը³: Բայասեռն արտահայտելու ձևաբանական միասնական ցուցիչներ չեն եղել նաև գրաբարում: Ներգործական և կրավորական սեռերի իմաստները հաճախ որոշվում էին շարահյուսական մակարդակում: Նշենք նաև, որ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում գործում էին հատուկ վերջավորություններ, որոնք կազմում էին ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումների հակադրությունը, բայց դրանք ոչ միշտ էին գործում. այսպես՝ ի լծորդության բայերը, անկախ սեռից, միշտ խոնարհվում էին կրավորակերպ: Իսկ կրավորաձև խոնարհում ունեցող ներգործական սեռի բայերի կրավորական իմաստը միշտ արտահայտվում էր նույն բայաձևով:

Ներկայի հիմքից կազմվող ժամանակներում սեռանիշ ցուցիչ է դառնում ե/ի հերթագայությունը, այսինքն՝ կրավորականությունն արտահայտվում է *ի* ցուցիչով, ինչպես՝ *սիրէ-սիրում է, սիրի-սիրվում է*, բացի անցյալ անկատարից, որտեղ վերջավորություններն ընդհանրական են: Անցյալ անկատար ժամանակի երրորդ դեմք եզակի թվում բայը երբեմն միայն կարող էր ստանալ *-իւր* գուտ կրավորական վերջնամասնիկը՝ *կոչիւր-կոչվում էր*: Ե խոնարհման բայերի անորոշ դերբայի ներգործականության և կրավորականության հակադրության ձևաբանական ցուցիչը հստակ սկսում է կիրառվել հետդասական շրջանում. *է* լծորդ

³ Տե՛ս **Հր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Եր., 1959, էջ 81:

ձայնավորը փոխարինվում է **խ** լծորդով՝ «խոնարհիլ, հնագանդիլ, կոչիլ և այլն»⁴: Ուշագրավ է Վ. Առաքելյանի այն պնդումը, որ գրաբարի ձայնավոր խոնարհիչները բայի սեռերը տարբերակող սեռացուցիչ մասնիկներ են եղել⁵: Հետագայում բայի խոնարհման տիպերի փոխներթափանցման, սեռի քերականական կարգի և բայիմաստի սերտ հարաբերակցության շնորհիվ այդ խոնարհիչների դերը՝ իբրև սեռատարբերակիչ ձայնավորներ, աստիճանաբար նվազում է: **Ե** խոնարհման պարզ բայերը, օրինակ, հիմնականում ներգործական, իսկ **ա** խոնարհման բայերը չեզոք սեռի բայեր են: Լեզվի պատմական զարգացման ընթացքում **ե** խոնարհման բայերի մի մասը դառնում է չեզոք, այսինքն՝ ձևի և իմաստի փոխհարաբերության մեջ առաջնահերթություն է ստանում բայիմաստը, որն էլ բայասեռի տեղաշարժերի պատճառ է դառնում:

Կրավորական իմաստի արտահայտությունը **ե-ի** փոխարկմամբ միջին հայերենում աստիճանաբար վերանում է, դրա փոխարեն, ինչպես նշում է Կարստը. «Առաջ է գալիս մի հատուկ, դասական լեզվից բոլորովին տարբեր կրավորականի հիմք, որ միայն և առանց բացառության կրավորական բային հատուկ լինելով՝ (vi -վի, -ուի, -ի) վերջավորություն ունի: Նույն հիմքը պահպանվել է նոր հայերենում՝ որպես կրավորականի միակ հիմքը»⁶: Կան տարբեր տեսակետներ այս ածանցի ծագման վերաբերյալ: Պետերմանի կարծիքով, այն առաջացել է **ու** խոնարհման պարզ բայերում լ-ից առաջ **ի** կրավորական մասնիկի հավելմամբ՝ **թողու+ի+լ**, **հեղու+ի+լ** և այլն⁷: Իսկ Ա. Այտընյանը նշում է, որ աշխարհաբարում ներգործական բայերի կրավորականը կանոնավոր կազմվում է **-ուիլ** վերջավորությամբ և իբրև օրինակ բերում է հետևյալ բայերը՝ կտրել /ն/-կտրիլ /չ/ - կտրուիլ /կր./, կտրել /ն/-կտրիլ /չ/- կտրուիլ /կր./, այրել /ն/-այրիլ/չ/-այրուիլ /կր./ և այլն⁸: **Վ** հնչումով կրավորականի այս կազմությունը, ըստ հայագիտության մեջ ընդունված մեկ այլ տեսակետի, առաջացել է **հերձուած, հասուած, զանգուած** և նման բառերում առկա **-ուած** ածանցից, որը բովանդակում էր կրավորական իմաստ⁹:

Իբրև ներգործական ու կրավորական սեռերի տարբերակման ձևաբանական ցուցիչ **վ** սեռացուցիչ մասնիկը միջին հայերենում դեռևս կենսունակ չէր և գործածվում էր սեռի արտահայտման գրաբարյան կիրառություններին զուգահեռ: Ըստ մեր վիճակագրական տվյալների՝ **ու/լ/վ** կրավորական ածանցով կազմված բայերի կրկնակները (**-վ-եմ-վ-իմ**, **-ում-վ-իմ**) չեզոք սեռի իմաստ են արտահայտում,

⁴ «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, Եր., 1975, էջ 369:

⁵ Տե՛ս Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 117:

⁶ Յ. Կարստ, Գիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002, էջ 278:

⁷ Տե՛ս «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, Եր., 1975, էջ 371:

⁸ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 88-89:

⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ Զ, Եր., 1974, էջ 42:

ըստ որի՝ գործողությունը կատարում է քերականական ենթական, օրինակ՝ **լցվել-լցիլ/լցուիլ** *Եւ սուր պուխարն սավտային ըստամոքն եւ յղեղն լցվել է* (ԱՍՕԲ, 27), *Զկուծն առնէիր ի ջուրն գայիր, քո կծիդ մէջն լցվէի* (ՆՔ, 102), **բացուել/բացել-բացուիլ** *Եւ յերբ բացուի, նայ սպիտկի որպէս մարգարիտ* (Գր., 34), Պտուկն է բացուեր վարդոյս (ԳԱ, 273), Որ երբ դուռն ի յետ բացուի... (Ֆր., 113). **աւելնալ-աւելնն-վ-իլ**՝ *Եւ չաւելնայ մէկն ի մէկէն* (ԱՍՕԲ, 54), *Ջերմանն ի հատնիլն ելանէ գոլորշին ի մարմնոյն, եւ աւելննվի տաքութիւնն* (Գր., 16), **գտնուլ-գտվիլ/գտուիլ** բայի գույգ ձևերից *գտնուլ*-ը ներգործական, *գտվիլ*-ը չէզոք սեռի բայ է՝ *Չղօվլարն համէ՛ թէ՛ ո՛ւր լինի, և զբաղդն ցոյց թէ՛ ո՛ւր գտուի* (ՖրԴ, 536) և այլն: Ըստ էության այս բայերը կրավորակերպ չէզոք ձևեր են, որոնց զարգացումը վկայված է նաև արդի արևելահայերենում:

Մեր հոդվածում քննված բայերը, որոնք իրենց կազմությամբ հիմնականում պարզ և սոսկածանցավոր են, խմբավորել ենք ըստ խոնարհիչների փոխանցման հետևյալ 6 տիպերի, որտեղ նշում ենք բայաստոր

1. **եմ // իմ**, օրինակ՝ *փաթթել/ն/-փաթթիլ // փաթթուիլ-փաթթուվիլ /չ/, մծրել-մծրիլ* «1.մոխիր դարձնել/ն., 2. Խանձվել. կծղել/չ.», *խաւրել/չ/-խաւրիլ/չ/:*

2. **եմ // ում՝** *ցուցնել/չ/-ցուցնուլ/չ/, զարկնել/ն/-զարկնուլ/ն/, իջնել/չ/-իջնուլ /չ/, հեծնել/չ/-հեծնիլ/չ/, մտնել/չ/-մտնուլ/չ/:*

3. **իմ // ում՝** *թողանիլ/չ/-թողնուլ/ն/, ընկնիլ/չ/-ընկնուլ/չ/, մտնիլ/չ/-մտնուլ/չ/, սկսնիլ/չ/- սկսնուլ/չ/* (Գր., էջ 26), *տանիլ/ն/ «վերացնել»-տանուլ/ն/ «տանել»:*

4. **ամ // ում** կամ **ամ // իմ // ում՝** *արթնալ/չ/-արթնուլ/չ/, դիպենալ/չ/-դիպնուլ/չ/, ելնալ/չ/-ելնիլ/չ/-ելնուլ/չ/, ընկնալ/չ/-ընկնիլ/չ/-ընկնուլ/չ/, իջնալ/չ/-իջնուլ/չ/:*

5. **եմ // իմ // ում՝** *զարկնել/ն/-զարկնիլ/չ/ «ուղղություն բռնել, դիմել, գնալ»-զարկնուլ/ն/:*

6. **ամ // եմ // իմ // ում՝** *ելնալ-ելնել-ելնիլ-ելնուլ /չ/, տեսնալ-տեսնել-տեսնիլ-տեսնուլ/ն/* և այլն:

Միջին հայերենում գրաբարյան մի շարք բայերի պարզ և ածանցական հիմքերը փոխվել են. պարզ բայերը դարձել են ածանցավոր, իսկ ածանցավորները՝ պարզ, օրինակ՝ **ածենալ** (գրբ. *արծել*), **դժարանալ** (գրբ. *դժուարիմ*), **դիպենալ-դիպնիլ-դիպնուլ-դպչիլ-դպնուլ** (գրբ. *դիպիմ*), **լռղնալ** (գրբ. *լռղայ*), **պակասնալ** (գրբ. *պակասել*), կամ **ուռել-ուռիլ** (գրբ. *ուռնուլ, ուռչիլ*), **փախել-փախիլ** (գրբ. *փախչիլ*) և այլն: Այս բայերի համաբանությամբ միջին հայերենում ստեղծվել են նմանատիպ կրկնակների նոր ձևեր՝ *արոյնիլ-արունել, բարկիլ-բարկնալ, գորփիլ-գորփնալ* «պղտորել», *տափականալ-տափկիլ-տափկնալ, փոշիմանիլ-փոշրմնել-փոշրմնիլ, թապլել-թապլիլ* «1. Նետել, շպրտել/ն. և 2. Թավալվել, շրջվել /չ.», *խալխսել-խալխսիլ- խալքսել* «1.ազատել/ն., 2. Ազատվել, փրկվել/չ.», **ճկել-ճկիլ** և այլն:

Ըստ մեր վիճակագրական տվյալների՝ **է** լծորդության պարզ բայերի կրկնակ ձևերում սեռը հաճախ չի փոխվում: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ **եւ-իւ** փոխանցման բայերի երկու խումբ ենք առանձնացրել: Առաջին խմբի բայերի կրկնակները ներգործականության ու չեզոքության իմաստներ են արտահայտում, օրինակ՝ **անուանել/ն/-անուանիլ/չ/** (Գր., 29), **փաթթել/ն/-փաթթիլ/չ/**, **ժամել/ն/-ժամիլ/չ/**, **շարժել/ն/-շարժիլ/չ/** (Գր., 32), **էրել/ն/-էրիլ/չ/**, **կտրել/ն/-կտրիլ/չ/**, **ճկել/ն/ճկիլ/չ/**, **մծրել/ն/-մծրիլ/չ/**, **սագել/ն/«հարմարեցնել, գոհացնել, նվագարանը լարել» -սագիլ/չ/«հարմարվել»**, **ուժաւորել/ն/«ուժեղացնել»-ուժաւորիլ/չ/«ուժեղանալ»**, **ցրքել/ն/-ցրքիլ/կր, չ/**, **փաթթել/ն/ - փաթթիլ/չ/** և այլն:

Բերենք բնագրային օրինակներ՝ համապատասխան առանձնահատկություններով՝ *Բնձ ըոնտութիւն էրես, քեզ կրակ, դու գրեզ էրես* (ՆՔ, 65), *Ով որ ինք չար կամօք ի քեզ դիմէ՝ սա ինք էրի* (ԿԵ, 197), ...*Որ ժամէ՛ զձեռքն ...*(ԲԶ, 66), *Որոյ ալոռան փշրի և ժամի* (ԱԱՕԲ, 247), *Եւ ճղերն ի գետինն է ճկել* (ԱԱԱԱ, 354), *Եւ ի ճկիլն ճակատն ցաւի* (ԱԱՕԲ, 223) և այլն:

Եւ-իւ փոխանցման երկրորդ խմբի բայերի կրկնակները չեզոք սեռի են: Դրանցից են՝ **արողջել /չ/-արողջիլ /չ/**, **դատել /չ/** «չարաչար աշխատել, չարչարվել»-**դատիլ /չ/** «աշխատել, բանել», **խոռել** «պակասել»/չ/-**խոռիլ /չ/**, **խարել /չ/-խարիլ** «խավարել, մթնել»/չ/, **շարել-շարիլ/չ/****շիւարել/չ/-շիւարիլ/չ/**, **ուռել/չ/-ուռիլ/չ/**, **պառկել/չ/-պառկիլ/չ/**, **սպանել /ն/-սպանիլ/ն/**, **սրտացաւել /չ/-սրտացաւիլ/չ/**, **ցամքել/չ/-ցամքիլ/չ/**, **փախել /չ/-փախիլ/չ/**, **փակչել/չ/-փակչիլ/չ/** և այլն:

Նման կառույցներ հանդիպում են միջնադարյան բժշկարաններում և տաղերգության մեջ՝ *Կարմրէ, եւ ուռէ, եւ եռայ* (Գր., 80), *Որոյ փայծաղն ուռի՛ խմէ նա, հալի փայծաղն* (ԱԱԱԱ, 39), *Թէ չէ կսպանեմ ես զիս, զան ուզեն զարիւնս ի քենէ* (ՆՔ, 177), *Սպանինն դեղով զտեր Ներսէս* (ՀՍ, 95), *եւ երեք օր ի հետն եմ դատել* (ԺԱՎ, 238), *Դատիմ զէտ զամէն մշակ* (ՆՔ, 266), *Նայ արողջէ մարդն: Երբ ...ի լայնքն կտրի, նայ չարողջի* (Գր., 217, 69) և այլն:

Կան հազվադեպ վկայված կրկնակներ, գործիական՝ **ամ-իւ՛՛ գարթնալ-գարթնչիլ-գարթնիլ /չ/**, **լնալ/ն/-լնանիլ/չ/**:

Ինչ վերաբերում է **է** լծորդության ածանցավոր բայերին, նշենք, որ դրանց **ան** ածանցի **ա** ձայնավորը միջին հայերենում սղվում է, և հնչյունափոխված այս բայաձևերը միջին հայերենում վերածվում են **ու**, **ա** կամ **ի** խոնարհման բայերի, օրինակ՝ **գտանել-գտնալ-գտնուլ**, **սկսանել-սկսնիլ-սկսնուլ** (Գր., 26), **գարկանել-գարկնել**, **իջանել-իջնալ-իջնուլ**, **խածանել-խածնել**, **տաքանալ-տաքնալ** (գրբ. տաքիմ), **հարցանել-հարցնել-հարցնուլ** և այլն:

Առանձին խումբ են մինչև եռանդամ և անգամ քառանդամ կրկնակներ ունեցող բայաձևերը, որոնց **ան**, **են** ածանցների **ա** և **է** ձայնավորները սղվել են գրաբարյան շեշտի փոփոխության պատճառով,

հնչյունափոխված հիմքով *ա-ե-ի-ու* լծորդությունների անցումները, որոնք օրինաչափ են, բնորոշ են միջին հայերենի ողջ ժամանակաշրջանին, այսպես *գտնել-գտնալ-գտնույլ/ն/*, *ելնել-ելնալ-ելնիլ-ելնույլ/չ/*, *զարկնել-զարկնիլ-զարկնույլ/ն/*, *զարնել-զարնույլ/ն/*, *ընգնել-ընկնալ-ընկնիլ-ընկնույլ/չ/*, *թողել/ն/-թողանիլ/չ/-թողնույլ/ն/*, *իջնել-իջնալ-իջնույլ/չ/*, *ի դող էլանիլ-ի դող էլնել-ի դող էլնույլ/չ/*, *հագնել-հագնիլ-հագնույլ/ն/*, *հեծնել-հեծնիլ-հեծնույլ/չ/*, *մտնել-մտնույլ-մտնալ-մտենալ-մտնիլ/չ/*, *տեսանել-տեսնալ-տեսնել-տեսնիլ-տեսնույլ/ն/*, *փախչիլ-փախել-փախիլ/չ/-փախչենալ/չ/*, *դիպենալ-դիպնիլ-դիպնույլ/չ/* և այլն:

Նշված բայերը լծորդությամբ թեև հակադրվում են միմյանց, սակայն խոնարհիչ ձայնավորի փոփոխությունը չի հանգեցնում սեռի փոփոխության. *իջանել* բայի *իջնել-իջնալ-իջնույլ* բոլոր ձևերը չեզոք սեռի են, իսկ *տեսնալ-տեսնել-տեսնիլ-տեսնույլ* /ն/ կրկնակները՝ ներգործական սեռի: Ուշագրավ է, որ *ան* ածանցը երբեմն անցողական և անանցողական բայեր է կերտում, գործիական լուծիլ-լուծել-փորլուծություն ունենալ /չ/, իսկ լուծանել-լուծ գցել /ն/, թողել /ն/-արձակել, բաց թողնել, իսկ թողանիլ-թողնվել /չ/: Այսինքն՝ Վ. Առաքելյանի եզրույթով *ան* կերպածանցը դառնում է սեռացուցիչ:

Խոնարհիչ ձայնավորների փոխանցման միջոցով կարող է փոխվել նաև բայի իմաստը, օրինակ՝ *փթել/ն/- փթիլ/չ/* 1. Վտարել, դուրս անել և 2. փտել, *թապլել-թապլիլ* 1. Նետել, շարտել/ն/ և 2. Թավալվել, շրջվել /չ/:

Անշուշտ, վերը նշված զուգահեռ ձևերից բոլորը չէ, որ կենսունակ են: Կան մեկ կամ մի քանի վկայություն ունեցող ձևեր, որոնք տվյալ բայի ձևաբանական տարբեր դրսևորումների պատմական զարգացումների հետևանք են:

Բայական յուրօրինակ փոխանցումներից են միևնույն բայի պարզ և ածանցավոր զուգադրական ձևերը: Առավել գործուն և կենսունակ են *ան*, *են* բայածանցները, որոնց միջոցով ինչպես հին հայերենում (*բաղձամ-բաղձանամ*, *ըղձամ-ըղձանամ*, *կաղամ-կաղանամ* և այլն), այնպես էլ միջին հայերենում կրկնակ բայերի նոր ձևեր են կազմվում: Այս բայածանցները՝ որպես կերպանիշ հիմքակազմ վերջամասնիկներ, անկատարի և կատարյալի կերպային հակադրության իմաստ են արտահայտում, ըստ որում՝ կատարյալ կերպը ցույց է տալիս գործողության սկիզբը կամ ավարտը, անկատարը՝ գործողության ընթացքի մեջ գտնվելը: Այս հակադրությանը գումարվում են միակատարության և բազմակատարության կամ տևականության և ոչ տևական լինելու կերպային հակադրության իմաստները, որոնք ցույց են տալիս գործողության կատարման քանակը՝ բազմակատար կերպի արտահայտման հիշյալ միջոցներով (*ան*, *են*): Օրինակ՝ գրաբարի *գինեմ-գինենամ* չեզոք սեռի բայի զույգ ձևերից *գինեմ* ձևը նշանակում է «զվարթանալ», իսկ *գինենամ*՝ «խապտ արբենալ». *Գինելն*, որ եւ յիմաստունս անկանի: Ո-

մանք յանմտացն առ ի հինգ ատուրս պահոց **գինենան** (ՆՀԲ, 553): Գ. Ջահուկյանի համոզմամբ բայական այս գուգորդումներն ունեն նաև ոճական արժեք, ընդ որում՝ պարզ ձևերը բնորոշ են գրական լեզվին, իսկ ածանցված ձևերը խոսակցական կամ բարբառային են¹⁰:

Միջին հայերենում ևս նման բայերի պարզ և ածանցավոր գուգադրական ձևերը գործուն են և բաժանվում են հետևյալ տարատեսակների՝ ա) **եմ // անամ**՝ օրինակ՝ *դժարելի/չ-դժարանալի/չ, տառապելի/չ-տառապելանալի/չ* և այլն, բ) **իմ // անամ**՝ *տափկիլի/չ-տափականալի/չ, ժանկիլի/չ-ժանգանալի/չ*, գ) **եմ // ենայ**՝ *ածել լի/չ-ածենալի/չ, լսելի/ն-լսենալի/ն, դալտելի/չ-դալտենալի/չ, սիրելի/ն-սիրենալի/ն, յիշելի/ն-յիշենալի/ն, ուռելի/չ-ուռենալի/չ, հեշտելի/չ-հեշտենալի/չ, ուզելի/ն-ուզենալի/ն*, դ) **իմ/ենամ**՝ *վառելի/ն-վառիլի/չ-վառենալի/չ, կատողելի/չ-կատողիլի/չ-կատողենալի/չ, հարբիլի/չ-հարբենալի/չ, ճանչելի/ն-ճանչենալի/ն, փախիլի/չ-փախչենալի/չ*, ե) **եմ/անեմ**՝ *լուծելի/ն-լուծիլի/չ-լուծանելի/ն*, զ) **եմ//անիմ**՝ *թողելի/ն-թողանիլի/չ*, է) **ամ/ենամ**՝ *լինալի/չ-լինենալի/չ* և այլն:

Այսպիսով, միջին հայերենում ձայնավոր խոնարհիչների փոխանցումից բայի սեռը կա՛մ փոխվում, կա՛մ մնում է նույնը: Ըստ որում՝ **ե** խոնարհման ներգործական սեռի պարզ բայերը **ի** խոնարհման վերածվելիս արտահայտում են ն՛ ներգործական, և՛ չեզոք սեռի իմաստներ: **ի**-ն, ի տարբերություն գրաբարի, միջին հայերենում կրավորական իմաստի արտահայտման միջոց այլևս չի ծառայում և դառնում է անցողականություն-անանցողականություն հակադրության արտահայտիչ միայն, քանի որ կրավորական իմաստի արտահայտման համար հայերենի զարգացման այս փուլում արդեն առաջանում է **վ** հնչյունով կրավորական բայաձանցը, որն առավել կամրակայվի աշխարհաբարում՝ որպես կրավորականության հիմնական արտահայտիչ: Բերենք նորակազմ **ու/ւ/վ** սեռանիշ ածանցով բնագրային օրինակներ՝ *Ես ի քո ծոցդ թափվեի* (ՆՔ, 102), *Մեկ պահ մի դադար ունի, որ յոտիցն ի վար կու կախվի* (ՆՔ, 283), *Այն մեջլիսն որ դուն նստիս, գաւաթներդ գինով լցվի* (ՆՔ, 236), *Վարդն ալ խոշ աստեթ ունի, երբ արև տեսնու՝ կու բացվի* (ՆՔ, 223), *...նսկերքս է ցրվեր* (ՆՔ, 178), *Վարդն բացված մի՛ սիրեր, որ գա ի ծոցդ թառամի, Վարդն պուլպուլիկ սիրե, որ գա իծոցդ ու բացվի* (ՆՔ, 50), *Ես անմեղ կանգնած էի, եկաւ իմ սիրտս գամվեցաւ ...* (ՆՔ, 45), *Նա տկուկ-տկուկ քակվեցաւ* (ՆՔ, 300):

Համառոտագրությունների և կրճատագրությունների ցանկ

ԱԱԱԱ – Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926:

ԱԱՕԲ – Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Եր., 1940:

ԲՁ – Բժշկական ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ դ.), Եր., 1980:

¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Եր., 1974, էջ 250-254:

ԳԱ – Գրիգորիս Աղթամարցի, Եր., 1963:
 Գր. – Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյեւ նորին ցաւոց, Եր., 1962:
 ԺԱՎ – Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894:
 ԿԵ – Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Եր., 1962:
 ՀՍ – Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, Եր., 1964:
 ՆՔ – Նահապետ Քուչակ, Հայրենի կարգաւ, Եր., 1957:
 Ֆր. – Ֆրիկ, Բանաստեղծություններ, Եր., 1941:
 ՖրԴ – Ֆրիկ, Դիւան, Նյու-Յորք, 1952:
 ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., 1979:
 գրբ. – գրաբար
 դ. – դար
 Եր. – Երևան
 կր. – կրավորական
 ն - ներգործական
 չ - չեզոք

АЛВАРД ХАЧАТРЯН – *Выражение залога в среднеармянских глаголах с конверсией.* – Смена спрягающих гласных – одно из своеобразных проявлений глагольной конверсии. Если при морфологической конверсии слово из одной части речи переходит в другую, то при смене спрягающих гласных изменяется только конструкция глагола, тип спряжения, однако в некоторых случаях может меняться также залог глагола, как, например, **էրել**(активный)-**էրիլ** (нейтральный), **կարել** (активный)-**կարիլ** (нейтральный), **շիւարել**(нейтральный)–**շիւարիլ** (нейтральный) и т. д. Для изучения процесса смены литературных языков - перехода древнеармянского в среднеармянский, важно выявление закономерностей глагольных конверсий, при которых возможны изменения залога и состава слова. В данной статье исследованы глаголы среднеармянского литературного языка в сопоставлении с древнеармянским, и показаны основные векторы развития глагольных форм и в плане выражения, и в плане содержания. Чаще всего смена спрягающих гласных не приводит к смене залога глагола, изменяется только состав слова, к корню добавляются глагольные суффиксы - ն/ան/են, например, **դժարեն-դժարանամ, տափկիմ-տափականամ, ժանկիմ-ժանգանամ, աժեն-աժենամ, վառիմ-վառենամ** и т.д. В среднеармянском языке для выражения пассивного залога уже появился специальный суффикс ու/ւ/վ, например, **լցվել-լցիլ/լցուիլ, բացուել/բացուել-բացուիլ** и т.д.

Ключевые слова: *Глагольная конверсия, среднеармянский язык, залог, спрягающие гласные, простые глаголы, производные глаголы, глагольные суффиксы*

ALVARD KHACHATRYAN – *Voice Expression in Middle Armenian Verbs with Conversion.* – The change of conjugating vowels is one of the peculiar manifestations of verbal conversion. If, during morphological conversion, a word from one part of speech passes into another, then when changing conjugating vowels, only the construction of the verb, the type of conjugation changes, however, in some cases, the voice of the verb may also change, such as **էրել** (active) -**էրիլ** (neutral), **կարել** (active)-**կարիլ** (neutral), **շիւարել** (neutral)–**շիւարիլ** (neutral), etc. To study the process of changing literary languages - the transition of Old Armenian to Middle Armenian, it is important to identify the regularities of verbal conversions, in which

voice changes are possible. This article examines the verbs of the Middle Armenian literary language in comparison with the Old Armenian, and shows the main vectors of the development of verb forms both in terms of expression and in terms of content. Most often, the change of glowing vowels does not exceed the verb and change only the composition of the verb, suffixes are added to the root, for example, **դժարեմ/դժարանամ, տափկիմ/տափականամ, ժանկիմ-ժանգանամ, աժեմ/աժենամ, վառիմ-վառենամ** etc. A special suffix ու/ւ/վ has already appeared in Middle Armenian to express passive voice, for example, **լցվել-լցվիլ/լցուիլ, բացուել/բացուիլ**:

Key words: *verbal conversion, Middle Armenian, conjugation, conjugating vowels, simple verbs, derived verbs, verbal suffixes*

ԳՐԱԲԱՐԻ ԱՆԿԱՆՈՆ ԵՎ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՎԻԿՏՈՐՅԱ ՍՈՒՐԱԴՅԱՆ

Հոդվածում քննվում են գրաբարի անկանոն և պակասավոր բայերը, դրանց դասակարգման չափանիշները, լեզվաբանների կատարած դասակարգումների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները, կատարվում է այդ բայերի գուգադրահամեմատական քննություն: Հոդվածում ներկայացված կարծիքների քննությունը զուգակցվում է անկանոն բայերի համապատասխան ցանկերով, որոնցում նշված են անկանոնության հիմքերն ու բայերի խմբավորման սկզբունքները: Քննվող գլխավոր հարցերից է այն, որ միևնույն բայը տարբեր լեզվաբաններ ընդգրկում են տարբեր խմբերում՝ ներկայացնելով որոշակի հիմնավորումներ: Ընդհանուր վերլուծությունն ամփոփվում և ամբողջանում է վերջում տրված աղյուսակում, որտեղ առավել պարզ են երևում եղած մոտեցումների տարբերությունները, բայերի ընդգրկումները տարբեր խմբերում:

Բանալի բառեր – *անկանոն բայեր, կանոնավոր բայեր, քերականություն, գրաբար, լեզու, դասակարգում, լեզվի զարգացում, խոնարհում, լեզվական համակարգ*

Ինչպես յուրաքանչյուր լեզվի, այնպես էլ հայերենին բնորոշ է անկանոն ձևերի գոյությունը քերականական համակարգում: Անկանոնություններ եղել են գրաբարում, դրանք կան նաև աշխարհաբարում, սակայն տարբեր են դրանց դրսևորումները: Լեզվի զարգացման ընթացքում անկանոնությունները կարող են աստիճանաբար փոփոխվել. որոշ դեպքերում դրանք առհասարակ վերանում են՝ վերածվելով կանոնիկ ձևերի, որոշ ձևեր երբեմն պահպանվում են կամ նվազում, և լեզվի զարգացման հաջորդ շրջան փոխանցվում է դրանց միայն մի մասը: Սակայն կարող են ի հայտ գալ նաև լեզվական ընդհանուր համակարգից շեղվող նոր ձևեր: Այդ պատճառով էլ քերականական միևնույն համակարգի անկանոնությունները լեզվի զարգացման տարբեր փուլերում սովորաբար տարբեր են: Օրինակ՝ անկանոն բայեր կան և՛ գրաբարում, և՛ աշխարհաբարում, սակայն դրանք հիմնականում տարբեր բայեր են: Անդրադառնալով գրաբարի անկանոն բայերին՝ փորձել ենք զուգադրել և համեմատել դրանք, վեր հանել այն ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք առկա են դրանց միջև: Տարբերություններ կան նաև անկանոն բայերի առանձնացման, տարբերակման և գնահատման վերաբերյալ կարծիքներում, որոնց մասին

Էլ կխոսվի ստորև:

Գրաբարում կան բայեր, որոնք խոնարհման տարբեր ժամանակաձևերում կամ միևնույն ժամանակաձևի տարբեր դեմքերում և թվում շեղվում են ընդհանուր համակարգից և հանդես գալիս ոչ կանոնիկ ձևերով: Այդ բայերը լեզվաբանները կոչել են *անկանոն, զարստուղի* կամ *արստուղի* բայեր:

Խոսելով առհասարակ լեզվում գոյություն ունեցող բայական տարատեսակությունների և անկանոնությունների մասին՝ Գ. Ղափանցյանը նշում է, որ. «Հնդեվրոպական բազմաթիվ և բազմատեսակ հնագույն բայաձևերը հետագայում պարզանում են՝ կազմելով քիչ թե շատ հավասարակշռված և ամուր մի սիստեմ, յուրաքանչյուր առանձին լեզվում, որոնց թվում և հայոց լեզվի բայի մեջ, ինչպես վկայված է հինգերորդ դարի առաջին անգամ գրանցված նրա ձևի մեջ...»¹:

Անկանոն բայերը քննելու համար առաջին հերթին անհրաժեշտ է առանձնացնել դրանք, սակայն այս հարցի վերաբերյալ կարծիքները տարբեր են: Խոնարհման համակարգում անկանոնություններ ունեցող բայերը տարբեր լեզվաբաններ տարբեր ձևերով են որակել և ներկայացրել՝ երբեմն նույնիսկ գրեթե ջնջելով կանոնավոր և անկանոն բայերի միջև եղած սահմանը՝ դրանք համարելով բայերի հին կամ նոր ձևեր, առավել մշակված կամ դեռևս անմշակ ձևեր: Ս. Ղազարյանը հետևյալ մոտեցումն ունի. «Հայերենի կանոնավոր և անկանոն կամ զարստուղի կոչված բայերը իրենց խոնարհման համակարգով չեն տարբերվում միմյանցից: Նրանց տարբերությունը միայն այն է, որ անկանոն կոչված բայերը անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում հանդես են գալիս կամ ավելի մաշված, կամ տարբեր արմատներով»²: Այս տեսակետից ելնելով՝ Ս. Ղազարյանն ընդունում է անկանոն բայերի տարանջատման նույնահիմքության և տարահիմքության սկզբունքը, որը համարվում է ամենատարածված տեսակետը քերականագիտության մեջ: Նշենք, որ նույնահիմք անկանոն բայերի դեպքում էլ հիմքը կարող է բացարձակորեն նույնը չմնալ, այլ ենթարկվել որոշակի ձևային փոփոխությունների:

Ս. Ղազարյանը հակված է այն կարծիքին, որ «Այսպես կոչված անկանոնությունը երևում է ոչ թե խոնարհման համակարգի, այլ բայերի ձևերի մաշվածության, առանձին հնչյունների և ձևերի կորստի կամ կրկնակի ձևերի առկայության մեջ»³: Այսինքն, ըստ նրա, անկանոն բայերը գուտ պայմանականորեն են առանձնացված կանոնավորներից՝ հաշվի առնելով ձևային, արմատական, ժամանակային և էլի ինչ-ինչ առանձնահատկություններ: «Մաշված բայաձևերը» կարելի է ընկալել որպես միայնակ մնացած հին ձևեր, որոնք լեզվի զարգացման սովյալ

¹ Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Եր., 1961, էջ 271:

² Ս. Ղ. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 361:

³ Նույն տեղում, էջ 362:

փուլում արդեն նման չեն ընդհանուր համակարգի ձևերին, ուստի և համարվում են անկանոնություններ:

Անկանոն բայերի ծագման վերաբերյալ կարելի է ասել, որ դրանց մեծ մասն ունի հնդեվրոպական ծագում: Այդ բայերի հիմքերն առկա են դեռևս հնդեվրոպական մայր լեզվում և հնչյունական ու հիմքային գանազան փոփոխությունների հետևանքով ստացել են բառային այն տեսքը, որն առկա է գրաբարում: Պատմական հետազոտողները ընթացքում այդ բայերը նորից ենթարկվել են ինչպես հնչյունական, այնպես էլ հիմքային՝ արմատական փոփոխությունների, մի մասն էլ առհասարակ դուրս է եկել գործածությունից կամ կանոնավորվել է: Ներկայացնենք անկանոն բայերից մեկի՝ շտշ բայի կապը հնդեվրոպական նախալեզվի հետ, ինչպես նաև դրա ծագման և զարգացման պատկերը ըստ Գր. Ղափանցյանի. «...լսեմ, առք.. լուայ, հրամ. լուր-լուարուք, ներկա բունը (*լուս-եմ) եղել է *slus-em, ինչպես սլավ. слышать//слышать, հնդեվրոպական k'lu-արմատից „s“ աճականով, որ հաճախ նաև այլ հնդեվ. լեզուներում (սլավ...հնդիրանական), իսկ աորիստի բունը (lu) կորցրել է արմատի սկզբի „s“-ն (lu-slu)»⁴:

Կանոնավոր և անկանոն բայերի առանձնահատկությունները, ինչպես նաև անկանոն բայերի տեսակները նշելիս առաջին հերթին հաշվի են առնվում կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում նրանց կրած զանազան փոփոխությունները, քանի որ շեղումներ ներկայի հիմքից կազմվող ժամանակներում հիմնականում չեն նկատվում:

Ուսումնասիրողներն անկանոն բայերը սովորաբար բաժանում են երկու հիմնական խմբի. ա) բայեր, որոնց անցյալ կատարյալի հիմքը կազմվում է նույն բայից կամ բայարմատից, սակայն կարող է կրել որոշակի հնչյունական և ձևային փոփոխություններ կամ ունենալ որոշ շեղումներ, բ) բայեր, որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում ստանում են բոլորովին այլ արմատ, որը կարող է լինել տվյալ բային հոմանիշ, նույնանիշ, իմաստով մոտ կամ հարաբերակից այլ բայի արմատ:

Թեև լեզվաբանները մեծ մասամբ այսպիսի ընդհանուր բաժանում կատարում են, բայց այս հարցի վերաբերյալ կարծիքները տարբեր են: Մ. Աբեղյանն ավելի շատ խմբեր է առանձնացնում՝ առաջին հերթին շեշտը դնելով բայերի կազմության, ունեցած վերջավորությունների, խոնարհման տիպերի բազմազանության, խոնարհման այլընտրանքային տարբերակների առկայության և քերականական այլ հատկանիշների վրա: Հաշվի առնելով քերականական այդ հատկանիշները՝ Մ. Աբեղյանն առանձնացնում է ութ խումբ⁵, որոնց մեջ մտնող բայերն էլ քանակապես գերազանցում են այլ լեզվաբանների (Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Ա. Աբրահամյան, Ս. Ղազարյան, Ռ.

⁴ Գ. Ա. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 292:

⁵ Տե՛ս Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Եր., 1936, էջ 45-55:

Ղազարյան, Է. Մկրտչյան) աշխատություններում ներկայացված անկանոն բայերի թիվը: Ներկայացնենք այդ խմբերի տեսակները և նրանց մեջ ընդգրկված բայերը:

Առաջին խմբում ընդգրկված են այն բայերը, որոնք խոնարհվում են ինչպես *-չիմ, -նում* վերջավորություն ունեցող բայերը (վերջավորություն ասելով՝ նկատի է առնվում սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի առաջին դեմքի վերջավորությունը), դրանք են՝ *մեղանչել, ճանաչել* (այս բայի համար իբրև անկանոնություն է նշվում *ճ-ի ծ փոխվելու հանգամանքը՝ ճանաչեմ-ծանեայ*): Նշենք, որ *մեղանչել* բայը լեզվաբանների մի մասը ներառում է բացառությունների շարքում՝ հավանաբար հաշվի առնելով շեղման համեմատաբար քիչ աստիճանը: *Միաձանիլ, պրծանիլ, զառածիլ, անկանիլ, ծիրիլ, ազանիլ* բայերի անկանոնությունն այն է, որ խոնարհման կանոնավոր ձևերին զուգահեռ ունեն նաև անկանոն համարվող ձևեր: Կանոնավոր ձևերում այս բայերը խոնարհվում են կրավորաձև, իսկ անկանոն ձևերում՝ խառը տիպի խոնարհմամբ: *Անկանիլ* բայը խոնարհման կանոնավոր ձևերի հետ ունի նաև ստորադասական երկրորդ ապառնու անկանոն ձև՝ *անկեայց*, իսկ բուն հրամայականի հոգնակի թվում ունի միայն *անկերո՛ւք* ձևը: *Ազանիլ* բայը բուն հրամայականի հոգնակի թվում կանոնավոր ձևին զուգահեռ ունի նաև *ազերո՛ւք* ձևը: *Յանցանել* բայը կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում խոնարհվում է խառը տիպով: *Չանցանել, զառանցանել, ներկանել* բայերը կանոնավոր ներգործաձև խոնարհմանը զուգահեռ անկանոն ձևերում խոնարհվում են խառը տիպով: *Յառնել (յարնչիլ)* ամբողջապես խոնարհվում է խառը տիպով: *Յառուլ* բայն ունի խոնարհման կրավորաձև և խառը տիպեր: *Երդնում* բայը խոնարհվում է կրավորաձև և խառը տիպերով և այս խմբի վերջին բայը *քաղցնուլ բայն* է (անցյալ դերբայ՝ քաղցեալ):

Երկրորդ խմբի բայերը խոնարհվում են *-անեմ, -անիմ, -ում* վերջավորություն ունեցող բայերի պես: *Հանել, ածել, բերել, հեղուսել, նստիլ, զգածիլ, դիպիլ, առնուլ, կալուլ (կալնուլ), հեղձնուլ, ջեռնուլ, կլանել (կլնուլ), հարկանել, հարուլ*:

Երրորդ խմբի բայերը խոնարհվում են *-ամ* վերջավորություն ունեցող բայերի պես. դրանք հինգն են՝ *ասել, գիտել, կարել, մարթել, մերկել*. նշենք, որ այս հինգ բայերը Հ. Ավետիսյանն ու Ռ. Ղազարյանը համարում են որպես կատարյալի հիմքը կազմելիս բուն կանոնից շեղված ձևեր, բայց ոչ անկանոն բայեր (նրանց նշած անկանոն բայերի ցանկում այս բայերը չկան): Ըստ ընդհանուր կանոնի՝ որպես է լծորդության պարզ բայեր՝ այս հինգ բայերի կատարյալի հիմքը պետք է կազմվեր *-եաց/-եց* վերջավորությամբ, սակայն շեղվելով կանոնից՝ կազմվում է *-աց* վերջավորությամբ:

Չորրորդ խմբի մեջ ընդգրկված անկանոն բայերը նման են երրորդ խմբի բայերին, միայն այն տարբերությամբ, որ կատարյալի հիմքից

կազմվող ժամանակներից մի քանիսը խոնարհվում են կրավորաձև:

Դրանք են՝ *յուսայ, լողայ, ջանայ, գթայ, դողայ, ծիփայ, դլայ, գոռայ, խանդայ, սգայ, սուրայ, ջանայ, ոռնայ, եռայ, գեռայ, սպառնայ, ցնծայ, զգայ, որսայ, ողբայ, հոգայ, խոկայ*: Այս բայերից *յուսայ* և *գթայ* (ինչպես նաև *փութայ* բայը) բայերը Հ. Ավետիսյանն ու Ռ. Ղազարյանն ընդունում են որպես բացառություն, քանի որ այս բայերը, ըստ կանոնի, ներգործաձև խոնարհվելու փոխարեն խոնարհվում են կրավորաձև բացի բուն հրամայականի եզակի 2-րդ դեմքից, որտեղ խոնարհվում են ներգործաձև, սակայն, այս առանձնահատկությամբ հանդերձ, նրանք այս բայերը չեն ներառում անկանոն բայերի շարքում:

Հինգերորդ խմբի բայերը խոնարհվում են *-ամ, -եմ* վերջավորությունն ունեցող բայերի պես. դրանք են *լուանայ, մոռանայ, ընթանայ, իմանայ, ընկենուլ* (Հ. Ավետիսյանը և Ռ. Ղազարյանը *ընկենուլ* բայը ներառում են բացառությունների մեջ):

Վեցերորդ խմբի մեջ մտնող բայերի առանձնահատկությունն այն է, որ կատարյալի հիմքում ունեն *ց* կամ *ճ* բաղաձայնը, որը պահպանվում է ապառնի ժամանակների մեջ *ց, ջ* տառերից առաջ և հրամայականում: Այդ բայերն են՝ *բանայ, թանայ, կայ, կեայ, լայ, ընթեռնուլ, յենուլ, զգենուլ, լնուլ, խնուլ, բառնայ, դառնայ* (այս բայերից *բանայ, թանայ, լայ, ընթեռնուլ, լնուլ, խնուլ, բառնայ, դառնայ, զգենուլ, յենուլ* բայերը որոշ լեզվաբաններ ներառում են պարզապես բացառությունների շարքում և չեն համարում անկանոն):

Յոթերորդ խմբի բայերը կատարյալի բնում ունեն *ր* բաղաձայնը, դրանք են՝ *առնել (բուն՝ արար), դնել (բուն՝ դիր), տանիլ (բուն՝ տար), լսել (բուն՝ լու, լուր), տալ (բուն՝ տու, տուր)*:

Ութերորդ խմբի բայերի կատարյալի բունը՝ հիմքը, վերցվում է ուրիշ արմատից: Դրանք են՝ *ուտել (կեր), գալ (եկ), երթալ (չոգ, երթ), ըմպել (արբ)*⁶, (այս կետում ներառված բայերն ընդունված է անվանել տարարմատ անկանոն բայեր): Մ. Աբեղյանն առանձնացնում է նաև պակասավոր բայերի խումբ՝ *ունիմ, պարտիմ, պիտի, մարթի, գոգ, եմ, չիք* (վերջինը ժխտական խոնարհմամբ արտահայտված բայ է, այլ ժամանակաձևեր չունի, իբրև դրական ձև համարվում է *իք* ձևը, որը շատ քիչ գործածական է):

Ամփոփելով Մ. Աբեղյանի՝ անկանոն բայերի դասակարգումը՝ կարելի է ասել, որ անկանոն բայերի խմբերի թիվն ավելացել է հիմնականում այն բայերի հաշվին, որոնք խոնարհման կանոնավոր ձևերին գուցա հետ ունեն նաև այլ՝ անկանոն համարվող ձևեր, ինչպես նաև որևէ բացառություն, շեղում, գուցաձևություն ունեցող բայերի մեծ մասը տեղ է գտել Մ. Աբեղյանի ներկայացրած անկանոնների շարքում:

Գ. Ղափանցյանն անկանոն բայերը ներկայացնելիս դրանք բաժանում է երկու խմբի՝ առաջնորդվելով նույնահիմքության և տարահիմ-

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 45-55:

քության սկզբունքով: Առաջին խմբի մեջ ներառում է հետևյալ բայերը. *եղանիս, լինիս, գոս, առնեմ, դնեմ, տամ, լսեմ, հարկանեմ*:

Երկրորդ խմբի մեջ ընդգրկված բայերը՝ *ուտել, ըմպել, գալ, երթալ, ունիլ, գոլ*, Գ. Ղափանցյանը համարում է պակասավոր, որտեղ միաձուլվում են անկանոն բայերի երկրորդ խումբը և պակասավոր բայերը: Լեզվաբանն այսպես է մեկնաբանում այդ երկու խմբի բայերի միաձուլումը մեկ խմբում. «Իմ կարծիքով դրանք տարբեր ցեղային լեզուների ներդրումն են ընդհանուր էթնիկական լեզվում, ուր այդ հոմանիշները կամ ավելի շուտ նույնանիշները օգտագործվում են տարբեր ժամանակների (ներկա և աորիստի) թեմատիկ կազմությունների մեջ»⁷:

Ս. Ղազարյանն անկանոն բայերի համակարգը ներկայացնելիս առաջնորդվում է հետևյալ երկու սկզբունքներով. ա) ներկայի և անցյալի հիմքից կազմվող ժամանակներում միևնույն արմատ ունեցող բայեր՝ *եղանիլ (եղ), լինիլ (լի), գոլ (գո), առնել (արար) (առնել* բայը անկանոն բայերից միակն է, որի կատարյալի հիմքը կազմվել է իր իսկ արմատի կրկնությամբ), *դնել (դի՝ է նախահավելվածով), տալ (տու է նախահավելվածով), լսել (լու), հարկանել (հար, հարկանել* բայի *կ*-ն համարվում է աճական կամ ուղղակի ոչ արմատական մասնիկ, այդ պատճառով էլ կատարյալի հիմքում դուրս է եկել, որի հետևանքով էլ *հարկանել* բայն ընդգրկվել է անկանոնների շարքում), *ճանաչել (ճան), յառնել (յար), մեղանչել (մեղ)*⁸:

Առավել քիչ անկանոնություններ դրսևորող բայերից են վերը նշված *հարկանել*, ինչպես նաև *ճանաչել, յառնել, յանցանել, մեղանչել* բայերը: Այս բայերի շեղումները կանոնավոր բայերի համեմատությամբ աննշան են: Այդ տիպի շեղումներից մեկը կարող է լինել այն, որ տվյալ բայը տարբեր ժամանակաձևերում պարբերաբար փոխի խոնարհման տիպը՝ ենթարկվելով մեկ ներգործակերպ, մեկ կրավորակերպ, երբեմն էլ խառը խոնարհման տիպերին, մյուսը կարող է լինել որևէ հնչյունի կորուստը կամ հավելումը կատարյալի հիմքի կազմության ժամանակ և այլն:

բ) Անկանոն բայերի երկրորդ խումբը, ընդհանուր առմամբ համապատասխանելով լեզվաբանների մեծ մասի ընդունած սկզբունքին, այսինքն՝ տարարմատությանը կամ տարահիմքությանը (երբ կատարյալի և ներկայի հիմքերը տարբեր են), ներառում է նաև պակասավոր բայերը: Պակասավոր բայերի մասին Ս. Ղազարյանը գրում է հետևյալը. «Ներկայի և անցյալ կատարյալի հիմքից կազմված ժամանակներում տարբեր արմատներ ունեցող բայերը, սովորաբար, ինչպես իրենց ձևավորմամբ և խոնարհման համակարգով, նույնպես և ծագմամբ տարբեր են ներկայի և անցյալ կատարյալի հիմքերում: Նրանք տարբեր բառեր են և միմյանց առնչվում են այնքանով, որ լրացնում են իրար քերական

⁷ Գ. Ա. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 292:

⁸ Տե՛ս Ս. Ղ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 362-370:

նական իմաստներով: Նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որոշ ձևերում և այդ հիմունքով էլ պակասավոր է, այսինքն՝ չունի իր դիմավոր բոլոր ձևերը, հետևաբար՝ հայերենի պակասավոր համարված բայերը նույնպես կարելի է դասել այդ կարգի բայերի մեջ: Այդ բայերը հետևյալներն են. *ուտել, ըմպել, գալ, երթալ, ունել, եմ, լինել, գոլ, գոգ, պարտել, չիք, կայ*⁹: Այս սկզբունքից ելնելով՝ տարահիմք և պակասավոր բայերը ներառվում են մեկ ընդհանուր խմբում՝ միավորելով նաև անկանոնության երկու հատկանիշները: Տարահիմք անկանոնների և պակասավորների այդպիսի խմբավորում նկատում ենք նաև այլ լեզվաբանների դասակարգումներում:

Անկանոն բայերի տարանջատման նույնահիմքության և տարահիմքության, ինչպես նաև պակասավոր բայերի՝ անկանոններից առանձնացման կամ անկանոնների առանձին տեսակ համարելու սկզբունքին հետևում են Ռ. Ղազարյանը, Հ. Ավետիսյանը, Է. Մկրտչյանը, Ա. Աբաջյանը, Ն. Դիրբարյանը, Ա. Յուզբաշյանը և ուրիշներ: Նշենք, որ որոշ լեզվաբաններ, պակասավորներն ու տարահիմքերը առանձնացնելով հանդերձ, նույն բայը ներկայացնում են և՛ տարահիմք անկանոնների շարքում, և՛ պակասավորների շարքում, օրինակ՝ *գալ, երթալ, ըմպել, լինել, ունել, ուտել և այլն*:

Այն մասին, թե ինչու են որոշ բայերի մի քանի ժամանակաձևեր բացակայում, որից ելնելով էլ դրանք համարվում են պակասավոր բայեր, նշենք, որ պատմական զարգացման ընթացքում լեզվից կարող են դուրս մնալ ինչպես բառապաշարային, այնպես էլ քերականական որոշ ձևեր, իրողություններ: Դրանց կիրառությունն աստիճանաբար կարող է նվազել, սակավանալ, իսկ երկար ժամանակ չկիրառվելու հետևանքով կարող է նաև առհասարակ դուրս մնալ լեզվական համակարգից: Բնարկե, նմանատիպ այլ քերականական երևույթների համաբանությամբ (տվյալ դեպքում այլ բայերի համապատասխան ժամանակաձևերի նմանությամբ) կարելի է վերականգնել բայերի պակասող ձևերը, սակայն դա արհեստական կլինի և ինչ-որ առումով կխաթարի լեզվի զարգացման բնականոն ընթացքը:

Վ. Համբարձումյանը, խոսելով պակասավոր բայերի և դրանց առաջացման պատճառների մասին, գրում է. «Գրաբարում բայերի խոնարհված, առհասարակ թեքված ձևերը ոչ միշտ են ամբողջական: Լինում են բայեր, որոնք չունեն առանձին ժամանակներ. այլև տվյալ ժամանակի որոշ ձևեր: Այդ երևույթը պայմանավորված է հին գրական հայերենով ավանդված գրավոր հուշարձաններում այս կամ այն բայի ձևաբանորեն փոփոխված ձևերի կիրառության ոչ լրիվությամբ, այսինքն՝ եղել են բայեր, որոնց փոփոխված ձևերի մի մասն այդպես էլ չի գործածվել գրավոր հուշարձաններում և ըստ այդմ էլ մեզ մնացել է ան-

⁹ Նույն տեղում, էջ 371:

հայտ»¹⁰: Այսպիսին են պակասավոր բայերի առաջացման պատճառներն ու վարկածները, որոնք իհարկե ոչ ամբողջությամբ են ներկայացնում պատկերը:

Շարունակելով անկանոն բայերի վերաբերյալ եղած կարծիքների համադրումը՝ նշենք, որ Հ. Աճառյանն անկանոն բայերը բերում է մեկ ընդհանուր խմբով և ներկայացնում հետևյալ ցանկը՝ *առնել, դնել, ըմպել, լսել, ճանաչել, յառնել, ուտել, ունել, տանել, գալ, երթալ, տալ*¹¹: Այստեղ ներկայացված են բայեր և՛ նույնահիմք, և՛ տարահիմք տեսակներից:

Ջուգահեռներ անցկացնելով բերված կարծիքների և բայական բաժանումների միջև՝ նկատում ենք բայերի տեղաշարժ մի խմբից մյուսը. պակասավոր բայերից մի քանիսը ներառվել են անկանոնների շարքում կամ հակառակը, անկանոններից անցել են պակասավորների շարքը կամ էլ ընդգրկվել են մեկից ավելի շարքերում՝ հաշվի առնելով խոնարհման որոշ ժամանակաձևերի բացակայությունը: Որոշ բայեր պակասավորներից անցել են անկանոնների մեջ՝ հաշվի առնելով տարահիմքության դեպքում բայի հիմքի փոխարինումը նոր, հոմանիշ հիմքով: Օրինակ՝ Գ. Ղափանցյանի աշխատության մեջ *ուտել, ըմպել, գալ, երթալ* (ունեն կատարյալի հիմքից կազմվող բոլոր չորս ժամանակները և եզակի ու հոգնակի բոլոր դեմքերը) բայերը բերված են որպես անկանոն պակասավոր բայեր¹²: Ինչպես վերը նշվեց, Գ. Ղափանցյանը չի առանձնացնում տարահիմք անկանոն բայերը պակասավորներից և դրանք համարում է մեկ խումբ: Հետաքրքիր դիտարկում կա *լինել* և *եղանիլ* բայերի վերաբերյալ: Ա. Աբրահամյանը *եղանիլ* բայի *եղ* արմատը նշում է որպես *լինել* անկանոն տարահիմք բայի կատարյալի հիմք, որով խոնարհվում է անցյալ կատարյալ և երկրորդ ապառնի ժամանակներում՝ բուն և հորդորական հրամայականներում՝ պահպանելով սեփական *լի* արմատը¹³: Մ. Ղազարյանը և Գ. Ղափանցյանը *եղանիլ* և *լինել* բայերը բերում են որպես տարբեր անկանոն բայեր, ընդ որում Գ. Ղափանցյանը որպես *եղանիլ* բայի կատարյալի հիմք բերում է հենց *եղ* արմատը, այսինքն՝ այն համարվում է նույնահիմք անկանոն բայ, իսկ *լինիմ* բայի վերաբերյալ նշում է, որ «չունի աորիստ (սահմ. եղ.)», իսկ մնացած ձևերը, բացի ստորադասական եղանակի եզակի առաջին ապառնուց, կազմվում են *լի* արմատով¹⁴: Մ. Աբեղյանը *եղանիմ* և *լինիմ* բայերը բերում է որպես պակասավոր բայեր, ինչպես նաև որպես *եմ* և *գում* պակասավոր բայերի պակասը լրացնող ձևեր¹⁵: Մ. Ղազարյանը *ե-*

¹⁰ Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2018, էջ 305:

¹¹ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 4, Բ գիրք, Եր., 1961, էջ 32:

¹² Տե՛ս Գ. Ա. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 293:

¹³ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 204:

¹⁴ Տե՛ս Գ. Ա. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 291-292:

¹⁵ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 56, 59:

ղանհիլ բայը նշում է որպես նույնարմատ անկանոն բայ, կատարյալի հիմք է նշվում *եղը*, ներկայի հիմքից կազմվող ժամանակները նշում է որպես ոչ գործածական, անհրաժեշտության դեպքում կիրառվում է *լի-նիլ* բայի համապատասխան ձևերը¹⁶:

Լինիլ բայի պակասող ձևերը (անցյալ կատարյալ, երկրորդ ապառնու եզակի 1-ին դեմք) չեն լրացվում այլ բայերով, մյուս ձևերը կազմվում են *լի* արմատով: Այս տեսակետից ելնելով՝ *լինիլ* բայը ավելի շուտ պակասավոր բայ է, քան անկանոն. անկանոն է այնքանով, որ իր խոնարհման ընդհանուր համակարգով շեղվում է սահմանված կանոններից: Իրականում *եղանիլ*, *լինիլ*, ինչպես նաև *եւ* բայերի միմյանց փոխարինելու, որոշ դեպքերում առանձին հանդես գալու հանգամանքն ունի գիտականորեն հիմնավորված պատճառներ: Ս. Ղազարյանն այդ մասին գրում է. «Հայերենի *եւ*, *լինիւմ* և *եղանիւմ* օժանդակ բայերը իրենց գործածությամբ, միմյանց փոխարինելու, ինչպես նաև իրենց ծագմամբ կապված են միմյանց հետ: *Եւ* օժանդակ բայը, որը ծագում է հնդեվրոպական *es* բայից, հայերենում պահպանվել է *եւ* ձևով, որի մեջ *ւ* դեմքի վերջավորությունն է. այդ բայի անորոշ ձևը հավանաբար եղել է *ել*, որը պահպանվել է *եղանիլ* բայի մեջ *լ* հնչյունի *ղ*-ի փոխանցմամբ: *Լինիլ* բայի արմատը հայերենում *լ*-ն է կամ *լէ*, որը հավանաբար *ել-ele* բառակի տարբերակն է, որտեղ արմատական բառի բոլոր հնչյունները /es/ ընկել և ստեղծվել է նոր բառ, բայական *լ-լէ* մասերով, *ն* ածանցով, որին կցվել է հայերենի անորոշ դերբայի *լ* վերջավորությունը՝ տալով նրան բայական նոր կերպարանք»¹⁷: *Գող* բայը Գ. Ղափանցյանն ընդգրկում է անկանոն բայերի առաջին խմբում՝ հաշվի առնելով ներկայի և կատարյալի հիմքերի նույնությունը¹⁸, իսկ Ս. Աբրահամյանը այդ նույն բայն ընդգրկում է պակասավոր բայերի մեջ՝ հաշվի առնելով խոնարհման համակարգում նրա պակասող ձևերը¹⁹:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ անկանոն բայերը լինում են նույնահիմք և տարահիմք: Նույնահիմք անկանոն բայերի հիմքը կարող է ենթարկված լինել որոշ հնչյունական փոփոխությունների: Տարահիմք անկանոն բայերի պարագայում լինում է ներկայից տարբեր բոլորովին այլ հիմք, հաճախ տվյալ բայի հոմանիշ կամ նույնանիշ որևէ այլ բայից վերցված: Միևնույն բայը կատարյալի հիմքի համար կարող է ունենալ մի քանի տարբերակ, ինչպես նաև միևնույն բայի տարբեր ժամանակաձևերի համար ունենալ տարբեր ձևեր: Որոշ լեզվաբաններ անկանոնների տարատեսակ են համարում նաև պակասավոր բայերը, որտեղ տվյալ բայը խոնարհման համակարգում ունի պակասող ձև կամ ձևեր կամ առհասարակ ունի միայն մեկ կամ երկու ձև, ինչպես օրինակ՝ *չիք* բայը, որն ունի միայն այս ձևը: Որոշ լեզվաբաններ էլ պակա-

¹⁶ Տե՛ս Ս. Ղ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 362:

¹⁷ Ս. Ղ. Ղազարյան, նշվ. աշխ. էջ 363:

¹⁸ Տե՛ս Գ. Ա. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 292:

¹⁹ Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ. էջ 209:

սավոր բայերը ներկայացնում են որպես բայերի առանձին տեսակ, կամ որոշ անկանոն տարահիմք բայեր տեղ են գտնում և՛ տարահիմք անկանոնների մեջ, և՛ պակասավոր բայերի մեջ: Նշենք նաև, որ տարբեր լեզվաբաններ անկանոն բայերի մասին խոսելիս առանձնացրել են տարբեր բայախմբեր՝ նշելով դրանց դրսևորած անկանոնությունները, երբեմն էլ պակասավոր համարվող բայական ձևերը ընդգրկվել են անկանոն բայերի խմբերում և, հակառակը, անկանոն բայերը տեղ են գտել պակասավոր բայերի շարքում: Որոշ լեզվաբանների դասակարգման մեջ տարբերություններ են նկատվում նաև անկանոն բայերի նույնահիմք և տարահիմք դասակարգման մեջ մտնող բայերի ցանկում, դրանք ևս լիարժեքորեն չեն համապատասխանում իրար:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ կան մի խումբ անկանոն բայեր իրենց մեծ ու փոքր տարատեսակ խմբերով, և պայմանավորված այն բանով, թե ինչ սկզբունք է հիմք ընդունվում բայերի ունեցած շեղումները, բացառությունները ներկայացնելու և դասակարգելու համար, դրանք դասակարգում կամ ներառվում են այս կան այն խմբի մեջ անվանելով այն ըստ ընտրված սկզբունքի:

Ստորև ներկայացվում է աղյուսակ, որտեղ տրվում են մի քանի լեզվաբանների անկանոն բայերի դասակարգման պատկերը: Ա-ով նշվում են այն անկանոնները, որոնք տեսակներով տարանջատված չեն, **պ**-ով՝ պակասավորները, **տ**-ով՝ տարահիմք անկանոնները, **ն**-ով՝ նույնահիմք անկանոնները, **տ-պ**-ով՝ անկանոնների այն տեսակը, որտեղ նույն տեսակի տակ են ներկայացված տարահիմք և պակասավոր անկանոնները, **տ, պ**-ով՝ այն բայերը, որոնք ներկայացված են առանձին խմբերով՝ տարահիմք և պակասավոր, սակայն կրկնվում են այս երկու խմբերում, **ն, տ-պ**-ով՝ այն բայերը, որոնք ընդգրկված են և՛ նույնահիմք անկանոնների, և՛ տարահիմք պակասավորների շարքում: Աղյուսակում չենք ընդգրկել Մ. Աբեղյանի առանձնացրած անկանոն բայերը՝ հաշվի առնելով, որ դրանց ցանկը բավական մեծ է. անկանոն բայերը ութսունից ավելի են, պակասավորները տասնմեկն են: Մ. Աբեղյանի դասակարգումը մեծ մասամբ չի համընկնում մյուս լեզվաբանների բերած անկանոն բայերի բաժանումներին և խմբատեսակներին (համընկնում է միայն 8-րդ խումբը՝ տարահիմք անկանոնների և պակասավորների մեծ մասը), այդ իսկ պատճառով դրանք մանրամասն ներկայացրել ենք հոդվածում, բայց չենք ներկայացրել աղյուսակում:

Քրարարի անկանոն և պակասավոր բայերի աղյուսակ

Հեղինակ		Բայեր	Հ. Աճառյան	Գ. Ղափանցյան	Ռ. Ղազարյան	Հ. Ավետիսյան	Ա. Աբրահամյան	Է. Մկրտչյան	Ս. Ղազարյան	Վ. Համբարձումյան
1	առնել	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
2	երդնուլ			ն	ն			ն		ն
3	դնել	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
4	լսել	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
5	հարկանել		ն	ն	ն			ն	ն	ն
6	ճանաչել	ա		ն	ն	ն	ն	ն	ն	ն
7	յառնել	ա		ն	ն	ն	ն	ն	ն	ն
8	լինել		ն	տ, պ	տ, պ	տ	տ	ն,տ-պ	տ	տ
9	ըմպել	ա	տ-պ	տ, պ	տ, պ	տ	տ	տ-պ	տ	տ
10	երթալ	ա	տ-պ	տ, պ	տ, պ	տ	տ	տ-պ	տ	տ
11	գալ	ա	տ-պ	տ, պ	տ, պ	տ	տ	տ-պ	տ	տ
12	տանել	ա		ն	ն			ն		ն
13	տալ	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
14	ուներ	ա	տ-պ	տ, պ	տ, պ	տ	տ	տ-պ	տ	տ
15	ուտել	ա	տ-պ	տ, պ	տ, պ	տ	տ	տ-պ	տ	տ
16	եմ			պ	պ	պ	պ	տ-պ	պ	պ
17	գոլ		ն	պ	պ	պ	պ	ն,տ-պ	պ	պ
18	կայ			պ	պ	պ	պ	տ-պ	պ	պ
19	պարտել			պ	պ	պ	պ	տ-պ	պ	պ
20	գոգ		տ-պ	պ	պ	պ	պ	տ-պ	պ	պ
21	չիք			պ	պ	պ	պ	տ-պ	պ	պ
22	մեղանչել					ն		ն		ն
23	եղանիլ		ն					ն		ն
24	յանցանել					ն		ն		ն

ВИКТОРИЯ МУРАДЯН – Вопросы о классификации неправильных и недостаточных глаголов.– В статье рассматриваются неправильные и недостаточные глаголы габара, критерии их классификации, сходство и различия между классификациями, предлагаемыми лингвистами, сравнительный анализ этих глаголов. Параллельно с рассмотрением мнений, в статье представлены соответствующие списки с неправильными глаголами, а также объясняются основания неправильности и принципы группировки глаголов. Главным из рассматриваемых вопросов является тот, что разные лингвисты включают один и тот же глагол в разные группы, предъявляя определенные обоснования. Общий анализ подготовлен и завершен в таблице, которая приводится в конце. В ней точнее видны различия в существующих подходах, включение глаголов в разные группы.

Ключевые слова: *неправильные глаголы, правильные глаголы, грамматика, grabar, язык, классификация, языковые развитие, спряжение, языковая система*

VIKTORYA MURADYAN – *About the Issue of Classification of Irregular and Defective Verbs.* – The article studies the irregular and defective verbs of Grabar, the criteria of their classification, the similarities and differences between the classifications made by linguists, and a comparative study of these verbs. The examination of the opinions presented in the article is combined with the corresponding lists of irregular verbs, in which the bases of the irregularity and the principles of grouping the verbs are mentioned. One of the main issues under consideration is that different linguists include the same verb in different groups, presenting certain justifications. The general analysis is summarized and completed in the table at the end, where the differences in the existing approaches and verbs included in different groups are seen more clearly.

Key words: *irregular verbs, regular verbs, grammar, Grabar, language, classification, language development, conjugation, language system*

ՓՈՆԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՆ «ՀԱԳՈՒՍՏ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

ԼՈՒՄԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և վեր հանել «հագուստ» հասկացությունն նշող յուրաքանչյուր բառի փոխաբերական իմաստը (իմաստները), որը հանդես է գալիս միևնույն բառի մակարդակում, նրա հիմնական իմաստի կողքին՝ իբրև ածանցյալ իմաստ, առաջանում է հիմնականում բառի փոխաբերական գործածության հիման վրա և առավել կայուն է: Այսինքն, ամեն բառ, անկախ իր իմաստների բազմությունից, ունենալով իր հիմնական իմաստը, խոսքի մեջ կարող է գործածվել նաև այնպիսի առարկաների, երևույթների, հատկանիշների փոխարեն, որոնք ինչ-որ կողմով առնչվում կամ նմանվում են ուղղակի իմաստ ցույց տված առարկային, երևույթին և այլն: Այդ ընթացքում կատարվում են հետևյալ իմաստային անցումները՝ **առարկա**→**առարկա**, **առարկա**→**հատկանիշ**, **հատկանիշ**→**հատկանիշ**, **հատկանիշ**→**առարկա**: Սովորաբար փոխաբերական իմաստը դրսևորվում է ըստ ձևի, գույնի, չափի և այլ առարկաների նմանության, գործողության բնույթի և այլ գույճորդումների: «Հագուստ» հասկացությունն նշող բառիմաստների (հատկապես՝ փոխաբերական) փոփոխությունները պայմանավորվում են նաև բառակազմական իրողություններով: Բառաբարդման և ածանցման ժամանակ որպես բառակազմական հիմք հանդես եկող բաղադրիչները (բառ, արմատ) պահպանում են իրենց հիմնական ընդհանուր իմաստները, իսկ հիմք(եր)ի և հավելվող բաղադրիչների շնորհիվ ստանում են նոր բառային իմաստներ (նաև՝ փոխաբերական) և կազմվում նոր բառեր: «Հագուստ» իմաստային դաշտի միևնույն բառանունը լեզվի զարգացման տարբեր փուլերում կամ գրական լեզվի մյուս տարբերակում, ինչպես նաև բարբառներում կարող է ունենալ բոլորովին տարբեր փոխաբերական իմաստ: «Հագուստ» իմաստն արտահայտող բառերի փոխաբերական իմաստները լայն հնարավորություն են ստեղծում նաև բազմաթիվ դարձվածային միավորների առաջացման համար:

Բանալի բառեր – *«հագուստ», իմաստային դաշտ, փոխաբերություն, բառաբարդում, ածանցում, նորակազմություն, դարձվածային միավոր*

Պայմանավորված խոսքային իրադրությամբ՝ «հագուստ» իմաստային դաշտում շատ բառանուններ, իրենց հիմնական իմաստներից բացի, ունեն նաև երկրորդական, ածանցյալ իմաստներ, որոնցից մեկը հիմնականում փոխաբերական է: Իմաստաբանական բարդ գործընթաց

ցի շնորհիվ է, որ առարկաների ու երևույթների անվանումները ստանում են իմաստային նոր երանգներ¹: Պետք է տարբերել, սակայն, բառի փոխաբերական գործածությունը և փոխաբերական իմաստը. բառի փոխաբերական գործածության շրջանակները անսահմանորեն լայն են, և, կարելի է ասել, յուրաքանչյուր բառ կարող է փոխաբերաբար գործածվել: Իսկ «հագուստ» հասկացությունն նշող յուրաքանչյուր բառի փոխաբերական իմաստը հանդես է գալիս միննույն բառի մակարդակում, նրա հիմնական իմաստի կողքին՝ իբրև ածանցյալ իմաստ, որն առաջանում է հիմնականում բառի փոխաբերական գործածության (նաև փոխանունության և այլաբերության) հիման վրա և առավել կայուն է, ինչպես՝ **զգեստ**²- ուղղակի կամ անվանական իմաստներն են՝ «1. ընդհանրապես հագուստ, հանդերձ, 2. վերնագգեստ, շրջագգեստ», փոխաբերական իմաստներն են՝ «*բուսականություն, կանաչ, կանաչություն*», «*ձյան սավան*», «*տերևները ծառերի նկատմամբ*» (ԺՀԼԲԲ, 2, 25), կամ՝ **գրպան** – ուղղակի, անվանական իմաստներն են՝ «1. զգեստի վրա կարված քսակաձև հարմարանք՝ զանազան մանր իրեր և դրամ պահելու համար, 2. պայուսակի, ճամպրուկի (և այլնի) մեջ հատուկ գրպանաձև փոքր բաժին», փոխաբերաբար գործածվում է «*գրպանի (1 նշան.) պարունակությունը*», «*հարստություն, դրամ, ունեցվածք*» իմաստներով (ԺՀԼԲԲ, 1, 453) և այլն:

Նմանատիպ բազմաթիվ օրինակների հանդիպում ենք՝

ա) **գրաբարում**

- **խանձարուր** (կրծքի երեխայի ձեռքերն ու ոտքերը փաթաթելու՝ կապելու շորի կտոր. բալուլ) – փխբ. «*բուն մանկություն, երեխայական հասակ*» (ԳԲ, 1, 554),

- **քաջագոտի** (գոտին պինդ կապած) – փխբ. «*կազմ ու պատրաստ գործի համար կամ ճանապարհ գնալու, ժիր, արագընթաց*» (ԳԲ, 2, 622),

- **վերագգենուլ** (իր վրայ հագնել՝ կրել) – փխբ. «*վերջիչել, միտքը բերել*» (ԳԲ, 2, 513),

բ) **բարբառներում**

- **կախշավար** – փխբ. «*Կր. ձեռքից բան չեկող, խեղճ*» (ՀԼԲԲ, 3, 19),

- **լակաշ** (1. Վն. մաշված, ձևը կորցրած կոշիկ, 2. Վն. ծամոնի մեծ շերտ, 3. Մշ. փողոց նետված կաշվի կտոր) – փխբ. «*կաշառք*» և «*շատա-*

¹ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էրոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.1, Եր., 1979, էջ 172:

² Բերված օրինակները վերցրել ենք հետևյալ բառարաններից. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետ՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Եր., 1969-1980, Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետ՝ ԳԲ), 2 հ., Եր., 2000, Ռ. Մաքսպետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան (այսուհետ՝ ԱԱՆԲ), Եր., 2011, «Հայոց լեզվի բարբառային բառարան» (այսուհետ՝ ՀԼԲԲ), հհ. 1-7, Եր., 2001-2012, Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետ՝ ՀԼՀԲ), Եր., 1967, Փ. Մերթիխանյան, Նոր բառերի բացատրական բառարան (այսուհետ՝ ՆԲԲԲ), Եր., 1996, Ս. Էրոյան, Արդի հայերենի նորաբանությունների բացատրական բառարան (այսուհետ՝ ԱՀՆԲ), Եր., 2002 (բոլոր բառարանները տե՛ս http://www.nayiri.com/dictionaries.jsp?l=hy_LB):

խոս» (ՀԼԲԲ, 2, 196),

• **կտիվ** (Մբ. գուլպայի կապ, թել) - փխբ. «բարդ, դժվար գործ» (ՀԼԲԲ, 3, 180),

զ) արևմտահայերենում՝

• **թերակար** (կիսակար) - փխբ. «գաղտնի բան» (ԱԱՆԲ, 110) և այլն:

Լեզուն, չունենալով բոլոր առարկաներն անվանելու կամ բնութագրելու բավարար քանակով միջոցներ, «վերցնում է եղածները ու դրանց իմաստները ճանաչելիորեն ընդարձակում»³: Դա փոխաբերական անցումն է, որի շնորհիվ առարկաները ստանում են իմաստային այնպիսի երանգներ, որոնք չունեին երբեմնի գործածությամբ, այսինքն՝ «փոխաբերությունը գործածվում է արտահայտելու համար մի գաղափար, որի համար առանձին բառ չկա»⁴:

«Հագուստ» իմաստային դաշտում ամեն բառ, անկախ իր իմաստների բազմությունից, ունենալով իր հիմնական, առաջնային (ուղղակի) իմաստը, խոսքի մեջ կարող է գործածվել նաև այնպիսի առարկաների, երևույթների, հատկանիշների համար, որոնք ինչ-որ կողմով առնչվում կամ նմանվում են ուղղակի իմաստ ցույց տված առարկային, երևույթին և այլն: Այդպիսով մեկ բառի սահմանում գլխավոր իմաստի կողքին կարող են առաջանալ բազմաթիվ ածանցյալ իմաստներ կամ բառիմաստային տարբերակներ:

Այսպես՝ անդրադառնալով **թաշկինակ** բառի իմաստներին, նշենք, որ նրա երկրորդական իմաստները փոխաբերական չեն, բայց այն ունի այլ իմաստ ևս, որը գործածվում է «կամագուրկ մարդ, որին ամեն գործի մեջ օգտագործում են և նա հլու հնազանդ կատարում է» իմաստով (ԺՀԼԲԲ, 2, 141). սա փոխաբերական իմաստն է: Այդպես նաև՝ **փեշ** բառն ունի «1. զգեստի ներքևի վերջնամասը, քղանցք, 2. գոգ, 3. (հզվդ.) կանանց հագուստ՝ զգեստ, որ ծածկում է գոտկատեղից մինչև ներքև», իմաստները, որոնց կողքին «ծայրամաս, եզր», «լեռան՝ սարի՝ բլուրի՝ ժայռի և այլնի ստորոտ» փոխաբերական իմաստներն են (ԺՀԼԲԲ, 4, 645):

Պետք է նկատել, որ փոխաբերացման ժամանակ կատարվում են հետևյալ իմաստային անցումները⁵. **առարկա**→**առարկա** (առարկայի անվանումը փոխաբերացվելով նշանակում է մի այլ առարկա), ինչպես՝ **շապիկ** «անմիջաբար մարմնի վրա հագնելու (սովորաբար սպիտակ) զգեստ» - **փխբ.** «քող, վարագույր, ծածկոց», **քղամիդ** «1. թագավո-

³ Ad. Akmajian, R. Demers և ուրիշ, Linguistics (an introduction to language and communication), London, 1993, p. 34 (հղումը տե՛ս **Ա. Մակինյան**, Ածանցների դերը բառիմաստի փոխաբերացման գործում // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 2 (119), 2006, էջ 108) (http://www.yasu.am/files/11A_Makinyan.pdf):

⁴ **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 119:

⁵ Այս մասին տե՛ս **Ա. Գալստյան**, Փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծություն, Եր., 2008, էջ 60-64:

րական կամ իշխանական ծիրանի պատմուճան, 2. առհասարակ վրան զցելու ծածկույթ» - *փխբ.*՝ «վարք ու բարք», «որակում, անվանում», *մկրաստ* «երկու իրար հետ միացած շարժական շեղբերից կազմված կտրոդ գործիք» - *փխբ.*՝ «գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների տարբերություն», **առարկա→հատկանիշ** (առարկայի անվանման փոխաբերացման միջոցով արտահայտվում է նրա որևէ հատկանիշը), ինչպես *թավիշ* «սովորաբար մետաքսյա նուրբ խավ ունեցող կերպաս, մախմուր» - *փխբ.*՝ «փափուկ և նուրբ, թավշանման»⁶, **հատկանիշ→հատկանիշ** (որևէ հատկանիշի անվանում, գործածվելով փոխաբերական իմաստով, ձեռք է բերում մեկ այլ հատկանիշի նշանակություն), ինչպես *լայնափեշ* «լայն փեշեր ունեցող. լայնաքղանցք» - *փխբ.*՝ «լայն ստորտներ ունեցող», **հատկանիշ→առարկա** (որևէ հատկանիշի անվանում փոխաբերացվելով նշանակում է առարկայի հասկացությունը), ինչպես *շավվարավոր* «շավվար հագած» - *փխբ.*՝ «տղամարդ», *երկարահանդերձ* «(հզվդ.) երկար հագուստ ունեցող» - *փխբ.*՝ «(հնգ.) հոգևորական», *զգեստավոր* «զգեստ հագած՝ կրող» - *փխբ.*՝ «հոգևորական, ֆարաջավոր»:

Սովորաբար փոխաբերական իմաստը դրսևորվում է ձևի, գույնի, չափի և այլ առարկաների նմանության, գործողության բնույթի, առարկայի դերի, կցորդության և այլ զուգորդումների հիման վրա, ինչպես *վեղար* «1. (եկեղ.) հայ կրոնավորների գլխի ծածկույթ՝ սրածայր սաղավարտաձև, վրայից ծածկված սև քողով, որ մինչև մեջքն է իջնում». այս առարկայի ձևի նմանությամբ էլ անվանվել է մեկ այլ առարկա՝ «(ճարտ.) հայկական ճարտարապետության մեջ եկեղեցու կամ զանգակատան գլխի կոնաձև ծածկը» (ԺՀԼԲԲ, 4, 386), որն էլ *վեղար* բառի փոխաբերական իմաստն է:

Գույնի հիման վրա փոխաբերական իմաստներ են ձեռք բերել հագուստի հետևյալ անվանումները՝ *սևազգեստ* «1. սև զգեստ կամ զգեստներ հագած, սև զգեստներով (անձ), 2. *փխբ.* սգավոր, 3. *փխբ.* հոգևորական» (ԺՀԼԲԲ, 4, 290), *սևասքեմ* «1. սև սքեմ հագած, սև սքեմով, 2. *փխբ.* հոգևորական, կրոնավոր» (ԺՀԼԲԲ, 4, 291): Գործողության բնույթի նմանությամբ է *կարկասեղ* բառը ձեռք բերել իր փոխաբերական իմաստը՝ «գրվածքը՝ գործը անհաջող կերպով լրացնել՝ փոփոխել՝ վերամշակել» (ԺՀԼԲԲ, 3, 81) և այլն:

Շատ հաճախ «հագուստ» հասկացությունն նշող բառիմաստների (հատկապես՝ փոխաբերական) փոփոխությունները պայմանավորվում են բառակազմական իրողություններով: Բառաբարդման և ածանցման ժամանակ որպես բառակազմական հիմք հանդես եկող բաղադրիչները (բառ, արմատ) պահպանում են իրենց հիմնական ընդհանուր իմաստ-

⁶ Ի դեպ, թավիշ բառանվան երկրորդ իմաստը հատկանիշ է ցույց տալիս՝ «նույն կերպասից պատրաստված, թավշյա», որից էլ կունենանք հատկանիշ→հատկանիշ իմաստային անցում:

ները, իսկ հիմք(եր)ի և հավելվող բաղադրիչների շնորհիվ ստանում են նոր բառային իմաստներ (նաև՝ փոխաբերական) և կազմվում նոր բառեր: Երբեմն նոր բառի (մասնավորապես՝ ածանցավոր) փոխաբերական իմաստը չի բխում բաղադրիչների իմաստներից, այսինքն՝ որպես բառակազմական հիմք հանդես եկող բառը կամ արմատը ինքնուրույն գործածությամբ ունենում է փոխաբերական այլ իմաստ (կամ ընդհանրապես փոխաբերական իմաստ չի ունենում), իսկ բառաբարդման կամ ածանցման հետևանքով ստացվող նոր կազմությունը լինում է բոլորովին այլ⁷:

Այսպես՝ «հագուստ» իմաստային դաշտում առկա **փալաս** բառից, որ փոխաբերական իմաստով նշանակում է *«թույլ՝ կամագուրկ մարդ»*, բառաբարդմամբ կազմվել է **փալասակույտ** բառը, որի փոխաբերական իմաստը հնարավոր է բացատրել նրա բաղադրիչների իմաստներով, բառի ներքին ձևով, այն է՝ *«փալասներ՝ ցնցոտիներ հագած մարդկանց կույտ խումբ»*, կամ, օրինակ՝ **աստառ** բառից, որն իր ուղղակի իմաստներից բացի, ունի *«գործի ներքին՝ գաղտնի հանգամանքը, ներքին պատճառ, հիմք»* փոխաբերական իմաստ (ԺՀԼԲԲ, 1, 189), բարբառներում ունենք **աստառածներ** (բարկակտրեք) բարդությունը, որն ունի հետևյալ փոխաբերական նշանակությունը՝ *«այն պայմանավորված դրամը և իրերը, որ փեսայի հայրը հարսանիքից մի քանի օր առաջ տալիս է հարսի հորը»* (ՀԼՀԲ, 85):

Ան- նախածանցով արևմտահայերենում կազմվել է **անվարտի** բառը, և վերջինիս *«մերկ»* փոխաբերական իմաստը (ԱԱՆԲ, 31) ևս կարող է բացատրվել իր բաղադրիչներով, այդպես նաև՝ բարբառներում հանդիպող **անփոխան** բառաձևը, որի փոխաբերական իմաստն է՝ *«տնանկ, աղքատ»* (ՀԼԲԲ, 1, 71):

Ան- նախածանցը գրաբարում ևս փոխաբերական իմաստի առաջացման նախապայման է դարձել մի քանի բառերի համար, ինչպես՝

- **անվերարկու** (վերարկու՝ ծածկոյթ՝ ծածկոց չունեցող, անհանդերձ, մերկ) – փխբ.՝ *«ծածկոյթով չվարագուրուած, անվերարկելի, ակներև, ակնյայտ»* (ԳԲ, 1, 144),

- **անքոլ** (քոլ չունեցող՝ չկրող) – փխբ.՝ *«չվարագուրուած, անաղօտ, պայծառ»* (ԳԲ, 1, 153):

Կան նաև վերջածանցներով կազմված այնպիսի բառեր, օրինակ՝ **-ավոր** ածանցով, որոնք նույնպես բառակազմական իմաստներից բացի, ունեն արմատական ձևերին համարժեք փոխաբերական նշանակություններ, ինչպես՝ **ծիրանավոր** «1. ծիրանի հագած, ծիրանազգեստ, 2. փխբ. *արքա, կայսր*, 3. փխբ. *բարձրաստիճան հոգևորական, որ ծիրանի է կրում*, 4. Հայաստանում կամ հայկական վանքերի՝ ուխտատեղերի անուն կամ մակդիր ծիրանի հագած Աստվածամոր անունից, 5. փխբ. *ծիրանի կրող արքայի նմանվող, արքայական, արքա»* (ԺՀԼԲԲ, 2,

⁷ Տե՛ս **Ա. Մակինյան**, նշվ. աշխ., էջ 108-113:

673), **լաչակավոր** «1. լաչակ կապող, գլուխը լաչակ կապած, 2. փխբ. կնոջ նմանվող տղամարդ, որ վախկոտ է՝ տանից դուրս չի գալիս, կնոջ գործ է անում» (ԺՀԼԲԲ, 2, 380), **տրեխավոր** «1. տրեխ հագած, 2. փխբ. գյուղացի» (ԺՀԼԲԲ, 4, 533) և այլն:

Սակայն, ինչպես նշեցինք, լինում են նաև այնպիսի դեպքեր, երբ բառաբարդման և ածանցման հետևանքով նորակազմ բառի փոխաբերական իմաստը կոնկրետ ընդհանրություն չի ունենում բառակազմական հիմքի փոխաբերական նշանակության հետ. ինչպես՝ **գղսկ** բառն ունի փոխաբերական «պատիվ, նամուս» նշանակությունը, որն իմաստափոխվում է նրանից ածանցված **գղակավոր** բառում: Մտանալով **-ավոր** վերջածանցը (ըստ այս ածանցի դրսևորած իմաստային հատկանիշի) բառը պետք է ունենար «նամուս, պատիվ ունեցող» փոխաբերական իմաստը, այնինչ **գղակավոր** բառի փոխաբերական իմաստն է «տղամարդ» (ԺՀԼԲԲ, 1, 377): Այդպես նաև՝ **փափախ** բառի փոխաբերական իմաստներն են՝ «տղամարդության քաջության խորհրդանշան», «պատվազգացության խորհրդանշան» և «(խսկց.) անօրինական կարգով ստացվող եկամուտ (կաշառք)» (այս փոխաբերական իմաստի ազդեցությամբ էլ «ասպորինի դրամ՝ նյութական միջոցներ շորթող» փոխաբերական իմաստով ունենք **փափախչի** (խսկց.) բառանունը): Ի տարբերություն **փափախ** բառի՝ նրանից կազմված **փափախավոր** բարդությունն ունի բոլորովին այլ փոխաբերական իմաստներ՝ «տղամարդ» և «գյուղացի հասարակ մարդ» (ԺՀԼԲԲ, 4, 642):

Ուշագրավ է նաև այն, որ երբեմն արմատական բառը կարող է փոխաբերական որևէ իմաստ չունենալ և միայն ածանցման միջոցով ստանալ փոխաբերական իմաստ, որոշ դեպքերում էլ՝ բառակազմական հիմքի իմաստից խիստ տարբերվող: Օրինակ՝ **վարտիք** բառը ոչ ժամանակակից գրական հայերենում, ոչ էլ բարբառներում փոխաբերական որևէ իմաստով հանդես չի գալիս, սակայն նրանից կազմված **վարտեկորուստ** (բրբ.) բարդությունն ունի բնիմաստից հեռացած «ցրված, անուշադիր» փոխաբերական իմաստը (ՀԼԲԲ, 6, 39):

Փոխաբերական իմաստների տարբերակման հարցում, կարող ենք ասել, որոշակի դերակատարում ունեն նաև բայակազմ ածանցները, օրինակ՝ **-ել** բայակազմ ածանցի միջոցով «հագուստ» իմաստային դաշտի այլ խոսքի մասերով արտահայտված բառանուններից բայեր են կազմվում, որոնք նույնպես գործածվում են փոխաբերաբար, ինչպես՝ գոյականի խոսքիմասային արժեք ունեցող **բլանդ** (բրբ.) բառից **-ել** ածանցով կազմվել է **բլանդել** բայաձևը (ԺՀԼԲԲ, 1, 322), որն ուղիղ իմաստից բացի, ունի «վատ՝ անշնորհք կարել» փոխաբերական իմաստ: Կամ, օրինակ՝ բարբառներում **կոճակ** բառանունն իր ուղիղ իմաստներից բացի, ունի «(Թբ.) կարճահասակ ամրակազմ անձ» փոխաբերական իմաստ (ինչպես՝ **կոճակ տղա**) (ՀԼԲԲ, 3, 142): Այս բառից **-ել** ածանցով կազմվել է **կոճկել** բայաձևը, որը դարձյալ իր ուղիղ իմաստներից բացի, ձեռք է

բերել բոլորովին այլ՝ փոխաբերական իմաստներ՝ «(Պլ.) խոսքը ընդհատելով ուրիշ նյութի անցնել (անցանկալի անձից բուն նյութը թաքցնելու համար)» և «(Մբ.) զարտուղի միջոցներով գումար՝ փող հավաքել» (ՀԼԲԲ, 3, 143):

Պետք է նկատել, որ որոշակի ժամանակահատվածում փոխաբերական իմաստը կարող է վերածվել սովորական իմաստի: «Այդ ժամանակամիջոցը տարբեր բառերի համար տարբեր է լինում և կախված է փոխաբերության բնույթից, պատկերավորության աստիճանից, պատկերավորության կորստի հնարավորությունից, անհրաժեշտությունից: Այս իմաստով որոշակի դեր են կատարում բառի՝ այդ իմաստով գործածության հաճախականությունը, տարածվածությունը»⁸:

«Հագուստ» իմաստային դաշտի միևնույն բառանունը լեզվի զարգացման տարբեր փուլերում կամ գրական լեզվի մյուս տարբերակում, ինչպես նաև բարբառներում կարող է ունենալ բոլորովին տարբեր փոխաբերական իմաստ, օրինակ՝

կարկաստան (զգեստի, հագուստի, կոշիկի և այլնի մաշված մասերը նորոգելու համար վրան կցված նոր նյութ (կտոր, կաշի և այլն)).

• **արդի գրական հայերենում**՝ փխբ. «որևէ գործի, ստեղծագործության անհաջող վերամշակելը՝ փոփոխելը» և «ամբողջության մեջ առանձին, աններդաշնակ հատված մաս (մասեր)» (ԾՀԼԲԲ, 3, 81),

• **բարբառներում**՝ փխբ. «Մբ. սուտ՝ չհիմնավորված չպատճառաբանված խոսք», «Մբ. ընտանիքում խորթ կամ հեռավոր մեկը», «Մբ. երկրորդ կին» (ՀԼԲԲ, 3, 61),

կարկաստել (1. մասնավորապես մաշված հագուստը, ոտնամանը կարկաստանով նորոգել, ընդհանրապես որևէ բանի կարկաստան դնել, որևէ բան վերանորոգել, 2. աններդաշնակ մասերը իրար միացնել կցմցել).

• **արդի գրական հայերենում**՝ փխբ. «գրվածքը՝ գործը անհաջող կերպով լրացնել՝ փոփոխել՝ վերամշակել» և «հերյուրել» (ԾՀԼԲԲ, 3, 81),

• **բարբառներում**՝ փխբ. «Մբ. մեկի թերությունները՝ հանցանքը ծածկել թաքցնել» (ՀԼԲԲ, 3, 61),

գոտևորել (գոտի կապել).

• **արդի գրական հայերենում**՝ փխբ. «գոտենման շերտերով՝ գոտու ձևով պատել» (ԾՀԼԲԲ, 1, 433),

• **գրաբարում**՝ փխբ. «կազմ ու պատրաստ լինել, գոտեպնդուել, գորանայ, սրտապնդուել» (ԳԲ, 1, 345) և այլն:

«Հագուստ» իմաստային դաշտի բառանուններից ունենք նաև նորակազմություններ⁹, որոնք թեև լայն տարածում չստացած անհատական ստեղծագործական կամ հեղինակային փոխաբերություններ են, սակայն

⁸ Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 45:

⁹ Տե՛ս Լ. Ղամոյան, «Հագուստ» իմաստային դաշտը նորակազմ բաղադրություններում // Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ, Եր., 2020, էջ 105-119:

արձանագրված են բառարաններում, ինչպես՝ *սասպոզավոր* «(փխբ.) ճզմող, ուժ գործադրող, ուժի դիրքերից խոսող՝ վարվող՝ ապօրինությունն անող» (ԱՀՆԲ, 413), *գրպանամուլ* «գրպանը լցնելու մոլուցք ունեցող, թաշանող, գոփող» (ԱՀՆԲ, 123), *գրպանային/գրպանի* «(փխբ.) ոչ լուրջ, թվացյալ, խամաճիկային, դիմագիծը կորցրած, կամակատար դարձած, ինքնուրույնությունն չունեցող, իշխանամետ» (ԱՀՆԲ, 123), *մահաշուրջատ* «(փխբ.) մահվան զգեստ հագած» (ՆԲԲԲ, 130), *քողաշապիկ* «(փխբ.) ծածկվելու պատրվակ, միջոց» (ԱՀՆԲ, 480), *գուլպայախեղդություն* «(փխբ.) գուլպաների չափազանցաբար գործածելը» (ԱՀՆԲ, 124), *կարմրահանդերձ* «(փխբ.) կարմիր հանդերձով՝ իբրև խորհրդային (քարտեզի մասին)» (ՆԲԲԲ, 94), *ձերմակաձեռնոց* «1. (փխբ.) արտաքուստ անմեղ ձևացող չարագործ, 2. ձերմակ ձեռնոց կրող՝ հագնող» և այլն:

Չեղինակային այս փոխաբերությունները մեկընդմիջտ իրակություններ չեն, այլ՝ մշտական զարգացման ու փոփոխությունների գործընթաց: Սրանցից մի քանիսը կարող են յուրացվել ուրիշների կողմից ու դառնալ սովորական տարածված փոխաբերություն, կամ էլ մեկուսացած կմնան իրենց ծնող համատեքստերում:

«Հագուստ» իմաստն արտահայտող բառերի փոխաբերական իմաստները լայն հնարավորություն են ստեղծում նաև բազմաթիվ դարձվածային միավորների առաջացման համար¹⁰, ինչպես՝ *կրակե շապիկ հագցնել* «սաստիկ նեղել, չարչարել», *կարմիր գոգնոց* «կին», *աբբեշում դառնալ* «հեգահամբույր՝ զիջող դառնալ, բարկությունը իջնել»: Բավականին մեծ է այն դարձվածների թիվը, որոնք ամբողջովին փոխաբերաբար առնված կապակցություններ են, դրանց մեջ աչքի են ընկնում նաև նորակազմ դարձվածային կայուն բառակապակցությունները, ինչպես՝ *վարտիքային տարիք* «մանկական տարիք, 2. դեռևս չհասունացած, չկայացած» (ԱՀՆԲ, 435), *սրտի փեշք քաշել* «սրտի մեջ մտնել, սրտին մերձենալ, սիրտը թափանցել» (ԱՀՆԲ, 428), *թիկնոցագերծ անել* «պաշտոնից, հնարավորությունից, հովանավորությունից զրկել» (ԱՀՆԲ, 175) և այլն:

Երբեմն դարձվածային միավորների միջոցով «հագուստ» հասկացությունն նշող բառերի փոխաբերացումը կարող է հաղորդակցության ընթացքում արտացոլել մարդու հասարակական դիրքը, վերադասությունն ու ստորադասությունը¹¹: Նման դարձվածային միավորներ կազմվում են, օրինակ, *թաշկինակ, գրպան, լաչակ, փեշ, շապիկ, վարտիք* և այլ բառանուններով, ինչպես *ստորադասություն՝ ձեռքի թաշկինակ* «խաղալիք, գործիք (մեկի ձեռքին)», *լաչակ կապել* «արհամարհական,

¹⁰ Տե՛ս **Լ. Ղամոյան**, Հագուստ իմաստային խմբի դրսևորումը արդի հայերենի դարձվածային միավորումներում // Լեզու և լեզվաբանություն, թիվ 2 (15), 2016, էջ 74-80 (http://language.sci.am/sites/default/files/languageAndLinguistics/lezow_ew_lezvabanowtyown_2016_2.pdf):

¹¹ Տե՛ս **Ռ. Մուսեյան**, «Հագուստը հասարակական դիրք է» ճանաչողական փոխաբերության առկայացումն անգլերեն և հայերեն դարձվածային միավորումներում // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական լեզվաբանական համալսարանի, 1 (48), 2019, էջ 105-113 (<https://brusov.am/website/documentation/files/7b4a04b7.pdf>):

նախատական արտահայտություն տղամարդուն ուղղված, կին դառնալ, կնաբարո լինել», *փալաս դառնալ* «անպետքանալ, ոչնչի պետք չգալ», *փեշերը լիզել* «ստորանալ, քծնել», *վարտիք կապել չգիտենալ* «անփորձ, խամ, անհմուտ, խիստ անշնորհք լինել», *վերադասություն ծալել գրպանը դնել մեկին* «մեծ ուժ կամ արժանիք ունենալ, մեկին կամ մի բան հեշտությամբ հաղթահարել», *մի քանի շապիկ ավելի կտրել/հագնել/մաշել* «շատ անգամ մեծ, փորձառու, տարիքավոր լինել» և այլն¹²:

Այս ամենով հանդերձ, սակայն, բառերի փոխաբերական իմաստներն էականորեն տարբերվում են նրանց դարձվածայնորեն կապված իմաստներից, որովհետև «եթե փոխաբերական նշանակությունը կարող է դրսևորվել թե՛ ազատ, թե՛ կայուն կապակցությունների մեջ, ապա դարձվածայինը միայն կայուն կապակցություններում, եթե փոխաբերական նշանակությունը դուրս չի գալիս տվյալ իմաստային դաշտի սահմաններից կամ գուգորդության շրջանակներից, ապա դարձվածայինը կարող է դուրս գալ այդ շրջանակներից երբեմն անձանաչելիության աստիճանի»¹³:

Այսպիսով «հագուստ» իմաստային դաշտի բառապաշարի փոխաբերացումը լեզվի իմաստային կողմի ինքնատիպ զարգացման երևույթներից է, որն առավել հասկանալի է բառ-համատեքստ հարաբերության մեջ: Այդ դաշտի միավորները կարելի է բաժանել 2 խմբի

ա) բառեր, որոնք փոխաբերացվում են ըստ մեկ հատկանիշի,

բ) բառեր, որոնք կարող են փոխաբերացվել ըստ մի քանի հատկանիշի:

Փոխաբերացման ժամանակ փոխվում են այս բառերի կապակցական հնարավորությունները, իմաստային տարողունակությունն ու բառային շրջակայքը:

ЛУСИНЕ ГАМОЯН – Метафорическое значение в семантическом поле «Одежда». – Цель статьи - изучить и выявить метафорическое значение(я) каждого слова, относящегося к понятию «одежда», которое появляется на том же словесном уровне, рядом с его основным значением, поскольку производное значение, возникающее, в основном, из переносного использования слова, является более устойчивым. То есть, каждое слово, независимо от его набора значений, имея свое основное значение, может употребляться в разговоре для обозначения предметов, явлений, признаков, которые каким-либо образом связаны или сходны с предметом, имеющим прямое значение, явление и др. В этот период происходят следующие семантические переходы: объект → объект, объект → признак, признак → признак, признак → предмет. Метафорическое значение обычно выражается по форме, цвету, размеру, сходству других предметов, характеру действия и другим сочетаниям. Изменение значений слов (особенно переносных) семантиче-

¹² Դարձվածային միավորների օրինակները տե՛ս **Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան**, Շայնց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975 (<http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=55>):

¹³ **Պ. Բեդիրյան**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 88:

ского поля «одежда» также обусловлено словообразовательными факторами. В словообразовательных суффиксах компоненты (слово, корень) сохраняют свои основные общие значения, а за счет комплементарных компонентов основы (основ) формируются новые значения слова (в том числе метафорические) и образуются новые слова. Одно и то же существительное в смысловом поле слова «одежда» на разных этапах развития языка или в других вариантах литературного языка, как и в диалектах, может иметь совершенно разные метафорические значения. Переносные значения слов, выражающих значение «одежды», также дают широкие возможности для образования множества фразеологических единиц.

Ключевые слова: *одежда, семантическое поле, метафора, словообразование, суффиксирование, неологизм, фразеологизмы*

LUSINE GHAMOYAN – *Metaphorical Meaning in “Clothing” Semantic Field.* – The aim of the article is to study and identify the metaphorical meaning(s) of each word referring to the concept "clothes", which appears on the same word level, next to its main meaning, because the derivative meaning, which arises mainly from the figurative use of the word, is more stable. That is, every word, regardless of its set of meanings, having its primary meaning, can be used in conversation to denote objects, phenomena, features that are in some way related or similar to the object having a direct meaning, phenomenon, etc. During this period, the following semantic transitions occur: object → object, object → attribute, attribute → attribute, attribute → object. Metaphorical meaning is usually expressed by shape, color, size, similarity of other objects, nature of action, and other combinations. Changes in the meanings of words (especially figurative ones) of the semantic field "clothing" are also caused by word-formation factors. In word-formation suffixes, the components (word, root) retain their basic general meanings, and due to the complementary components of the base (bases), new meanings of the word are formed (including metaphorical ones) and new words are formed. The same noun in the semantic field of the word "clothing" at different stages of language development or in other variants of the literary language, as well as in dialects, can have completely different metaphorical meanings. The figurative meanings of words expressing the meaning of "clothing" also provide ample opportunities for the formation of many phraseological units.

Key words: *clothing, semantic field, metaphor, compounding, suffixation, neologism, phraseological units*

ԿՐՈՆԻՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՔԱՆԻ
ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների)

ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում կրոնական բնույթի բառերը հայերենի համեմատությամբ կազմում են 58%-ը, իսկ Կ. Բաքի կազմած ցուցակի համեմատությամբ՝ 66%-ը: Նախորդների կազմած թեմատիկ խմբում ավելացվել է երեք բառ՝ ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների, որոնք, կարծում ենք, ունեն հնդեվրոպական ծագում՝ **քաշկ** – **քաշկ/ք**, **սունդու-սունդու(կուկու)**, **կուփեկ-կուփ(է)**: Առկախ է մնում **քաջ** և **քաջք (քաշկը)** բառերի ընդհանուր հիմքից լինելու հարցը: Ավելի հավանական է, որ **քաշ-ք/կ**-ը՝ «չար (h)ոզի», ունի հնդեվրոպական ծագում՝ ***pek-ti-** «ինչ-որ իր, բան, մարդ, էակ»: **Սունդու** բառը ծագում է հ.-ե. ***sent-** «ուղղվել, գնալ, ընթացք, ուղի, ճանապարհ» արմատից՝ **սունդուկուկու**: **Սինդարա**:

Կարծում ենք, որ Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի **կուփ(է)**-ը՝ «1. չար ոզու, դևի կամ հրեշտակի՝ մարդուն, երեխային դիպչելը, խփելը, այսահարելը», իմաստով և ձևով առնչակցվում է հ.-ե. *(s)**kep(h)-** || *(s)**kōp-** արմատի առաջնային և երկրորդային ձևերին՝ 1. «պատուպարել, ծածկել, քողարկել, պաշտպանել», 2. «խփել, տաշել» (հավանական է վերջին իմաստից զարգացումը): Պոկոռնու բառարանը **(s)kōp-** բառահոդվածի ներքո նշում է մի շարք բառեր, որոնք արտացոլում են **կուփ(է)**- բառանվան ձևիմաստային ընդհանրությունները հնդեվրոպական լեզուներում, ինչպես՝ հին բարձր գերմ. **scaffōn** «ձև, պատճառ», հին իսլ. **skap** «ձև, հոգեվիճակ» և այլն:

Բանալի բառեր – Սյունիք-Արցախ, թեմատիկ խումբ, կրոն, նախապաշարմունք, բարբառային բառապաշար, հնդեվրոպական, ստուգաբանություն

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում կրոնական բնույթի բառերը կարելի է բաժանել տարբեր խմբերի՝ ըստ ծագման, կենսունակության և այլն: Այստեղ, սակայն, առանձնացրել ենք այն արմատները, որոնք ծագմամբ ունեն հնդեվրոպական աղերսներ, դրանց շուրջ կատարված ուսումնասիրություններում բացակայում կամ բավարար չեն բարբառային տվյալները:

Հայերենի հնդեվրոպական աղերսներ ունեցող **աղանդ**, **դի-ք**, **մատ-ուց** (-արան), **ձառն**, **ընծայ «գոհ»**, **տառն**, **երկիր (պագանեմ)**, **ձառնիչ**, **աւծանեմ**, **բանադրեմ**, **բարեբանեմ**, **թով-չ-ութին**, **թով-իչ**, **երեւ-ոյթ**, **տես-իլ** բառահասկացությունները, որ ընդգրկվում են «կրոն և նախապաշարմունք»

բառիմաստային խմբում¹, բացակայում են Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարում: Այս արմատների հիմնական մասը պատմական ժամանակաշրջանում անշուշտ գոյություն է ունեցել: Գործածության բնագավառի համար ձևավորված եզրություններից շատերը չեն անցել բարբառային բառապաշարին, բայց արմատները պահպանվել են այլ կազմություններում (օրինակ՝ **աղանդ**-ը՝ «որևէ եկեղեցու դավանանքին չհետևող և այլ կրոնական պատկերացումներ ունեցող ուսմունք», բացակայում է բարբառախմբի բառապաշարում, սակայն կարծում ենք՝ բարբառային **ալմանգալ** բառի հիմքում հ.-ե. նույն արմատն է՝ ***al-** «թափառել»², կամ՝ **մատուցարան** բառի հիմքում ընկած է **մատն** (***mæt-**) > **մանդ** «մատ»): Այդպիսիք հիմնականում ընդգրկված չեն բարբառախմբի համար կազմված թեմատիկ խմբում կրոնական բնույթ չունենալու հիմնավորմամբ: Երեք բառ ենթադրվում է հնդեվրոպական ծագմամբ՝ **քաշկ** – **քաշկ/ք**, **սունդոն-սունդոն(կուկու)**³, **կուփել-կուփ(ել)**, որոնք հավելել ենք Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի կողմից ներկայացված թեմատիկ խմբի արմատներին:

Այսպիսով՝ Սյունիք-Արցախ բարբառային տարածքում հնդեվրոպական աղերս ունեցող «կրոն և նախապաշարմունք» բառիմաստային խմբի բառերն են՝ **կրոն**, **հավատք**, **ուղութ(արան)**, **սեղան**, **(լուս)ընծա**, **մախթել**, **ըղօթել**, **իրից**, **սօրփ**, **ըվըտ(արան)**, **անէսկը (տալ)**, **լիվանայ**, **լերգինք**, **անդունդ-ք**, **զեղ**, **հրըց-**, **հօթի**, **քաշկ**, **սունդոն(կուկու)**, **կուփ(ել)**, **ցուց (տալ)**⁴:

Ներկայացնենք որոշ բառերի գործածական բնույթը թեմատիկ խմբում:

Ընծա («նվեր»), **ընծա-արան** կրոնական բնագավառի բառերը բացակայում են բարբառախմբում, և արմատը հանդիպում է **լուսընծա** «լուսնկա» (այլև՝ **լուսինգյալ**) բարդության մեջ, որ, անշուշտ, փոխանց-

¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 273-274 (այսուհետև՝ **Ջահուկյան**, ՀԼՊ):

² Գ. Ջահուկյանը հ.-ե. ***aleu-**, ***al-** «թափառել, մոլորվել» արմատից է բխեցնում **ալարել** «ամաչել» և հալերենի բարբառների **ալարել** «ծուլանալ» բառերը (տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Ստուգաբանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4, Եր., 1963, էջ 86, **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 313), որոնք հետագայում զարգացման այլ ճանապարհ են անցել («կապ չունի **ալարել** «ծուլանալ» բայի հետ» (**Ջահուկյան**, ՀԼՊ, էջ 25)): Սյունիք-Արցախ բարբառախմբի տարբերակն է **ալանգա** «ծուլ», այստեղից՝ **ալանգա տառնալ** «ծուլանալ», **ալանգա ինել** «1. անգործունյա լինել, 2. հաշմանդամ լինել»: Հավանական է, որ բաղարկվել է **անգյալ** բառի հետ **ալար-անգյալ**, հետագեղ **ըլարել** իլ **լարել** «հոգնել, ծուլանալ» ձևից (հմմտ. **լար** < **ալար**):

³ **Սունդոնկուկու** բառի ստուգաբանությունը ներկայացվել է ակադեմիկոս Արամ Ղանալանյանի ծննդյան 110-ամյակին և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովում, 2019 (տե՛ս **Մ. Քոստունց**, **Լ. Ներսիսյան**, Մի քանի անունների ստուգաբանություն՝ պատմաազգագրական տեղեկությունների հենքով (պատմական Սյունիք) (տպագրման ընթացքում է):

⁴ Սրանցից վերջինի կրոնական բնույթը բարբառախմբում և առիասարակ հայերենում կասկածելի է, բայց ընդգրկված է հայերենի հնդեվրոպական ծագմամբ բառերի «կրոն և նախապաշարմունք» թեմատիկ խմբում (տե՛ս **Ջահուկյան**, ՀԼՊ, էջ 274), հմմտ., թերևս, **կրոնացոյց**:

ված է գրաբարից և տարածված հայերենի մյուս բարբառներում:

Հըվըտ/դավեր «հոգևորական» բառը, կարծում ենք, քրիստոնեության շրջանում է ձևավորվել, ուստի առանձին միավոր չի համարվում հնդեվրոպական ծագմամբ բառերի թեմատիկ խմբում, այդպես և **պարեբաշտ** «բարեպաշտ», **պարեխոսություն** «բարեխոսություն»: Մակայն **մուխր(ը)ճի-րի/ել** «մոխրաջրել» («մահացածի դիակը լողացնելուց հետո մոխրով օծել») բարդությունը ընդունում ենք որպես նախաքրիստոնեական շրջանից անցած բառ-հասկացություն, որ փոխանցվել է սովորույթի հետ:

Ծագմամբ անհայտ է մնում թեմատիկ խմբին առնչվող **ախար-ը**՝ «1. հատկապես Չատկի տոնին բաժանվող մատաղը, ընծան»⁵:

Կարծում ենք, որ բարբառախմբի **կուփ(ել)-ը**՝ «1. չար ոգու, դևի կամ հրեշտակի՝ մարդուն, երեխային դիպչելը, խփելը, այսահարելը», իմաստով և ձևով առնչակցվում է հ.-ե. ***(s)kep(h)-** արմատի առաջնային և երկրորդային ձևերին՝ 1. «պատսպարել, ծածկել, քողարկել, պաշտպանել», 2. «խփել, տաշել» (հավանական է վերջին իմաստից զարգացումը):

Բարբառախմբի **յերգինք**⁶ «երկինք» բառն ունի նաև «աստծու և երկնային հոգիների բնակավայր» իմաստը, որը հիմք է տալիս այն ընդգրկելու թեմատիկ խմբում: Այս առումով կարևոր ենք համարում Գ. Ջահուկյանի դիտարկումը, ըստ որի՝ հնդեվրոպացիներն ունեին կրոնական որոշ գաղափարներ պաշտամունքային աշխարհի նկատմամբ, որոնցով աստվածայինը կապվում էր մի կողմից՝ շողացող երկնքի և լուսավոր օրվա, մյուս կողմից՝ նախնիների («հոր»՝ *p^hter «ավագ սերնդի ներկայացուցիչ, նախնի, հայր») պաշտամունքի հետ. հմմտ. *dei- «շողալ», որից «պաշտվող երկինք, «օր», «աստված» գաղափարները⁷:

Բարբառախմբի **քաշ-կ** || **քաչ-ք** || **քաշ-ք** բառը արտաքին հնչյունական կազմով, մասամբ նաև իմաստային նրբերանգներով («ինչ-որ անսովոր բան») նմանվում է հայերենի՝ անհայտ ծագմամբ **քաջ**-ին. ըստ Հ. Աճառյանի՝ **քաջ**-ի հոգնակի՝ **քաջք** ձևից է («նախնական իմաստն է «լաւ». իսկ «ոգի, դև» նշանակութեան զարգացման համար հմմտ. ոմկ. մենն աղէկները⁸ «դև, ոգի»⁹): Հ. Աճառյանի կողմից «քաջ» բառահոդվածում¹⁰ լավագույնս ներկայացված են բառին վերաբերող կարծիքները, ուսումնասիրությունները, որոնք, այդուհանդերձ, բավարար չեն եղել ծագումնաբանական եզրակացության համար. **քաջ** բառի ծագումը

⁵ Արոյո՝ ք ասորական փոխառություն է:

⁶ Նրա հ.-ե. ծագումը կասկածելի է (տե՛ս **Ջահուկյան**, ՀԼՊ, էջ 274):

⁷ Տե՛ս **Ջահուկյան**, ՀԼՊ, էջ 84:

⁸ Հիշատակվում են նաև՝ «Մեզնէ աղէկներ» (Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Ս. Ղազար, Վենետիկ, 1910, էջ 221), «Քան զմեզ աղէկներ» (Սովորութիւններ, նախապաշարումներ և այլն Իզմիտ գաւառին մէջ, «Բիրական լրագիր», թիվ 34, 1899, էջ 540-541) և այլն՝ «հավերժահարսեր, քաջք» (Մխիթար Մեքաստացի, Բաղկիք հայկազեան լեզուի, հատ. II, Վենետիկ, 1769, էջ 670):

⁹ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հատ. IV, Եր., 1979 (1971-1979), էջ 555 (այսուհետև՝ ՀԱԲ):

¹⁰ ՀԱԲ IV, էջ 554-555:

անհայտ է նշվում նաև ՀՄԲ-ում¹¹: Վերջին ստուգաբանական փորձերից մեկում առանձնացված է Պեդերսենի կարծիքը **քաջ** < **աջ**¹², որ մյուս տվյալների հետ նշվում է ՀՄԲ-ում: Մեզ հանդիպած **քաջ** բառի ստուգաբանական փորձերից միայն Հ. Աճառյանինն է, որտեղ զուգահեռներ կան **քաջ(ք)**-ի և բարբառային ձևերի միջև:

Բարբառախմբում ունեցած տվյալները ենթադրել են տալիս, որ իրարից տարբեր արմատներ են **քաջ**-ը և **քաջք**-ը: Ինչպես նշվեց, այս երկու բառերի համար, ըստ Հ. Աճառյանի, ընդհանուր է «լաւ» իմաստը, իսկ «ոգի, դև» նշանակության ձևավորման միակ օրինակն է «մէնէ աղէկները»:

Պետք է նկատել, որ բարբառախումբը առհասարակ չունի **քաջ** «արի, քաջ» բառը, իսկ **քաջկ/ք**-ը «քաջ» նշանակության հետ չի աղերսվում:

Մեր կողմից վերաառաջադրված հարցը՝ **քաջ** – **քաջկ**, սահմանափակում ենք կանխադրություններով.

1. Բարբառային **քաջ-կ** բառը ձևաիմաստային զուգահեռներն ունի հ.-ե. «ինչ-որ իր, բան, մարդ, իր, առարկա, էակ» իմաստներով ***uek-ti-** (հմմտ. գոթ. **waihts** «կենդանի էակ, գերմարդկային արարած, իր», «ինչ-որ անձ, դև», գերմ. **goth** «բարբարոս», ռուս. **рѣчь** «ճառ, խոսք, տարածայնություն») արմատի հետ: Հ.-ե. ***u-q** > **ք**-ի համար հմմտ. **գիշեր-քըշեր** (***uekeros**), **գնալ-քինայի, գտանել - քիթանայի**:

2. Հայերենի **գէշ** «անտեսք, վատ» (բարբառախմբում՝ **կէշ**) և հ.-ե. ***ueis-** «թույն, ժահր» (վկայվում է Պոկոռնու բառարանում՝ «լէշ, դիակ»¹³) բառերի ընդհանրությունը և **քաջ-կ** բառի հետ ծագմամբ նույնացնելը քիչ հավանական ենք համարում Սյունիք-Արցախի բարբառախմբի համապատասխան տվյալների համեմատության տեսանկյունից (թերևս բաղդատելի է **քաջ** (**քաջտ**) թռչունի «լէշակեր» հատկանիշը):

3. **Քաջ(կ)** արմատին չենք զուգահեռում բարբառախմբի «կշիռ» իմաստով **քաջ**-ը (հնարավոր է, միջ. պրակ. միջնորդությամբ անցած փոխառություն լինի կամ ***uek-** հիմքից հայ. և իրան. ժառանգություն, հմմտ. **քաջ-քաջք** «մեջք, սնակուշտ»¹⁴), այլև հայերենում վկայվող **քաջկէն** «գարեհաց», որ համեմատվում է խեթ. արձանագրություններից վերականգնված **kaš** «գարի» արմատի հետ¹⁵, **քաջիկ** և այլն:

Այս բոլոր տվյալները ձեռքի տակ ունենալով (այլև **քաջ** «ցած, ներքև», արևելյան լեզուներից անցած հնարավոր բառամիավորները)՝ կարծում ենք, որ կարող են ծագումնաբանորեն աղերսներ ունենալ կամ չունենալ՝

Ս. **Գէշ** «անտեսք, վատ» (բարբառախմբում՝ **կէշ**) և հ.-ե. ***ueis-** «թույն,

¹¹ Տե՛ս **Գ. Չառուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, «Աստղիկ» հրատ., Եր., 2010, էջ 777 (այսուհետև՝ ՀՄԲ):

¹² Տե՛ս **Ս. Պետրոսյան**, Հայկական վիշապամարտի երկու հակադիր կերպարներ, «Պատմա-բանասիրական հանդես», 2010, թիվ 1, էջ 189-196:

¹³ **Pokorny J.**, Indogermanisches etymologisches Wörterbuch, I bend, München: Francke Verlag, Bern, 1959, p. 1134.

¹⁴ ՀՄԲ IV, էջ 553:

¹⁵ Տե՛ս **Kloekhorst A.**, Etymological Dictionary of the Hittite inherited lexicon, vol. 5, Brill, Leiden-Boston, 2007, էջ 754:

ժահր» (ըստ Գ. Ջահուկյանի՝ իրան. ծագմամբ)¹⁶, այստեղից՝ **գիշանգո, գիշակեր** բառերի ընդհանրությունները ակնհայտ են:

Բ. Տարբեր են **գի/էշ** «դի» և **քաշ(-տ)** «մի տեսակ թռչուն» բառերը (նաև ձայնավորական փոփոխություններն են դժվար բացատրվում):

Գ. Իմաստային առումով խնդրահարույց է որոշակիացնելը, թե **քաշ(-տ)** «թռչուն» և **քաշք/կ** «չար ոգի, ինչ-որ էակ» բառերը (<հ.-ե. ***uēk-ti-** «ինչ-որ իր, բան, մարդ, էակ») ընդհանուր հիմքից են՝ ***uēk-ti-**, թե՛ ***kau-** արմատից է անհայտ ծագմամբ բառերի շարքում¹⁷ նշվող թռչնանունը: Մենք արդեն նշել ենք, որ ձևաիմաստային առումով այս խմբին են աղերսվում նաև՝ **քաշ** «նիհար, տգեղ, չեչոտ» (առանձնապես նույնացվում է թռչունի հետ) և **քաշկ** «եղանակ, ձև, կերպ»¹⁸:

Դ. **Քաշ** «ցած» (<***kau-no-s** «տապալել, իջեցնել, վար առնել, վիատեցնել») բառի քննության փորձից ենթադրելի է, որ նրա աղերսները վերոնշյալ բառերի հետ թույլ են (**քաշ** «ցած» բառին անդրադառնալիս տրվել են առնչակից հնարավոր տարբերակները և համանունները):

Ե. **Քարշ** > **ր** անկումով. **քաշ(ել)** «քաշել» բազմիմաստ բառը փոխառություն է:

Բառի քննությունը եզրափակում ենք այն կարծիքով, որ հայերենում վկայվող և բարբառախմբում առկա **քաշ(կ)** «եղանակ, ձև, կերպ»¹⁹ (հմմտ.՝ **քրշկամեր** «մի այլ կերպ՝ առանց միջամտելու մերված կաթ», **քրշկածակ** «անձանոթ, ահագոու անցք կամ այր», **քրշկապեն** «անիմանալի ուժի կողմից արված գործ, սատանայի գործ, բան»), **քաշ(տ)**²⁰ (**քաշ** «մի տեսակ թռչուն՝ արծվի տեսակ՝ մուգ գույնի» (**թռչնաքաշ(տ)**)²¹) և **քաշ-ք/կ** «չար ոգի» բառերը ունեն ծագումնաբանական ընդհանրություններ: Բարբառախմբի **քի/քշերի**-ն, հնարավոր է, հետագայում է իմաստի նեղացում ստացել «կգաքիս»: Հավանական է՝ այն վերաիմաստավորվել է. նախապես պիտի ունեցած լիներ «մի որևէ կենդանի, որ գիշերն է դուրս գալիս», հմմտ.՝ **քիշե/իրածետ** «գիշերը շրջող թռչուն» > «չղջիկ»:

Զ. Փաստորեն՝ առկա է մնում **քաջ** և **քաջք (քաշկր)** բառերի ընդհանուր հիմքից լինելու հարցը, կամ քիչ հավանական է, որ դրանք նույն հիմքից են առաջացել. եթե հետևում ենք մատենագրական և բարբառային տեղեկություններին, ապա կարծում ենք՝ **1.** այլ քննություն են պահանջում **քաջ** «լավ» («ուժեղակ՝ առաւել աջով») և **քաջ** «դյուցազուն»

¹⁶ Տե՛ս նաև ՀՄԲ, էջ 159:

¹⁷ Տե՛ս նաև ՀՄԲ, էջ 776-777:

¹⁸ Այս մասին տե՛ս **Մ. Քումուց**, Տարածական հարաբերություններ արտահայտող բարբառային մի քանի հնարանությունների շուրջ (վիճահարույց ստուգաբանություններ, բնիկ և օտար բառային ընդհանրություններ կամ հանդիպադրումներ) // Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ 1, Ստեփանակերտ, 2021, էջ 17-19:

¹⁹ ՀՄԲ IV, էջ 553-554:

²⁰ ՀՄԲ IV, էջ 554:

²¹ «Իսկ թռչնաքաշտ որ մեծամեծ են էս սևաթոր, սպգաւ ի վերուստ ի վայր, եւ եկն ի սեղան թագաւորին...» (**Ստեփաննոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, հատ. Ա., Ի գործառնուն Կ. Վ. Շահնագարեանց, Փարիզ, 1859, էջ 93):

(«քաջագն») իմաստներով²² վկայված բառերը, և այս հիմունքով ուղղորդվելը կարող է պարզեցնել ծագումնաբանական հարցերը, **2. քաշ-ք/կ** «չար (հ)ոգի» բառի համար կանխադրում ենք ձևով և իմաստով առնչակից հ.-ե. ***uek-ti-** «ինչ-որ իր, բան, մարդ, էակ» հիմքը, որ ինքուրույն զարգացում է ունեցել թե՛ հին հայերենում (հմմտ. (բան. Մ. Խորենացի) ...**Քաջերը քեզ բունեն տանեն...**), թե՛ բարբառներում (հմմտ. **քաշկերը քեզ փրոնեն, քաշկը օնի քեզ, քաշկավ ինզես, քաշկու հիլիշտրանկ տառնասն** (անեծքներ), այլև **քաշկու կրտօր** «մութ, խավար», **քաշկու հրքասանիք** «խառնաշփոթ», **քաշկի պոնն** «անիծված վայր») և այլն:

Մյունիք-Արցախի նախապաշարմունքներում (հ)ոգիների կամ անհասկանալի, անիմանալի երևույթների և թռչունի աղերսները, մեկին մյուսի մեջ պատկերացնելը դրսևորվել են այլ բառերում ու հասկացություններում, հմմտ. **անգ-անգդ-Անգեղ**²³, **սունդու-սունդուկուկու, յենդակուկու: Քաշկ || քաշք** բառերի կ||ք-ն բարբառային տարբերակներ են: Ընդ որում, ենթադրվում են նաև **կ** և **տ** վերջադիրների նախաձևերը՝ **քաշ-ուկ** և **քաշ-ուտ** (հմմտ.՝ **քաշկուտ, քաշկավ ինզաւծ**), կամ, որ ավելի հավանական է, **կ||ք** և **տ-**ն տաբուի մնացուկներ են, երբ բառին ավելացնելով որևէ մասնիկ կամ փոխելով նրա որևէ հնչյուն՝ բառը անձանաչելի է դառնում չար ոգուն, և նա այլևս չի կարողանում վնասել²⁴, հմմտ. Մյունիք-Արցախում՝ **կրորհաքի**²⁵: Առայժմ մեզ չի հանդիպել **քաշ(տ)** թռչունի հետ կապված որևէ նախապաշարմունքային մնացուկ (**քաշ-քի/րչեղակ**-ը, հնարավոր է, այդ դեպքերից չէ՛ «տարբեր թռչուններ»), կամ գուցե այդ երևույթները խտացվել են բառի մեջ և այդուհետև ըմբռնվել **քաշկ** «մի այլ ձևի, կերպի (հ)ոգի»։ իսկապես դժվար է որոշել: Ուստի այս համատեղմաներից պայմանականորեն միայն մեկն ենք դնում՝ «նախապաշարմունք» ենթախմբում: Բարբառախմբի՝ **քաշք** բառով բազմաթիվ դարձվածքներ և կազմություններ կրում են «չար ոգի, տգեղ, մի ինչ-որ առեղծվածային էակ, չար ոգու ձև, կերպ, նրա գործողության եղանակ» հասկացությունները **քաշկավ կյսի, քաշկավ ինզել** և այլն:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ **քաշ(-)** հնչյունակազմով համանունները լեզվի պատմական զարգացման ընթացքում յուրահատուկ ճանապարհ են անցել, փոփոխվել ժողովուրդների փոխշփումների, լեզվի տարբերակների հանդիպադրումների և այլ գործոնների հետևանքով, որոնք էլ ավելի են դժվարացրել նրանց ծագումնաբանական քննությունը: Ուստի և՛ հնարավոր չէ վերոբերյալ կանխադրույթները համարել սպառիչ:

²² Տե՛ս **Գ. Աւետիքեան, Խ. Միրմիշեան, Մ. Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (հատ. I-II, Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836-1837), հատ. II, Եր., 1981 (1979-1981), էջ 981 (այսուհետև՝ ՆՀԲ):

²³ **Մ. Քուսունց**, Անգ>(Ս)անգեղ (Nergal -'Epye'λ) «անգղ», բժիծ, պիծակ բառերի ստուգաբանություն // Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հատ. 2, Սյուեփանակերտ, 2019, էջ 139-143:

²⁴ Տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի: Համեմատությամբ 562 լեզուների, հատ. IV, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1961, էջ 721-722 (այսուհետև՝ ԼՔՀԼ):

²⁵ ԼՔՀԼ VI, էջ 721-723:

Այսպիսով՝ ներկայացնենք «կրոն և նախապաշարմունք» բառ-
 իմաստային խմբի բառերի քանակական պատկերը

Ենթախմբեր ²⁶	Ըստ Կ. Բաքի	Վիճահարույց	Ըստ Գ. Ջահուկյանի	Սյունիք-Արցախ
1.	12	5	17	9
2.	6	0	6	3
3.	7	1	2	2
4.	7	1	11	7
Ընդամենը	32	7	36	21

**МГЕР КУМУНЦ – Исследование нескольких слов о религии и предрас-
 судках (согласно словарному запасу сюнникско-арцахских диалектов).** – В лек-
 сике Сюникско-Арцахского диалекта слова религиозного характера составляют
 58% по сравнению с армянскими, и по сравнению со списком, составленным Д.
 Баком - 66%.

В тематическую группу, образованную предыдущими, добавлены три слова,
 согласно лексике Сюникско-Арцахского диалекта, которые, по нашему мнению,
 имеют индоевропейское происхождение: кашк-кашк (**քաշկ – քաշկ**), сунду-сунду
 (куку) (**սոննդոն-սոննդոն(կուկու)**), купел-куп (эл) (**կուփեկ-կոնփ(էլ)**).

Остается нерешенным вопрос, является ли кадж (**քաջ**)икаджк (кашк) (**քաջք
 (քաշկը)**) общей основой слов. Более вероятно, что каш-къ/к (**քաշ-ք/կ**), «злая
 душа», имеет индоевропейское происхождение: *цек-ti- «ничто, вещь, человек,
 существо». Слово Сунду (**Սոննդոն**), скорее всего, происходит от корня *sent –
 «направиться, идти, движение, путь, дорога»: сундукуку (**սոննդոնկուկու**), **Син-
 дара (Մինդարա)**.

Мы считаем, что слово куп(эл) (**կոնփ(էլ)**) - это- 1. «Прикосновение, удар
 злого духа, демона или ангела человеку, ребенка,» в лексике Сюникско-
 Арцахского диалекта по значению и форме родственен первичным и вторич-
 ным формам индоевропейского корня *(s)kep(h)- || *(s)kōp-: 1. «укрывать,
 покрывать, защищать»; 2. «бить, резать» (возможное развитие от последнего
 значения). В словаре Покорного под словом (s)kōp- упоминается ряд слов,
 отражающих семантическое сходство слова «куп(эль)-» (**կոնփ(էլ)**) в индоев-
 ропейских языках, например древневерхненемецкое **scaffōn** «форма, причи-
 на», древнеисландское **skap** «форма, душевное состояние» и др.

Ключевые слова: Сюник-Арцах, тематическая группа, религия, предрассудки, диа-
 лектная лексика, индоевропейский язык, этимология

**MHER KUMUNTS – Survey of Several Words about Religion and Prejudice
 (According to the Syunik-Artsakh dialect dictionary).** – In the dialectical vocabulary of
 Syunik-Artsakh, religious words make up 58% com-pared to Armenian, and compared
 to the list of K. Baq compiled by Baku - 66%. Three words have been added to the
 thematic group formed by the previous ones, according to the data of Syunik-Artsakh
 dialectical vocabulary, which, we think, are of In-do-European origin: **kashk-kasq**

²⁶ Ենթախմբերը ներայացված են Կ. Բաքի կազմած թեմատիկ խմբի համեմատու-
 թյամբ (**Buck C. D.**, A Dictionary of selected synonyms in the principal Indo-European lan-
 guages (A contribution to the history of ideas), University of Chicago press, Chicago & London,
 1988, p. 1462):

(քաշկ – քաշկ/ք), **sundu-sundu (kuku) (սունդուն-սունդուն(կուկու)), kupel-kup(el) (կուփել-կուփ(էլ))**. There's a question of whether **kaj (քաջ)** և **kajq (kashk) քաջք (քաշկք)** is the general basis of the words. It is more probable that **kash-q / k (քաշ-ք/կ)**, "evil spirit", has Indo-European origin: ***uek-ti-** "something, thing, man, being".

The word (**Սունդուն**) probably derives from the root ***sent** – “direct, go, motion, way, road:” **sundukuku (սունդունկուկու), Sindara (Սինդարա)**.

We think that the word **kup(el) (կուփ(էլ))**: 1. “Touch, blow, blow of a person, child, evil spirit, demon or angel” in the vocabulary of the Syunik-Artsakh dialect in meaning and form it is related to primary and secondary forms of the Indo-European root *(s)kep(h)- || *(s)kōp-: 1. "cover, cover, cover, protect"; 2. "beat, cut" (possible development from the last meaning). In the Pokorny dictionary, under the word (s)kōp-, a number of words are mentioned that reflect the semantic similarity of the word "kup(el)-" (կուփ(էլ)) in Indo-European languages, for example, Old High German *scafōn* "form, cause", Old Norse *skap* "form, mental condition", etc.

Key words: *Syunik-Artsakh, thematic group, religion, prejudice, dialect vocabulary, Indo-European, etymology*

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՂՈՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ
ԹԱԼԻՇԵՐԵՆԻ ԱՆԲԱՐԱՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

ՀԱԿՈՒ ԱՎՉՅԱՆ

Իրանական նախալեզուն ունեցել է ութ հոլով, որոնք բոլորը պահպանվել են Ավեստայի լեզվում, իսկ հին պարսկերենում սինկրետիզմի հետևանքով մնացել են դրանցից վեցը. սեռականը իրականացնում է նաև տրականի գործառույթները, իսկ գործիականը՝ բացառականի¹: Դեռևս հին իրանական լեզվադարաշրջանում իրանական լեզուների թեքական համակարգը սկսում է քայքայվել², և արդեն միջին իրանական լեզվադարաշրջանում արևմտաիրանական լեզուները կորցնում են հին իրանական բոլոր հոլովները՝ բացառությամբ սեռականի՝ *-ahya > -ē³: Վերջինս որպես թեք հոլով թեև գործածական էր միջին պարսկերենում, բայց դա պարտադիր չէր և հեշտությամբ փոխարինելի էր ուղիղ հոլովով⁴, իսկ արդեն ժամանակակից պարսկերենում այն ամբողջությամբ անհետանում է, այնինչ պահպանվում է թալիշերենում՝ որպես թեք հոլովի ցուցիչ՝ -i (Անբարանի բարբառում՝ -ə):

Թալիշերենի քերականությանը նվիրված ոչ այնքան բազմազան գրականությունը աչքի է ընկնում լեզվի հոլովական համակարգի հարցում ընդգծված տարակարծությամբ. որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ թալիշերենին հատուկ է երկհոլով համակարգը՝ ուղիղ և թեք հոլովների հակադրությամբ⁵, ոմանք կարծում են, որ այն եռաստիճան է՝ ուղիղ, թեք և բացառական (աբլատիվ) հոլովներով⁶, հետազոտողների մի մասն էլ տարբերակում է երեքից ավելի հիմնական հոլով՝ հոլովների շարքում ընդգրկելով նաև վոկատիվ (կոչական) հոլովը⁸:

¹ Տե՛ս **P. Skjærvø**, Old Iranian, in *The Iranian Languages*, London and New York, 2009, էջ 71:

² Հին իրանական թեքական համակարգի անկումը կապված է հին իրանական ուժային շեշտի կանոնի հետ. շեշտը ընկնում էր բառի վերջից երկրորդ վանկի վրա, եթե այն երկար էր, իսկ եթե վերջից երկրորդ վանկը կարճ էր, շեշտվում էր վերջից երրորդ վանկի ձայնավորը: Եվ քանի որ ըստ այդ օրենքի բառավերջի քերականական վերջավորությունները անշեշտ էին և, հետևաբար, ավելի քիչ ուժով էին արտասանվում, աստիճանաբար սկսում են թուլանալ ու ընկնել: Տե՛ս **И. Оранский**, Введение в иранскую филологию, М., 1988, էջ 144-145:

³ Տե՛ս **J. Hewson, V. Bubenik**, From case to adposition. The development of configurational syntax in Indo-European languages, Amsterdam-Philadelphia, 2006, էջ 138:

⁴ Տե՛ս **В. Расторгуева**, Средне-персидский язык, М., 1966, էջ 50:

⁵ Տե՛ս **Л. Пирейко**, Тальшско-русский словарь, М., 1976, էջ 325, **G. Windfuhr**, Cases, in *Encyclopædia Iranica*, Vol. V, Costa Mesa, 1992, էջ 29:

⁶ Տե՛ս **Б. Миллер**, Тальшский язык, М., 1953, էջ 88:

⁷ Տե՛ս **W. Schulze**, Northern Talyshi, München, 2000, էջ 17:

⁸ Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող հյուսիսային թալիշե-

Հովովի քերականական կարգի շուրջ նման տարակարծություն, բնականաբար, առկա է ոչ միայն թալիշագիտության շրջանակներում. տարբեր գիտնականներ հայերենի հոլովական համակարգում տարբերակում են հինգ⁹, վեց¹⁰ կամ յոթ հոլով¹¹:

Թե՛ հայերենի և թե՛ թալիշերենի հոլովների քանակի որոշարկման՝ թերևս մինչ այսօր վերջնական լուծում չստացած խնդիրը պահանջում է խորը և համակողմանի ուսումնասիրություն, ինչը, սակայն, դուրս է սույն հետազոտության շրջանակներից: Հայերենի հոլովական իմաստների դրսևորումները թալիշերենի Անբարանի բարբառում ներկայացնելու համար հոդվածի հիմքում դրվել են հայերենի յոթ հոլովների և թալիշերենի երկհոլով համակարգի տեսությունները:

Բանալի բառեր – թալիշերեն, հյուսիսային թալիշերեն, հայերեն, Անբարանի բարբառ, հոլով, հետադրություններ, նախադրություններ

1. Հայերենի ուղղական հոլովին համարժեք դրսևորումները թալիշերենի Անբարանի բարբառում

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է, այն հատուկ վերջավորություն չունի: Ուղղական հոլովը ցույց է տալիս բառիմաստն իր ամբողջ ծավալով, բացարձակ ձևով, առանց լրացուցիչ նշանակությունների¹²: Ուղղական հոլովով դրված բառը հայերենում նախադասության մեջ հանդես է գալիս հետևյալ գործառույթներով.

• *Ենթակա*: Նախադասության գլխավոր անդամներից ենթական ցույց է տալիս, թե ով կամ ինչն է կատարում մյուս գլխավոր անդամի՝ ստորոգյալի մատնանշած գործողությունը: Պայմանավորված թալիշերենում նախադասության երգատիվ կառուցվածքով¹³՝ հայերենի՝ ուղ-

րենում տարբերակելով երեք հոլով՝ ուղիղ (-Ø), թեք (-i) և արլատիվ (-o)՝ Միլլերը նշում է, որ «թալիշերենի երրորդ պատմական -a հոլովը անկասկած հին իրանական լեզուների կոչական հոլովն է, բայց, բնականաբար, հոլով չի համարվում այս եզրի ժամանակակից հասկացությամբ» (**Б. Миллер**, նշվ. աշխ., էջ 75) և «...ընդհանուր հոլովման համակարգի բնութագրման համար նշանակություն չունի» (նույն տեղում, էջ 88): Շուլցեն, թեև ներառում է այս հոլովը հյուսիսային թալիշերենի հիմնական չորս հոլովների շարքում, այնուամենայնիվ ընդգծում է, որ այն շատ հազվադեպ է հանդիպում՝ այն էլ գործածվելով իգական սեռի (նկատի ունի գոյականի բնական սեռը) անձ ցույց տվող գոյականների հետ, օրինակ չեն-a «ո վ կին, ա յ կին» (տե՛ս **W. Schulze**, նշվ. աշխ., էջ 17):

⁹ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 334:

¹⁰ Տե՛ս **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 219:

¹¹ Տե՛ս **Գ. Մևակ**, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն: Դասագիրք բուհերի համար, Եր., 1939, էջ 145:

¹² Տե՛ս **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2004, էջ 66:

¹³ Թալիշերենում սուբյեկտի երգատիվությունը արտահայտվում է կցական դերատունների միջոցով, որոնք միանում են օբյեկտին, իսկ բայը դրվում է անցյալի հիմքից կազմված չխոնարհվող ձևով՝ բառավերջի ձայնավորի հավելմամբ՝ կախված անցյալի ժամանակաձևից: Թալիշերենը չի կարելի համարել ամբողջովին երգատիվ լեզու (թեև, ըստ Դիքսոնի, գոյություն չունի ոչ մի ամբողջովին երգատիվ լեզու (տե՛ս **Y. Otsuka**, Ergativity in Tongan, Oxford, 2000, էջ 14). նախադասության երգատիվ կառույցն արտահայտվում է միայն ստորոգյալի՝ անցողական բայի սահմանական եղանակի անցյալ կա-

ղական հոլովով դրված ենթակայի շարահյուսական պաշտոնով հանդես եկող բառը Անբարանի բարբառում դրսևորման երկու համարժեք ձև ունի՝ 1) ուղիղ հոլովով՝ բառի ուղիղ ձևով՝ նումինատիվ նախադասություններում, օրինակ՝ «**Մարիամը** իր եղբոր հետ էր դպրոց գնում» - ‘**Mariam** əštān bəvanda ba madrasa bə šina’, և թեք հոլովով¹⁴՝ նախադասության երգատիվ կառուցվածքում (երբ նախադասության ստորոցայլը անցողական բայ է և դրված է սահմանական եղանակի անցյալ կատարյալ, վաղակատար կամ անցյալ վաղակատար ժամանակաձևերով), օրինակ՝ «**Մարիամը** թուղթը պատռեց» - ‘**Mariamə** koyāzəš poa kə’:

Հարկ է նշել, որ Թալիշերենի Անբարանի բարբառում ուղիղ և թեք հոլովների հակադրությունը արտահայտվում է միայն եզակի թվով դրված գոյականների դեպքում: Հոգնակի գոյականները երբեք չեն ստանում -ə թեք հոլովի ցուցիչ, այսինքն՝ նախադասության մեջ շարահյուսական բոլոր պաշտոններում հոգնակի գոյականը միշտ ունի միևնույն տեսքը՝ բառի ուղիղ ձև + -սո¹⁵ (-ո) հոգնակիակերտ վերջածանց: Հետևաբար, հայերենի՝ ուղղական հոլովով դրված հոգնակի թվով ենթական թալիշերենի Անբարանի բարբառում, անկախ նախադասության երգատիվ կամ նումինատիվ լինելու հանգամանքից, միշտ արտահայտվում է ընդամենը բառի հոգնակիակերտ վերջածանցով՝ «Ամեն ձևեռ **թոչուները** չվում են տաք երկրներ» - ‘hār zemāstun **kižan** ba gāma kišvarun parvāzin kana’, «**Հյուրերը** կերան քաղցր մրգերը» - ‘**yonayun** šina mivanəšun hārde’:

Հետաքրքիր պատկեր ենք ունենում, երբ հայերենում նախադա-

տարյալ, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերով գործածված լինելու դեպքում: Ինչ վերաբերում է կցական դերանուններին, ապա, ինչպես Միլլերն է նշում, «դրանց հիմնական ու, կարելի է ասել, բացառիկ շարահյուսական գործառնությունը նախադասության սուբյեկտի երգատիվության արտահայտումն է, և այդ առումով թալիշերենը բավականին մոտ է միջին պարսկերենին» (Б. Миллер, նշվ. աշխ., էջ 123):

¹⁴ Թալիշերենի Անբարանի բարբառում թեք հոլովով դրված գոյականը ստանում է -ə (թալիշական այլ բարբառներում՝ -i) հոլովական վերջավորությունը: Միլլերը այն հանգեցնում է հին պարսկերենի hya հարաբերական դերանվանը (Б. Миллер, նշվ. աշխ., էջ 79): Ըստ Շուլցեի՝ հոլովական այս վերջավորությունը համապատասխանում է հին պարսկերենի -a հիմքով բառերի եզակի թվի սեռական հոլովի -ahyā ցուցչին (W. Schulze, նշվ. աշխ., էջ 17), որն էլ իր հերթին հանգում է հին իր. *-ahya հոլովական վերջավորությանը (G. Windfuhr, նշվ. աշխ., էջ 27): Գոյականի թեք հոլովի հիմնական գործառնություններից մեկը սեռական հոլովի իմաստի արտահայտումն է. -ə հոլովական վերջավորությունը, միանալով գոյականին, ցույց է տալիս պատկանելություն, օրինակ՝ ženə bala «կնոջ երեխան», itoyə penja «սենյակի պատուհանը» և այլն:

¹⁵ Այս վերջածանցը համապատասխանում է ժամանակակից պարսկերենի -ān հոգնակիակերտ մասնիկին (Б. Миллер, նշվ. աշխ., էջ 74; W. Schulze, նշվ. աշխ., էջ 17), որն էլ ավանդաբար հանգեցվում է *-a հիմքով արմատների հոգնակի թվի սեռական հոլովի հին իրանական *-ānām վերջավորությանը: Հոգնակի թվի -սո վերջածանցը կցվում է բառի ուղիղ ձևին և ճիշտ ինչպես Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող հյուսիսային թալիշերենի բարբառներում, արտահայտում է բոլոր կատեգորիաների գոյականների հոգնակի թիվը՝ անկախ դրանց շնչավոր կամ անշունչ, անձ կամ իր, թանձրացական կամ վերացական լինելուց (Б. Миллер, նշվ. աշխ., էջ 73), օրինակ՝ ženun «կանայք», pasun «ոչխարներ», dəšun «արտեր», dužun «ցավեր» և այլն:

սուրբան էնթակայի շարահյուսական պաշտոնով հանդես են գալիս անձնական դերանունները. թալիշերենի Անբարանի բարբառում թեք ձևեր ունեն միայն եզակի թվի երրորդ դեմքի անձնական դերանունները¹⁶, որոնք համապատասխանում են հայերենի՝ անցողական բայով արտահայտված և անցյալ կատարյալ, վաղակատար ներկա կամ վաղակատար անցյալ ժամանակաձևերով դրված ստորոգյալով նախադասության՝ ուղղական հոլովով դրված ենթակային, օրինակ՝ «**Ես** ճանաչեցի այդ կնոջը» - ‘**mānə** a ženəm zəne’, «**Նա** պատռեց իր քրոջ գիրքը» - ‘**avə** əštānəš hoā kitob poā kā’: Իսկ երբ հայերեն նախադասության ստորոգյալը անանցողական բայ է կամ/և դրված է այլ ժամանակաձևով, կիրառվում են այս դերանունների ուղիղ ձևերը՝ «**Ես** ճանաչում եմ այս կնոջը» - ‘**āz** ə ženə zənam’, «**Նա** արթնացավ իր ծեր կատվի բարձր ձայնից» - ‘**av** əštān pia pišigə bārza sado gorao bepe’:

Մյուս բոլոր դեպքերում, քանի որ Անբարանի բարբառի անձնական դերանունները ունեն միայն ուղիղ ձև, դրանք համապատասխանում են հայերենի՝ անձնական դերանունների ուղղական հոլովով արտահայտված ենթակային՝ անկախ նախադասության ստորոգյալի անցողական կամ անանցողական բայ լինելու հանգամանքից և կիրառված ժամանակաձևերից, օրինակ՝ «**Դու** քանդում էիր այդ պատը» - ‘**tə** a divo kānna biš’, «**Դու** կերա ր այդ համեղ հացը» - ‘**tə** a lazatina nune hārde?’, «**Մենք** սպրում ենք աշխարհի ամենալավ քաղաքում» - ‘**ama** hamasa čuka diandamun zindagi kana’, «**Մենք** սպանեցինք մեր թշնամիներին» - ‘**ama** dəšmununəmun kəšte’:

• *Որոշիչ*: Որոշիչը գոյականական անդամի՝ առարկայի որակական և քանակական հատկանիշ ցույց տվող լրացումն է: Հայերենի ուղղական հոլովով արտահայտված գոյական որոշչի իմաստն Անբարանի բարբառում արտահայտվում է -a վերջավորության¹⁷ օգնությամբ կազմված որոշիչ-որոշյալ կապակցության միջոցով, օրինակ՝ «Այդ կինը **նուկի** ձեռքեր ունի» - ‘A ženə ro **yəzəla** dastun heste’:

• *Կոչական*: Կոչականը նախադասության մեջ ցույց է տալիս, թե ում կամ ինչին է ուղղված խոսքը: Ինչպես հայերենում, այնպես էլ թալիշերենի Անբարանի բարբառում կոչականն արտահայտվում է բառի ուղիղ ձևով, օրինակ, «**Մայրի՛կ**, ինչո՞ւ ես վախենում մահվանից» - ‘**Nana**, čaroš mārǵəku tārsina?’:

• *Ստորոգելի*: Ստորոգելին բաղադրյալ ստորոգյալի այն բաղադրիչն է, որի միջոցով արտահայտվում է նախադասության ենթակային ստորոգվող-վերագրվող որակը (հատկանիշ կամ առարկա)¹⁸: Հայերե-

¹⁶ Անբարանի բարբառի անձնական դերանուններն են՝ āz, tə, av, ama, šəma, avun: Դրանցից թեք ձևեր ունեն միայն եզակի թվի առաջին և երրորդ դեմքի դերանունները՝ համապատասխանաբար mān և avə:

¹⁷ Թալիշերենի Անբարանի բարբառում -a վերջածանցը կարող են ընդունել նաև գոյականները, երբ հանդես են գալիս որոշչի շարահյուսական պաշտոնում, օրինակ՝ veiza do «ընկուզենի (ընկուզի ծառ)», žena kif «կանացի պայուսակ»:

¹⁸ Տե՛ս **Գ. Խաչատրյան**, Հայոց լեզվի ոլորաններում, Վանաձոր, 1994, էջ 103-104:

նի՝ ուղղական հոլովով արտահայտված ստորոգելիական վերադրին Անբարանի թալիշական բարբառում համապատասխանում է բառի ուղիղ ձևը, օրինակ՝ «Մեր հարևանը հայտնի **բժիշկ** է» - ‘Čama hamsuya marofa **dukture**’:

2. Հայերենի սեռական հոլովի իմաստի արտահայտումը Անբարանի բարբառում

Սեռական հոլովը ցույց է տալիս պատկանելություն, վերաբերություն, ինչպես նաև սերում, ծագում և ամբողջի ու մասի հարաբերություն:

• *Հատկացուցիչ*: Սեռական հոլովի հիմնական գործառույթը հատկացուցչի շարահյուսական պաշտոնով հանդես գալն է: Անբարանի բարբառում սեռական հոլովի իմաստն արտահայտվում է թեք հոլովով՝ -ə հոլովական վերջավորությամբ, օրինակ՝ «Մի օր ինչ-որ մեկը **Նասրեդդինի** աքլորը գողացավ» - ‘i ruž i nafarə **Nasreddinə** sukəš dəzdə’, «Նասեյյակի բանալին ինձ տվեց» - ‘avə **itoyə** kilitəš ba mān do’: Հատկացուցիչ-հատկացյալ կապի արտահայտման համար երբեմն թեք հոլովով դրված հատկացուցչից առաջ դրվում է նաև չə նախդիրը, օրինակ՝ «**Ահմադի** ընկերը եկավ» - ‘čə **Ahmadə** dust uma’, «Տղան կոտրել է **այգու** ծառը» - ‘zua **čə buyə** doš arəštay’ և այլն:

Հայերենի՝ անձնական դերանունների սեռական հոլովով դրված հատկացուցչի շարահյուսական պաշտոնը Անբարանի բարբառում արտահայտվում է ստացական դերանունների¹⁹ միջոցով, օրինակ՝ «**Իմ** աջ ձեռքը այսօր շատ է ցավում» - ‘čə**mān** rosta das əmruž xayli dižinay’, «**Ձեր** եղբայրները շատ խիզախ են» - ‘čə**avə** bəvan xayli šojanə’:

• *Գոյական որոշիչ*: Հայերենում սեռական հոլովով արտահայտված գոյական որոշիչն թալիշերենի Անբարանի բարբառում կրկին համապատասխանում է թեք հոլովով դրված գոյականը՝ «**Թեյի** բաժակը ընկավ» - ‘čə**ayə** livān agəni’, «Այս **ձեռքի** ժամացույցը շատ լավն է» - ‘ə**m dāstə** sāat xayli čuk-e’:

• *Ստորոգելիական վերադիր*: Թալիշերենի Անբարանի բարբառի համար խորթ է հայերենում գոյականների սեռական հոլովով դրված ստորոգելիական վերադիրով նախադասությունների կառույցը. նման նախադասությունները Անբարանի բարբառում վերափոխվում են այնպես, որ հայերեն նախադասության սեռական հոլովով դրված ստորոգելիական վերադիրը թալիշերեն նախադասության մեջ հանդես է գալիս որպես հատկացուցիչ, իսկ ենթական՝ որպես ստորոգելի, օրինակ՝ «Այս գիրքը **Ահմադինն** է» (= «Մա Ահմադի գիրքն է») - ‘ə**m** ɕə **Əhmədi** kitube’, «Այդ կոշիկը **Ժալեինն** է» (= «Դա Ժալեի կոշիկն է») - ‘ə**v** ɕə **Žalə** mašuy’: Այս դեպքում Անբարանի բարբառում թեք հոլովով դրված հատ-

¹⁹ Անբարանի բարբառի ստացական դերանունները վերլուծական ձևեր են՝ կազմված չə նախդիրից և անձնական դերանուններից՝ čə**mān** «իմ», ə**štə** «քո», čə**avə** «նրա», čə**ama** «մեր», šə**ma** «ձեր», čə**avan** «նրանց»:

կացուցչից առաջ, ինչպես երևում է վերոբերյալ օրինակներում, կարող է կիրառվել նաև ճՅ նախադրությունը:

Ինչ վերաբերում է հայերենում դերանունների սեռական հոլովով դրված ստորոգելիական վերադիրներին, ապա Անբարանի բարբառում դրանց համապատասխանում են ստացական դերանունները, որոնք ստանում են -i վերջածանց և թարգմանվում *խմը, քոնը, նրանը, մերը, ձերը, նրանցը*, օրինակ՝ «Այս մեծ տունը **նրանցն** է» - ‘əm yula ka čavuniy’, «Այդ մեքենան **խմը** չէ, **քոնն** է» - ‘ə mašin čəmāni niy, əštəniy’:

3. Հայերենի տրական հոլովին համարժեք դրսևորումները թալիշերենի Անբարանի բարբառում

Տրական հոլովը ցույց է տալիս առարկա կամ անձ, որին հանգում է ենթակայի կատարած գործողությունը, որին մոտենում կամ տրվում է մի բան: Հայերենի տրական հոլովի իմաստը թալիշերենի Անբարանի բարբառում արտահայտվում է հիմնականում *ba*²⁰ նախադրության միջոցով, բայց, կախված հայերենում տրական հոլովով դրված բառերի շարահյուսական պաշտոնների իմաստաբանական որոշակի նրբերանգներից, հայոց լեզվի տրական հոլովի իմաստի փոխանցման համար կարող են կիրառվել այլ նախադրություններ ու հետադրություններ ևս:

• *Հանգման անուղղակի խնդիր*: Տրական հոլովով դրված հանգման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է ենթակայի կատարած գործողությունը: Անբարանի բարբառում հանգման անուղղակի խնդրի իմաստն արտահայտվում է *ba* նախադրության օգնությամբ, որը կիրառվում է բառի ուղիղ ձևի հետ՝ «Թշնամին մոտենում է մեր **քաղաքին**» - ‘dəšmun **ba** čama **šahr** nezo bina’, «Մի խնձոր ծառից **գետնին** ընկավ» - ‘ila sef doo **ba zamin** agəni’:

• *Մատուցման անուղղակի խնդիր*: Մատուցման անուղղակի խնդիրը ևս դրվում է տրական հոլովով՝ ցույց տալով այն առարկան, անձը, որին տրվում, մատուցվում կամ հանձնվում է մի բան: Այս խնդրի իմաստը նույնպես Անբարանի բարբառում արտահայտվում է բառի ուղիղ ձևի հետ գործածված *ba* նախադրությամբ, օրինակ՝ «Այս ծաղկեփունջը **մայրիկի** ն տուր» - ‘əm dāsta vələ bəda **ba nana**’, «Նա բարձի տակից մի սպիտակ թուղթ հանեց և տվեց իր **թոռանը**» - ‘av bološna žiuš ila səpia koyāz beva bi doše **ba** əštān **nava**’:

• *Տեղի պարագա*: Տեղի պարագան՝ գործողության կատարման, եղելության տեղը ցույց տվող նախադասության անդամը, հայերենում կարող է արտահայտվել նաև տրական հոլովով: Այս դեպքում թալիշերենի Անբարանի բարբառում կարող են կիրառվել տարբեր հետադ-

²⁰ Ba նախդիրը համապատասխանում է ժամանակակից պարսկերենի *be* նախդիրին և հանգում է իրանական **pati* նախաձևին (տե՛ս **В. Ефимов, В. Расторгуева, Е. Шарова**, Персидский, таджикский, дари. Основы иранского языкознания. Новоиранские языки: западная группа, прикаспийские языки, М., 1982, Наука, էջ 197):

րություններ, ինչպես. anda²¹՝ «Օովափին նստած էինք» - ‘deyo kinoanda nəštə bimun’, sa²²՝ «Ձեր տետրերը սեղանին են» - ‘šəma daftarun mizəsan’, piu²³՝ «Մեր այգու ծառերին արագիլները բույն են հյուսել» - ‘čama buyə don piu laklakun lunay tumu kārda’:

• *Ժամանակի պարագա:* Հայերենում տրական հոլովով դրված գոյականը կարող է հանդես գալ նաև ժամանակի պարագայի քերականական պաշտոնով՝ ցույց տալով գործողության կատարման, եղելության ժամանակը: Այս դեպքում ևս Անբարանի թալիշական բարբառում հայերենի տրական հոլովի իմաստը արտահայտվում է anda հետադրության միջոցով՝ «**Լուսաբացին** շտապ դուրս եկավ տանից» - ‘subanda ajalanda kao beše’, «**Ժամը հինգին** ես ու եղբայրս գնացինք տուն» - ‘sāat penjanda āz bə čəmān bəva ba ka šimun:

• *Նպատակի պարագա:* Հայերենում տրական հոլովով արտահայտված գործողության կատարման նպատակի իմաստը թալիշերենի Անբարանի բարբառում արտահայտվում է բառերի թեք հոլովի հետ կիրառվող ro²⁴ հետադրության օգնությամբ՝ «Գնացել էիք **ջրի**» - ‘šəma šabin ovəro’, «Վաղը վերադառնալու ենք այնտեղ **աշխատելու**» - ‘māški obagārdamun ayo ko kārdero’:

4. Հայերենի հայցական հոլովի իմաստի արտահայտումն Անբարանի բարբառում

Հայցական հոլովը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որն իր վրա կրում է ենթակայի կատարած գործողությունը: Այս հոլովը ստանում է որոշիչ հոդ և իրանիշ գոյականների դեպքում ձևով նման է ուղղական հոլովին, անձնանիշ գոյականների դեպքում՝ տրականին: Հայցական հոլովով դրված գոյականները հանդես են գալիս շարահյուսական հետևյալ պաշտոններով.

• *Ուղիղ խնդիր:* Թալիշերենի՝ կիսաերգատիվ լեզու լինելու հան-

²¹ Anda հետադրությունը համապատասխանում է ժամանակակից պարսկերենի dar՝ «մեջ» հետադրությանը (հմմտ. դաս. պ. andar/dar, միջ.պ. andar, հին պ. a*tar < իր. *antar): Ձայնավորով վերջացող բառերից հետո դրա բառասկզբի ձայնավորը սղվում է կիրառվելով nda ձևով:

²² Sa բառացիորեն նշանակում է «զուխ» (հմմտ. ժ. պ. sar): Որպես հետադրություն՝ այն հիմնականում արտահայտում է «վրա» կապի իմաստը:

²³ Piu հետադրությունը բաղադրյալ կազմություն ունի. կազմված է pe «վերև» մակբայից և o հետադրությունից, որը արտաբերության նեղացման հետևանքով Անբարանի բարբառում դարձել է u: Այս հետադրության հետ գործածվող բառերը դրվում են թեք հոլովով:

²⁴ Ro հետադրության միջոցով թալիշերենում արտահայտվում է այսպես կոչված բենեֆակտիվ հոլովի իմաստը, որը ժամանակակից պարսկերենում արտահայտվում է barāye «համար» նախդիրի միջոցով: Ինչպես և ժամանակակից պարսկերենի rā հետադրությունը, այն ևս հանգում է իրանական *radi ձևին (> հ. պ. rādiy > միջ. պ. rād), բայց, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, որտեղ այս հետադրությամբ արտահայտվում է նախադասության ուղիղ խնդիրը, թալիշերենի Անբարանի բարբառում ro-ն պահպանում է «համար, հանուն» իմաստը, ինչպես եղել է նաև միջին պարսկերենում և մասնակիորեն դասական նոր պարսկերենում (տե՛ս **В. Расторьева**, նշվ. աշխ., էջ 126-128):

զամանքով է պայմանավորված այն փաստը, որ հայերենի՝ ուղիղ խնդրի գործառույթով հանդես եկող որոշյալ առումով դրված բառերի հայցական հոլովի իմաստն Անբարանի բարբառում կրկին արտահայտվում է կա՛մ ուղիղ հոլովով, կա՛մ թեք հոլովով՝ կախված նախադասության ստորոգյալի բայի անցողականությունից և ժամանակաձևից: Այսպես, օրինակ, «Թագավորը վերցնում է **թագը** և տալիս բանաստեղծին» - ‘Podšo **tājə** gatnay bə donay ba šäerə’ նախադասություններում հայերենի ուղղական հոլովով դրված «թագը» ուղիղ խնդրին համապատասխանում է Անբարանի բարբառի թեք հոլովով կիրառված ‘tajə’ բառը: Իսկ երբ նույն նախադասության մեջ «տալ» անցողական բայը կիրառվում է, օրինակ, անցյալ կատարյալ ժամանակաձևով, հայերենի ուղղական հոլովն արտահայտվում է թալիշերենի ուղիղ հոլովով՝ «Թագավորը **թագը** տվեց բանաստեղծին» - ‘Podšo **tāj** ba šäerə doše’: Նույն կերպ արտահայտվում է հայերենի անձ ցույց տվող՝ որոշյալ առումով դրված ուղիղ խնդիրը՝ «Աստված միշտ պատժում է չար **մարդուն**» - ‘xədo hamiša bevaja **odamə** mojäzäte kana’, բայց՝ «Աստված պատժեց այդ **մարդուն**» - ‘xədo a **odam** mojäzät kārdoše’:

Հայերենի անորոշ առումով դրված ուղիղ խնդիրը Անբարանի թալիշական բարբառում արտահայտվում է կա՛մ բառի ուղիղ ձևով, կա՛մ անորոշության հատուկ ցուցիչի՝ *ila* բառի միջոցով՝ անկախ այն հանգամանքից՝ նախադասության ստորոգյալը անցողական թե անանցողական բայ է կամ ինչ ժամանակաձևով է այն կիրառված, օրինակ՝ «Մայրս եղբորս համար **մի** հետաքրքիր **գիրք** է գնել» - ‘čəməñ nana čəməñ bəvaroš **ila** jāleba **kitob** estay’, «Այս գիշեր **գիրք** կկարդամ կամ **ֆիլմ** կդիտեմ» - ‘āz əməšango kitub bahāndem ya film tamšo bakām, «**Մի կնոջ** տեսա փողոցում» - ‘**ila jen** vindəme xiābunanda’:

Ինչպես արդեն նշվեց, Անբարանի բարբառում ուղիղ և թեք հոլովների հակադրությունը վերանում է, հետևաբար հայերենում հոգնակի թվով դրված ուղիղ խնդիրը Անբարանի բարբառում միշտ արտահայտվում է բառի ուղիղ ձևով և հոգնակիակերտ -տո (-ո) վերջածանցով՝ «Քույրս խանութից գեղեցիկ **զգեստներ** գնեց» - ‘čəməñ hoə tokenoš māhbuba **olatun** hərie’, «Աստված պատժում է վատ **մարդկանց**» - ‘xədo bevaja **odamun** mojäzäte kana’:

Հայերենում անձնական դերանուններով արտահայտված ուղիղ խնդրի դեպքում թալիշերենի Անբարանի բարբառի արտահայտչամիջոցները կրկին տարբերվում են՝ կախված ժամանակաձևից. եթե նախադասության ենթական եզակի թվի առաջին կամ երրորդ դեմքի անձնական դերանուն է, իսկ ստորոգյալը դրված է անցյալ կատարյալ, վաղակատար ներկա կամ վաղակատար անցյալ ժամանակաձևերով, Անբարանի բարբառում կիրառվում են դրանց ուղիղ ձևերը, օրինակ՝ «Տղաները **նրան** տեսան» - ‘zuan **avəšun** vinde’, «Ահմադը **ինձ** խփել էր» - ‘Ahmadə **āz** žəšbə’: Ցանկացած այլ ժամանակաձևով նախադասություն-

ների դեպքում հայերենի հայցական հոլովի իմաստն արտահայտվում է այս դերանունների թեք ձևերով՝ «Դուք **ինձ** չե՞ք տեսնում» - 'šəma **mānə** vinanin?', «Բժիշկը **նրան** կրուժի» - 'duktur **avə** muālija bakā':

Անկախ հայերեն նախադասության ստորոգյալի ժամանակաձևից՝ անձնական դերանունների մյուս բոլոր դեմքերով և թվերով արտահայտված ուղիղ խնդրին Անբարանի բարբառում համապատասխանում է դրանց միակ՝ ուղիղ ձևը՝ «Նա **քեզ** ամեն օր տեսնում է այդ աղջկա հետ» - 'av **tə** hār ruž da a kina vinay', «Դուք մի մեծ քարով **մեզ** խփում էիք» - 'šəma ila yula səyanda **ama** žanabin', «Այն խելագարն է **նրանց** սպանել» - 'a šitə **avunəš** kəšta':

• *Տեղի պարագա*: Հայերենի՝ հայցական հոլովով դրված տեղի պարագան թալիշերենի Անբարանի բարբառում համարժեք դրսևորումներ է ստանում ba նախադրության միջոցով, օրինակ՝ «Բոլոր աշակերտները ուսուցչի հետ գնացին **անտառ**» - 'hama šogerdun mualemanda **ba jangal** šen', «Երեկ մենք **տուն** վերադարձանք» - 'zina **ba ka** ogārdemun':

• *Ժամանակի պարագա*: Թալիշերենի Անբարանի բարբառում հայերենի հայցական հոլովով դրված ժամանակի պարագան արտահայտվում է anda հետադրությամբ՝ «**Գիշերը** նա շատ ուշ վերադարձավ Ալիի տանից» - 'šavanda av xayli di Ali kao ogārda', «**Անցյալ ամիս** նա Ռաշթից Արդեբիլ եկավ» - 'nākona **mānganda** av Rašto ba Ārdavil uma':

• *Չափ ու քանակի պարագա*: Չափ ու քանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման կամ եղելության չափ ու քանակ: Հայերենի՝ հայցական հոլովով արտահայտված չափ ու քանակի պարագան, որը հիմնականում ունի բաղադրյալ կազմություն (թվական+գոյական), Անբարանի բարբառում դրսևորվում է կա՛մ բառի ուղիղ հոլովով, կա՛մ ba նախադրության միջոցով՝ «Տոմսն արժե **տասը թուման**» - 'belit **ba dā tumāne**', «Աղը կշռում է **մեկ կիլոգրամ**» - 'nemek **i kilo** omina':

5. Հայերենի բացառական հոլովին համարժեք դրսևորումները թալիշերենի Անբարանի բարբառում

Բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որից սկսվում, ծագում է գործողությունը, այսինքն՝ այն արտահայտում է սկզբնակետի, ելակետի իմաստ, որը կարող է մասնավորվել առարկայի, տեղի, ժամանակի նկատմամբ²⁵: Բացառական հոլովի իմաստն Անբարանի բարբառում հիմնականում արտահայտվում է ku և o հետադրություններով, սակայն կախված այն հանգամանքից, թե հայերենում կոնկրետ նախադասության մեջ բացառական հոլովով դրված բառը շարահյուսական ինչ պաշտոն է զբաղեցնում, խնդրո առարկա բարբառում կարող են կիրառվել նաև այլ հետադրություններ, վերջածանցներ, բառի թեք ձևը կամ սպասարկու այլ բառեր: Այսպես, հայերենում բա-

²⁵ Տե՛ս **Ս. Արքահամյան**, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 55:

ցառական հոլովով դրված բառերը կարող են հանդես գալ շարահյուսական հետևյալ հիմնական պաշտոններով.

• *Անջատման անուղղակի խնդիր*: Անջատման խնդիրը դրվում է բացառական հոլովով և, փաստորեն, ամբողջովին հակադրվում է հանգման անուղղակի խնդրին, ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որից անջատվում է, հեռանում է մի բան: Թալիշերենի Անբարանի բարբառում հանգման անուղղակի խնդիրն արտահայտելու համար կիրառվում է երկու հետադրություն՝ *ku*²⁶ և *o*²⁷, որոնցից առաջինը հիմնականում կիրառվում է շնչավոր, իսկ մյուսը՝ անշունչ գոյականների հետ, օրինակ՝ «Նա **փոստատարից** վերցրեց նամակը և տուն մտավ» - ‘avə nāmaš **postčiku** este bə še ba ka’, «Գողը **տղամարդուց** խլեց ողջ գումարը» - ‘dəzdə hama pulunəš **merdəku** bekərnī’, «Մի խնձոր **ծառից** ընկավ» - ‘ila sef **do** agəni’:

• *Վերաբերության անուղղակի խնդիր*: Վերաբերության խնդիրը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որին վերաբերում է նախադասության գործողությունը: Վերաբերության խնդիր սովորաբար ստանում են ասացական ու մտածական իմաստով բառերը, ինչպես՝ ասել, խոսել, պատմել, հայտարարել, մտածել, գրել և այլն²⁸: Հայերենում բացառական հոլովով դրված վերաբերության անուղղակի խնդիրը Անբարանի բարբառում արտահայտվում է կա՛մ *ku* հետադրության միջոցով, կա՛մ *baranda*, *gorao* բառերով, օրինակ՝ «Հայրս մայրիկիս հետ իր **ընկերներից** է խոսում» - ‘čəməñ dada čəməñ nananda əštān **dustunku** gape žana’, «Մորաքույրս եղբորս հետ այդ **գրքից** է գրուցում» - ‘čəməñ xāla čəməñ bəvanda ča **kitobə gorao** gap žanay’, «Այս նամակում Ալին **քեզնից** չի գրել» - ‘əmə nāmandā Ali əštə **baranda** nəvəštəšni’:

• *Ներգործող անուղղակի խնդիր*: Ներգործող անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որի կատարած գործողությունն անցնում է ենթակային: Հայերենում գերազանցապես բացառական հոլովով դրվող այս խնդիրը թալիշերենում արտահայտվում է *ku* հետադրությամբ կամ *taraf*՝ *կողմ* բառի և *ku*, *o* հետադրությունների օգնությամբ, օրինակ՝ «Տան տանիքը **ձյունից** քանդվեց» - ‘ka bun **vārəku** rəži’, «Ուժեղ **անձրևից** ամբողջովին թրջվեցի» - ‘ča yāmana **kulukəku** kollan tāro bem, «Սպանվեց **թշնամու կողմից**» - ‘dəšmunə **tarafə** kəštā bə’:

• *Համեմատության անուղղակի խնդիր*: Համեմատության անուղղա-

²⁶ *Ku* հետադրությունը անվանական ծագում ունի, նշանակում է «տեղ» (տե՛ս **Б. Миллер**, նշվ. աշխ., էջ 78):

²⁷ Օ հետադրությունը, ըստ Միլլերի և Ստիլոյի, հանգում է հին իրանական -a հիմքով բառերի բացառական հոլովի գուցին՝ -at (տե՛ս **Б. Миллер**, նշվ. աշխ., էջ 75; **D. Stilo**, Circumpositions as an areal response: The case study of the Iranian zone // *Turkic-Iranian Contact Areas: Historical and Linguistic Aspects*, Wiesbaden, 2006, էջ 325), իսկ Պիրեյկոն այն բխեցնում է իրանական *radi (հմմտ. հին պ. rādiy) ձևից (տե՛ս **Л. Пирейко**, Тальшский язык. Диалекты Тати Ирана // *Основы иранского языкознания. Новоиранские языки: северо-западная группа I*, М., 1991, էջ 168):

²⁸ Տե՛ս **Մ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 299:

կի խնդիրը, որը հայերենում արտահայտվում է բացառական հոլովով, թալիշերենի Անբարանի բարբառում իր համարժեք դրսևորումը ստանում է *sa* հետադրության միջոցով: Բնականաբար, նման նախադասություններում ուղեկցող պարտադիր պայմաններից է ածականի առկայությունը՝ «Մեր քաղաքը նրանց **քաղաքից** մեծ է» - ‘*čama šahr čavun šahrəsa yule*’, «Սուրճը **թելից** ավելի դառն է» - ‘*yahva čāyəsa təl-e*’, «Այս **գրքից** ավելի հետաքրքիրը ունե՞ք» - ‘*šəmaro əm kitubəsa jālebtar heste?*’:

• *Մասնական ուղիղ խնդիր*: Բուն ուղիղ խնդրից բացի՝ տարբերում են նաև մասնական ուղիղ խնդիր, որը դրվում է բացառական հոլովով և ցույց է տալիս, որ գործողությունն իր վրա է կրում մասնակիորեն, իր մի մասով²⁹: Թալիշերենի Անբարանի բարբառում այս իմաստի արտահայտման համար կիրառվում է մեծ մասամբ օ հետադրությունը, որը կարող է ուղեկցվել չձ նախադրությամբ՝ «Ես էլ խմեցի այդ **ջրից**» - ‘*mānan čə uvo hārdəme*’:

• *Տեղի պարագա*: Հայերենում բացառական հոլովով արտահայտվող տեղի պարագան արտահայտելու համար ևս Անբարանի բարբառում գործածվում է մեծ մասամբ օ հետադրությունը՝ «Նա երեկ **Անբարանից** Թեհրան մեկնեց» - ‘*av zina Anbāno ba Tehrun šə*’, «Շտապ **տնից** դուրս եկավ» - ‘*ajalanda kao beše*’, «Իր հին մեքենայով **գյուղից** քաղաք մեկնեց» - ‘*av əštān kāna māšinanda rostaο ba šahr šə*’:

• *Ժամանակի պարագա*: Գործողության կատարման ժամանակային սկզբնակետը մատնանշող ժամանակի պարագան Անբարանի բարբառում համարժեք դրսևորում է ստանում կրկին *ku* հետադրության միջոցով՝ «**Առավոտից** մինչև հիմա աշխատում է» - ‘*subaku dessa əsā kom kana*’, «**Անցյալ տարվանից** այստեղ եմ ապրում» - ‘*ponaku iyo žinam*’:

• *Պատճառի պարագա*: Հայերենում գերազանցապես բացառական հոլովով դրվող գործողության կամ եղելության պատճառը ցույց տվող պարագան Անբարանի բարբառում արտահայտելու համար գործածվում են *ku* հետադրությունը կամ *gorao*՝ *պատճառով* բառը, օրինակ՝ «Այն երեխան **քայլելուց** հոգնել է» - ‘*a bāla ro šeku xastay*’, «Աչքերս **երջանկությունից** փայլեցին» - ‘*čəmən čaşun saādatə gorao vašin*’, «Հարևանս սաստիկ բարկացավ որդու **արաքքից**» - ‘*čəmən hamsuya əštān bāla raftorə gorao yaman asābani bə*’:

• *Որոշիչ*: Բացառական հոլովով դրված որոշիչ իմաստը թալիշերենի Անբարանի բարբառում արտահայտվում է որոշիչ-որոշյալ կապն ապահովող *a* վերջածանցի օգնությամբ, օրինակ՝ «Այդ փողոցում **քարից** մի տուն կա» - ‘*ə xiābunanda ila səyina ka heste*’, «Բացեցինք **փայտից** դուռն ու այգի մտանք» - ‘*čuya bamun okā bə ba buy doxil bimun*’:

• *Ստորոգելի*: Բացառական հոլովով արտահայտված ստորոգելին Անբարանի թալիշական բարբառում կարող է դրսևորվել *ku* հետա-

²⁹ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 294:

դրությամբ՝ «Ո՞ր երկրից ես» - 'kum **kišvarəkuš?**', կամ բառի ուղիղ ձևով³⁰
«Այդ ապարանջանը ոսկուց է» - 'a yolbāyi yəzəine':

6. Հայերենի գործիական հոլովի իմաստի արտահայտումն Անբարանի բարբառում

Գործիական հոլովով արտահայտվում են զանազան, այդ թվում՝ հատկանշային, սահմանափակման և այլ հարաբերություններ, բայց գործիական հոլովը առավելապես ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որի միջոցով, օգնությամբ կամ միասնությամբ ու ուղեկցությամբ կատարվում է գործողությունը, հետևաբար հենց դա էլ գործիականի ամենաընդհանուր հոլովական իմաստն է³¹: Թալիշերենի Անբարանի բարբառում այս հարաբերությունների իմաստն արտահայտվում է հիմնականում *anda* հետադրությամբ, երբեմն *da*³² նախադրությամբ, սակայն պայմանավորված հայերենի գործիական հոլովի նրբիմաստային առանձնահատկություններով՝ այս հոլովին համարժեք դրսևորումները կարող են արտահայտվել նաև այլ նախադրություններով, հետադրություններով կամ սպասարկու բառերով: Այժմ տեսնենք, թե հայերենում գործիական հոլովով արտահայտված շարահյուսական հիմնական պաշտոններն ինչպիսի համապատասխան արտացոլում ունեն Անբարանի բարբառում:

• *Միջոցի անուղղակի խնդիր*: Միջոցի խնդիրը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որով, որի միջոցով կատարվում, արվում է մի բան: Այս խնդրի իմաստ Անբարանի բարբառով արտահայտվում է մեծ մասամբ *anda* հետադրությամբ, բացի այդ՝ կարող է կիրառվել նաև *da* նախադրությունը, օրինակ՝ «Տղամարդը **քարով** կոտրել էր պատուհանը» - 'merdə **səyandaš** penja ārəšta bə', «Քո **օգնությամբ** նա բացեց դուռը» - 'əštə **kumakanda** avə baš okā', «Ես **բանալիով** բացեցի դուռը» - 'mānə **da kilitə** bam okā': Միջոցի խնդիրը հազվադեպ կարող է արտահայտվել նաև *ba* նախադրությամբ՝ «Նա **ձեռքով** մի քանի ուժեղ հարված հասցրեց» - 'avə čān gəlaš yoyma zarba **ba dāst** ža':

• *Միասնության պարագա*: Ենթակայի՝ գործողությունը մեկ այլ առարկայի կամ անձի հետ միասին, միասնաբար կատարելը մատնանշող միասնության պարագան Անբարանի բարբառում արտահայտվում է բացառապես *anda* հետադրության և *da* նախադրության միջոցով՝ «Մորաքույրը իր **ընտանիքով** Թեհրան գնաց» - 'xāla əštān **xānəvādanda** ba Tehrun šə', «Իր **ազգով** ապրում է այն բարձր սարերի հետևում» - 'da əštān **millatə** ča bārza bāndun peštəku žina':

• *Ներգործող անուղղակի խնդիր*: Հայերենում գործիականով

³⁰ Քանի որ բացառական հոլովով դրված ստորոգելիական վերադիրը հայերենում հաճախ ցույց է տալիս կազմության հարաբերություն, այս դեպքում թալիշերենի Անբարանի բարբառում այն հաճախ արտահայտվում է -in ածականակերտ ածանցով, որով այս լեզվում հիմնականում կազմվում են հարաբերական դերանունները:

³¹ Տե՛ս **Մ. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 69:

³² *Da* նախադրությունը հանգում է իրանական *hada ձևին:

դրված ներգործող անուղղակի խնդիրը Անբարանի բարբառում համարժեք դրսևորում է ստանում *anda* հետադրությամբ՝ «Երկինքը ծածկվեց **աստղերով**» - ‘*usmun āstuvananda adoa bə*’:

• *Տեղի պարագա*: Գործիական հոլովով արտահայտված տեղի պարագային Անբարանի բարբառում համապատասխանում են *anda* հետադրությամբ և *da* նախադրությամբ կիրառված բառերը, օրինակ՝ «Այս **ճանապարհով** ենք եկել» - ‘*da əm ru uməmun*’, «**Կամրջով** անցավ և դեպի այն բարձր սարը գնաց» - ‘*pārdanda davārde bə ba a bārza bāndə šə*’:

• *Ժամանակի պարագա*: Ժամանակի պարագան, որը հայերենում դրվում է գործիական հոլովով, Անբարանի բարբառում համարժեք դրսևորում կարող է ստանալ բառի ուղիղ ձևով կամ *anda* հետադրության օգնությամբ, երբեմն նաև *ba* նախադրությամբ՝ «Երեկ **գիշերով** փախանք քաղաքից» - ‘*zina šav šahrəku təlimun*’, «**Ձմեռով** որս անելը դժվար է» - ‘*zemāstunanda šikār karde čatine*’, «**Ցերեկով** մեր տուն եկավ» - ‘*ba ruž ba čama ka ume*’:

• *Ձևի պարագա*: Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը և կարող է դրվել գործիական հոլովով: Թալիշերենի Անբարանի բարբառում *ba* նախադրության և տարբեր վերացական գոյականների համադրությամբ կազմվում են ձևի մակբայներ, որոնց միջոցով էլ այս դեպքում արտահայտվում է հայերենի գործիականով դրված ձևի պարագան, օրինակ՝ «**Հեշտությամբ** համաձայնեցինք» - ‘*ba ruhati ruzi bimun*’, «Ծաղրածուն **ուրախությամբ** է թագավորի մոտ եկել» - ‘*masxara ba šošo podšoku uma*’: Ձևի պարագայի շարահյուսական պաշտոնը ձևաբանական ձևավորում է ստանում նաև *anda* հետադրության օգնությամբ՝ «Նա ամեն անգամ **ուրախությամբ** նայում է այդ ֆիլմը» - ‘*av hār dafa šošoanda ba filmə diya kana*’:

• *Չափ ու քանակի պարագա*: Գործիական հոլովով արտահայտվող չափ ու քանակի պարագան հայերենում սովորաբար դրսևորվում է կա մ հոգնակի թվով, կա մ թվական+գոյականի գործիական կադապարով: Թալիշերենի Անբարանի բարբառում նման կազմություն ունեցող չափ ու քանակի պարագան կարող է արտահայտվել տարբեր եղանակներով՝ բառի ուղիղ ձևով, բառի ուղիղ ձևով և հոգնակիակերտ ածանցով կամ *ro* և *anda* հետադրություններով, օրինակ՝ «**Օրերով** տանից դուրս չէր գալիս» - ‘*rujun kao bešinanəbə*’, «Նախագահն ընտրվում է **հինգ տարով**» - ‘*rais-jomhur penj surəro entexāb bina*’, «Մեկ ամսում **հինգ կիլոգրամով** գիրացել էր» - ‘*i mānganda penj kilo sərāf babə*’:

• *Պատճառի պարագա*: Հայերենում պատճառի պարագան կարող է արտահայտվել գործիական հոլովով, բայց նման կառուցվածքները այնքան էլ գործածական չեն. դրա փոխարեն շատ ավելի հաճախ օգտագործում ենք բառի սեռական հոլովով և *պատճառով* (որն ինքնին գործիական հոլովով է դրված) կապական բառով կազմված կառույցները, ուստի թալիշերենի Անբարանի բարբառում էլ նման նախադասությո-

յունների իմաստն արտահայտվում է gorao³³ սպասարկու բառի միջոցով, որը գործածվում է բառերի թեք հոլովների հետ՝ «Անձրևի պատճառով տանից դուրս չեկանք» - ‘**kulukə gorao** kao benəsimun’, «Հիվանդության պատճառով Ալին տանը մնաց» - ‘**mariz be gorao** Ali kanda māndi’:

• *Հիմունքի պարագա*: Հիմունքի պարագան ցույց է տալիս գործողության հիմունքը, այսինքն՝ այն օրերը, հիմքը, կարգ ու կանոնը, սահմանն ու սահմանումը, ըստ որոնց էլ կատարվում է գործողությունը³⁴: Գործիական հոլովով դրված հիմունքի պարագան Անբարանի բարբառում արտահայտվում է anda հետադրությամբ՝ «Ուսուցչի թույլտվությամբ աշակերտները տուն գնացին» - ‘mualemə **ijāzanda** šogerdun ba ka šin’, «Գողը պատժվեց օրենքով» - ‘dəzd **yānunanda** mojāzat bə’:

• *Որոշիչ*: Գործիական հոլովով դրված որոշիչը Անբարանի բարբառում կրկին արտահայտվում է ածականն ու գոյականը կապող, այսինքն՝ որոշիչ-որոշյալ կապն ապահովող a վերջավորության միջոցով կամ anda հետադրությամբ՝ «Սոխով ճաշը կերա» - ‘**piyoza** āšəm hārde’, «Կարմիր զգեստով կինը ասաց» - ‘**səa olatanda** jeni votəše’:

• *Ստորոգելի*: Գործիական հոլովով դրված ստորոգելիական վերադիրը Անբարանի բարբառում իր համարժեք դրսևորումն է ստանում anda և da հետադրություններով՝ «Այս փլավը զազարով է» - ‘əm pəlo **bimašanday**’, «Թեյը շաքարով է» - ‘čāy **da yande**’:

7. Հայերենի ներգոյական հոլովի իմաստի արտահայտումն Անբարանի բարբառում

Ներգոյական հոլովն արտահայտում է տարածական ու ժամանակային սահմանափակում, տարածական ու ժամանակային սահմաններ, որոնց մեջ կատարվում են գործողությունը, եղելությունը³⁵, այսինքն՝ ներգոյական հոլովը ցույց է տալիս այն տեղը, որի սահմաններում կատարվում է գործողությունը, այն ժամանակը, որի մեջ կամ ընթացքում կատարվում է գործողությունը: Ներգոյականը միակ հոլովաձևն է, որ գործածվում է միայն պարագայական նշանակությամբ, հետևաբար Անբարանի բարբառում էլ դրա արտահայտչամիջոցները սահմանափակ են: Ներգոյական հոլովաձևով դրված բառը նախադասության մեջ կարող է լինել.

• *Տեղի պարագա*: Տեղի պարագայի մատնանշումը, ինչպես նշվեց, ներգոյական հոլովի հիմնական գործառույթն է: Անբարանի բարբառում այն գերազանցապես արտահայտվում է anda հետադրության միջոցով՝ «Մեր քաղաքում շատ գեղեցիկ զբոսայգիներ կան» - ‘əm **šahranda** xayli māhbuba parkun heste’, «Ֆարիդն ու Մոհսենը իրար հետ աշխա-

³³ Gorao բառը կազմված է թյուրքական ծագման gora՝ «համեմատ, համապատասխան» բառից և o հետադրությունից:

³⁴ Տե՛ս Վ. Ավագյան, Շարահյուսություն, օժանդակ ձեռնարկ ուսուցչի համար, Եր., 1983, էջ 57:

³⁵ Տե՛ս Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 57:

տում են **այգում**» - ‘Farid bə Mohsen **buyanda** da yadə ko bin kana’: Տեղի պարագան այս բարբառում հազվադեպ կարող է արտահայտվել *ba* նախդիրի օգնությամբ «Դանակը դրեց **գրպանը**» - ‘avə čäyus̄ no **ba jif**’:

• *Ճամանակի պարագա*: Ներգոյական հոլովով արտահայտված ժամանակի պարագան նույնպես Անբարանի բարբառում համարժեք դրսևորում է ստանում *anda* հետադրության օգնությամբ՝ «Երկու **ժամում** մեքենայով Թեհրան կհասնեն» - ‘Də **saātanda** da māšīnə ba Tehrun barasen’, «Այդ հայտնի բանաստեղծն ապրել է 15-րդ **դարում**» - ‘a marufa šāir punzaminjina **asranda** jia’:

Այսպիսով, թալիշերենի Անբարանի բարբառի ուղիղ և թեք հոլովները կարող են արտահայտել միայն հայերենի ուղղական և սեռական հոլովների իմաստները, ուստի հայերենի մյուս հոլովներն այս բարբառում իրենց համարժեք դրսևորումներն են ստանում *չə*, *ba*, *da* նախադրությունների, *anda*, *ku*, *o*, *sa*, *ro*, *piu* հետադրությունների, որոշիչ-որոշյալ կապն արտահայտող *-a* վերջավորության և մի շարք սպասարկու բառերի օգնությամբ, այդ թվում՝ *gorao*, *baranda*, *tarafə*:

АКОП АВЧЯН – Выражение надежных значений армянского языка в анбаранском диалекте талышского языка. – Талышский, северо-западный иранский язык, традиционно делится на три основные диалектические группы: северный, центральный и южный. На анбаранском диалекте северного талышского языка говорят в провинции Ардебиль Исламской Республики Иран, в городе Анбаран и прилегающих деревнях.

Талышский язык имеет двухпадежную систему, тогда как в армянском языке есть семь падежей, поэтому для выражения значения армянских падежей используется ряд предлогов и послелогов, таких как *չə*, *ba*, *da*, *anda*, *ku*, *o*, *sa*, *ro*, *piu*., соединительная гласная *-a* и несколько служебных слов, в том числе *gorao*, *baranda*, *tarafə*.

Ключевые слова: талышский язык, североталышский язык, армянский язык, анбаранский диалект, падеж, предлоги, послелоги

НАКОВ AVCHYAN – Expression of Armenian Case Meanings in the Anbarāni Dialect of the Talysh Language. – Talysh, a northwestern Iranian language, is traditionally divided into three main dialectical clusters: northern, central and southern. The division of Talysh into three clusters is based on lexical, phonological and grammatical factors. Northern Talysh distinguishes itself from Central and Southern Talysh not only geographically but culturally and linguistically as well. Speakers of Northern Talysh are found almost exclusively in the Republic of Azerbaijan but can also be found in the neighboring regions of Iran. Anbarāni, one of the northern Talysh dialects, is spoken in Ardabil province of the Islamic Republic of Iran, in Anbarān city and the adjacent villages.

Talysh has a two-case system, while the Eastern Armenian language has seven cases, thus to express the meanings of Armenian cases, a number of adpositions, such as *չə*, *ba*, *da*, *anda*, *ku*, *o*, *sa*, *ro*, *piu*, the connecting vowel *-a* and several function words, including *gorao*, *baranda*, *tarafə* are used.

Key words: Talysh, Northern Talyshi, Armenian language, Anbarāni dialect, case, prepositions, postpositions

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. Արծրուն Ավագյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկավար
Արцрун Авагян – доктор филологических наук, профессор, декан факультета армянской филологии ЕГУ
Artsrun Avagyan – Sc. D. in Philology, Professor, Dean of the Faculty of Armenian Philology, YSU
Էլ. փոստ՝ a.avagyan@ysu.am
- 2. Արա Առաքելյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր
Արա Արակелян – доктор филологических наук, профессор кафедры зарубежной литературы ЕГУ
Ara Arakelyan – Sc.D in Philology, Professor of the Chair of Foreign Literature, YSU
Էլ. փոստ՝ arakelyan.ara@ysu.am
- 3. Մարգիս Ավետյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
Саргис Аветян – кандидат филологических наук, доцент кафедры общего языкознания ЕГУ
Sargis Avetyan – PhD, Associate Professor of the Chair of General Linguistics, YSU
Էլ. փոստ՝ sargisavetyan@ysu.am
- 4. Նորայր Պողոսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Норайр Погосян – кандидат филологических наук, доцент
Norayr Poghosyan – PhD in Philology, Associate Professor
- 5. Սուսաննա Գրիգորյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ
Сусанна Григорян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка ЕГУ
Susanna Grigoryan – PhD in Philology, Associate Professor of the Chair of Armenian Language History, YSU
Էլ. փոստ՝ susannagrigoryan@ysu.am
- 6. Ալվարդ Խաչատրյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ
Алвард Хачатрян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка ЕГУ
Alvard Khachatryan – PhD in Philology, Associate Professor of the Chair of Armenian Language History, YSU
Էլ. փոստ՝ alvard.khachatryan@ysu.am

7. **Վիկտորյա Մուրադյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ
Виктория Мурадян – кандидат филологических наук, ассистент кафедры истории армянского языка ЕГУ
Viktorya Muradyan – PhD in Philology, Assistant of the Chair of Armenian Language History, YSU
Էլ. փոստ՝ muradyan.viktorya@ysu.am
8. **Լուսինե Ղամոյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող
Лусине Гамоян – кандидат филологических наук, старший научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА
Lusine Ghamoyan – PhD in Philology, Senior Researcher at the Institute of Language after H. Acharyan of NAS RA
9. **Մեր Թումունց** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն
Мгер Кумунц – кандидат филологических наук, доцент, директор Сюникского центра арменоведческих исследований
Mher Kumunts – PhD in Philology, Associate Professor, Director of Syunik Center for Armenian Studies
Էլ. փոստ՝ mherkumunts@gmail.com
10. **Հակոբ Ավչյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ասիստենտ
Акоп Авчян – кандидат филологических наук, ассистент кафедры иранистики ЕГУ
Hakob Avchyan – PhD in Philology, Assistant of the Chair of Iranian Studies of YSU
Էլ. փոստ՝ hakob.avchyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ LITERARY CRITICISM

- Արծրուն Ավագյան* – Հեղինակային ինքնադիմանկարը Հակոբ Մնձուրու երկու պատմվածքներում..... 3
- Ариун Авагян* – Авторский автопортрет в двух рассказах Акопа Мндзури
- Artsrun Avagyan* – Author’s Self-Portrait in Two Stories Written by Hakob Mndzuri
- Արա Առաքելյան* – Հերման Հեսսեի «Հուլունքախաղը» և պոստմոդերնիզմը..... 11
- Ара Аракелян* – Роман «Игра в бисер» Германа Гессе и постмодернизм
- Ara Arakelyan* – The Novel “The Glass Bead Game” by Hermann Hesse and Postmodernism

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ЯЗЫКОЗНАНИЕ LINGUISTICS

- Սարգիս Ավետյան* – Արդի արևելահայերենի *լ(ր)- ապանիհի* և *-ու ապանիհի* իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ..... 22
- Саргис Аветян* – К вопросу о семантико-функциональном взаимоотношении между *л(р)- будущим временем* и *-ու будущим временем* в современном восточноармянском языке
- Sargis Avetyan* – On the Question of the Semantic-Functional Relationship between the *л(р)- Future* and the *-ու Future* in Modern Eastern Armenian
- Նորայր Պողոսյան* – «Անցյալ դերբայով հավելադրություններ» կառույցը գրաբարում..... 36
- Норайр Погосян* – Языковая структура с “прибавлением прошедшее причастие” в грабаре
- Norayr Poghosyan* – Language Structure with “Past Participle + Verb” in Grabar
- Սուսաննա Գրիգորյան* – Փոխառությունները Հովհաննես Թլկուրանցու տաղերում..... 46
- Сусанна Григорян* – Заимствования в стихах Ованеса Тлкуранци
- Susanna Grigoryan* – Loanwords in Hovhannes Tlkurantsi’s Poems
- Ալվարդ Խաչատրյան* – Բայասեռի արտահայտությունը փոխանցում ունեցող միջինհայերենյան բայերում..... 57
- Алвард Хачатрян* – Выражение залога в среднеармянских глаголах с конверсией
- Alvard Khachatryan* – Voice Expression in Middle Armenian Verbs with Conversion

Չիկոսրյա Մուրադյան – Գրարարի անկանոն և պակասավոր բայերի դասակարգման հարցի շուրջ	67
Виктория Мурадян – Вопросы о классификации неправильных и недостаточных глаголов	
Viktorya Muradyan – About the Issue of Classification of Irregular and Defective Verbs	
Լուսինե Ղաևնյան – Փոխաբերական իմաստը « <i>հագուստ</i> » իմաստային դաշտում	79
Лусине Гамоян – Метафорическое значение в семантическом поле «Одежда»	
Lusine Ghamoyan – Metaphorical Meaning in “Clothing” Semantic Field	
Մեր Զումունց – Կրոնի և նախապաշարձունքին վերաբերող մի քանի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների)	89
Мгер Кумунц – Исследование нескольких слов о религии и предрассудках (согласно словарному запасу сюнникско-арцахских диалектов)	
Mher Kumunts – Survey of Several Words about Religion and Prejudice (According to the Syunik-Artsakh dialect dictionary)	
Հակոբ Ավչյան – Հայերենի հոլովական իմաստների արտահայտումը թալիշերենի Անբարանի բարբառում	97
Акоп Авчян – Выражение падежных значений армянского языка в анбаранском диалекте талышского языка	
Hakob Avchyan - Expression of Armenian Case Meanings in the Anbarāni Dialect of the Talysh Language	
Տեղեկություններ հեղինակների մասին	112
Сведения об авторах	
Information about the Authors	

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Novakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Hasmik Yesayan
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 23. 06. 2022:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 6.25 մամուլ: